



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Thierry

Munich Suppl. 1840



1902



1005-10  
3062

1903. № 1751.

Одобрено Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго  
Учебнаго Округа.

Ч. 01086068

ՈՒՍՈՒՄՆ  
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻԿԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Թիվ 30 դար.

ՈՒԹԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



1902

Թ. Ի. Փ. Լ. Ի. Ո.

Տպարան Ա. Վարդանեանցի, Գանեսվակի փող. № 3.

Տիպոգրիա Մ. Վարդանյան, Գանովսկ. պլ. ա. 3.

491.99-8

Ա-45

www.ubu.com

## ԳԼՈՒԽ ԱՐԴՅՈՒՆ

פֶּרְמָנָה סַרְתָּ

ՀԱՅՈՎԱՐԴԻՑ ՊՐԵՄԻՆ

C 9PM-K  
3062

06 FEB 2013

Одобрено Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго  
Учебнаго Округа.

491.99-8

Գ. Ա Ղ Ե Յ Ե Ա Ն Ե

4-44

ՈՒՍՈՒՄՆ

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻՒ

ԵՐԿՐՈՒ ՏԱՐԻ

## ՈՒԹ ԵՐԱՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

.....ଶ୍ରୀ ଶ୍ରୀକୃଷ୍ଣମାତ୍ର.....

1902 APR 23 PM 2:30  
PHOTOGRAPHIC CO. LTD.

Տպարան Մ. Վարդանեանցի, Գանուսկի փող. № 3.

Типографія М. Вартанянца, Гаевск. ул. д. 3.

06 FEB 2013



Дозволено Цензурою Тифлисъ, 24 Августа 1902 года.



S9835-66

## ԱՐԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՃԻԾԵՌՆԱԿԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

Ճիծեռնակը բոյն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում,  
Սմեն մի շիզ կպցնելիս՝  
Սուաջւան բոյնն էր յիշում:  
Մէկ անդամ էր նա բոյն շինել,  
Եւ շատ անդամ կարկատել,  
Բայց այս անդամ վերադարձին՝  
Բոյնն աւերակ էր գտել:  
Այժմ նորից բոյն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում,  
Սմեն մի շիզ կպցնելիս՝  
Սուաջւան բոյնն էր յիշում:  
Նա յիշում էր անցած տարին  
Իր սընուցած ձագերին,  
Որոնց ճամպին յափշտակեց  
Սրինարբու թշնամին:  
Բայց նա կըկին բոյն էր շինում,  
Եւ շինում էր, և երգում,  
Սմեն մի շիզ կպցնելիս՝  
Սուաջւան բոյնն էր յիշում:

ՄԱՂԹԱՆՔ ՄԱՆԿԱԿԱՆ

Արի զու, արի,

Քո գալըդ բարի,

Սիրուն նոր Տարի,

Նոր օրենք բեր մեզ:

Զի՞ն տուր սարերին,

Անձրև արտերին,

Կարկուտը՝ չարին,

Չով արեր մեզ:

Անթուփ ծաղիկից,

Աններկ կարմրուկից,

Բարի ցաւերից

Ազատ պահիր մեզ:

Մայրական զըթով,

Գրկաբաց ձեռքով,

Ուրախ ժպիտով

Առ քո զիրկը մեզ:

—

ԳԻՒՆԱԶ ՑԱՑՔ ԻՆՉՊԵՍ ԷՌ ԹՐՈՑՆՈՒՄ ԻՐ  
ԹՈՐՆԵՐԻՆ

Մէկ անգամ Գիւնազ տատին շբջապատեցին իը  
թռոները և ստիպեցին, որ տատը թռչնիկներ շինէ

Տատն էլ վեր առաւ փոքրիկներից մէկին, դրեց  
ծնկան վրայ, երկու ձեռքից բռնեց և վեր ու վայր  
թափ տալով երգեց.

Ղու—ղու—ղու,

Ա' զու—զու.

Նակ,

Ո.—զու—նակ,

Թը՛ռռռ...

Երեխան թռաւ. գետնի վրայ կանգնեց և ծիծաղե-  
լով ասաց.—Ուր է, տատիկ, ես աղունակ չըդառաց:  
Տատիկը պատասխանեց.

Վնաս չունի, հոգիս, դեռ փոքրիկ ծիտիկ ես, երբ  
որ կըմեծանաս, աղունակ կըդառնաս:

Յետոյ մի ուրիշն ընկաւ տատիկի գիրկը և ասաց.  
— Տատիկ, ջան, տատիկ, ինձ էր մի կաշաղակ շինես...

Տատիկը նրան էլ դրաւ ծընկներին և առաջւան  
պէս երգեց.

Չա—չա—չա,

Կա—չա—չա,

Ղակ,

Կա—չա—ղակ,

Թը՛ռռռ...

— Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի ծիտիկ շինես,  
ասաց ամենից փոքրիկը:

Տատիկը նրան էլ վեր առաւ և վեր ու վայր թռո-  
ցնելով երգեց.

Ծիտ եմ, ծիտ եմ, ծլւըլում եմ,

ճիկ, ճի՛կ, ճի՛կ.

ՄԱՆԹԱՆՔ ՄԱՆԿԱԿԱՆ

Արի զու, արի,  
 Քո գալլդ բարի,  
 Միլուն նոր Տարի,  
 Նոր օրենքը բեր մեզ:  
 Զին տուր սարերին,  
 Անձրև՝ արտերին,  
 Կարկուտը՝ չարին,  
 Զով արևը՝ մեզ:  
 Անթուփ ծաղիկից,  
 Աներկ կարմրուկից,  
 Բարի ցաւերից  
 Ազատ պահիր մեզ:  
 Մայրական զըթով,  
 Գրկաբաց ձեռքով,  
 Ուրախ ժպիտով  
 Առ քո զիրկը մեզ:

ԳԻՒՆԱԶ ՏԱՏԼ ԻՆՉՊԵՍ ԷՐ ԹՈՒՑՆՈՒՄ ԻՐ  
 ԹՈՂԾԵՐԻՆ

ՄԵԿ անգամ Գլւնազ տատին շրջապատեցին իր  
 թռոները և ստիպեցին, որ տատը թռչնիկներ չինէ

Տատն էլ վեր առաւ փոքրիկներից մէկին, դրեց  
 ծնկան վրայ, երկու ձեռքից բռնեց և վեր ու վայր  
 թափ տալով երգեց.

ՂՌԼ—ՂՌԼ—ՂՌԼ,  
 ԱՌ զու—ՂՌԼ.  
 ՆԱԼ, ՆԱԼ,  
 Ա—զու—ՆԱԼ,  
 ԹՌՌՌՈՌ...

Երեխան թռաւ. գետնի վրայ կանգնեց և ծիծաղե-  
 լով ասաց. —Ուր է, տատիկ, ես աղունակ չըդառաց:  
 Տատիկը պատասխանեց.

Վնաս չունի, հոգիս, դեռ փոքրիկ ծիտիկ ես, երբ  
 որ կըմեծանաս, աղունակ կըդառնաս:

Ցետոյ մի ուրիշն ընկաւ տատիկի գիրկը և ասաց.  
 —Տատիկ, ջան, տատիկ, ինձ էլ մի կաշաղակ շինես...

Տատիկը նրան էլ դրաւ ծընկներին և առաջւան  
 պէս երգեց.

ՉԱ—ՉԱ—ՉԱ,  
 ԿԱ—ՉԱ—ՉԱ,  
 ՂԱԼ, ՂԱԼ,  
 ԿԱ—ՉԱ—ՂԱԼ,  
 ԹՌՌՌՈՌ...

—Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի ծիտիկ շինես,  
 ասաց ամենից փոքրիկը:

Տատիկը նրան էլ վեր առաւ և վեր ու վայր թռո-  
 նելով երգեց.

Ծիտ եմ, ծիտ եմ, ծլւըլում եմ,  
 ճիկ, ճիկ, ճիկ.

Ոստոստում եմ, թռչկոտոմք եմ, մատաց  
յարի առ այլ 8իշկ, տիշկ, տիշկ.  
Արի թեհիկ,  
Արի, փետրիկ,  
Որ ես դառնամ  
Փոքրիկ ծիտիկ,  
Պիծիկ, միծիկ,  
Թըռոռո... .

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ

Պառաւը.

ՃՌ-ՃՌ-ՃՌ, իմ վառիկներ,  
Սիրուն ճուտեր, հաւ մարիկներ,  
Ոսկեփետուր աքլարիկներ,  
Եկէք կերէք ձեր հատիկներ.

Մանուկներ.

Արամ, Աշխէն, Վարդան, Խորէն,  
Սանդղնւստ, Ճուշան, Հայկակ, Սուրէն,  
Գնանք, տեսնենք հաւերն ուր են:

Տեսէք, տեսէք, չալ չալ հաւեր  
Ճեռու բաշւել, կուտեն, որդեք.  
Այստեղ փոքրիկ, փամփլիկ թմբլիկ, Խոյնը  
Պատիկ ճուտիկ կուտէ կուտիկ.

Զար փիշիկը մօտ է դալիս,  
Սև ձագին է մտիկ տալիս,  
Թաթը մնկնեց,  
Վզից բոնեց.  
Աքաղաղներ, հաւ մարիկներ,  
Պահպանեցէք ձեր ճուտիկներ:  
Աքաղաղներ.

Հասէք, հասէք, օգնեցէք,  
Զար փիշիկին պատժեցէք:

Հաւեր.

Ժողովւենք, միանանք,

Զար կատուին վրայ տանք:

Բոլորը.

Տիսաք, տեսաք ինչ եղաւ,

Դող կատուն որ մեզ տիսաւ,

Խիստ վախեցաւ ու փախաւ.

Աւրեմ ապրինք միասին,

Որ մօտ չըգայ թշնամին:

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

Եղբայրս ծառի տակին,

Սաղմոսը կոան տակին.

Սաղմոսն անդիր է արել,

Լեզուն ըիւլըիւլ է դառել:

Իմ եղբայրը սարումն է,  
Ջըւին գոտկածալումն է. մաս  
Եղբայր ջան, շըւիդածա  
Քոյլըդ Լոռայ քարումն է:

Սարէն կըզայ ձիաւոր,  
Մեր տունը չարդախաւոր,  
Հրէս եկաւ եղբայրըս,  
Երեք օրւան թագաւոր:

### ՏԱՀԱՐԱԾԻ ՃԱՇՀ

Սի խամ տաւարած, բաւական քաղցած, աղբը.  
մօտ նստած, ուտում էր չոր հաց:  
— Ցամաք մի ուտիլ, ասաց լնկերը:  
— «Բա ինչով ուտեմ, ուրիշ բան չունիմ»:  
— Դանակով, եղբայր, դանակով կտրիր, ջրումը  
թրջիր, էլ ցամաք չի լինիլ:

### ՀՈՎԻԻ ԱՆԿՈՂԻՆԸ

Սարի լանջը մահճակալ,  
Չեչոտ բարը գլխակալ,  
Մի հին կարպետ ուսերին,  
Այս է հովի անկողին:

Երբ անձրև է կաթկաթում, գոյսա ու  
Եւ կարպետը թրիսկթը լսկում,  
Հովիւն անուշ քնի մէջ, փոշմա յո  
մայդ մզմէ այսի ամեր յանցափ և քսա  
այս միաժ սմբած անուշ յանցափ և յայ  
միասն պատիսայ անուշ յանցափ և յայ  
Պւխայ, ուխայ, սիրուն հովիւ, քոնդանուշ...  
որ անը սմբայի յանց անուշ յանց անց պար  
պատիս սմբայի յանց անուշ յանց անց պար  
ԶՐԱԴԱՑՊԱՆԻ ՆՆՁԱՐԱՆԸ նրան ու

Երեք-չորս հատ ջաղացաքար՝ կարգով շարւած  
պտուռում են, իրանց ահեղ գըրգըռոցով ամբողջ շէնքը  
գըրգըռում են, չանչախների շըխշըխկոցից մարդի ա-  
կանչ խանում է. բայց ջաղացպանն ալբաթաթախ  
խոր քնի մէջ խորմքում է. . .

Օգոստոսին էր, թէ յուլիս ամսում, լաւ շեմ յի-  
շում, — մի անմեղ հովիւ, քաղաք չըտեսած, իր ոչ-  
խարակալ երկայն մահակը ուսին դըած՝ մտաւ բա-  
զարը խլըշկոտալով, զարմանալով:

Խրտնած պախրի պէս շատ դէս-դէն լնկաւ, վերջը  
կանդ առաւ մրգավաճառի խանութի առջև և աշքը  
ձգեց լիք թարախներին, հասուն մրգերին:  
Ի՞նչ պտուղ ասես՝ որ նա չըտեսաւ, չըհիացաւ—  
տեսակ-տեսակ տանձ ու խնձոր, դեղձ ու խաղող, թուզ

ու սալոր, նուռ, սերկակիլ, ունաբը ու հուն, կարմիք,  
փայլուն.

Հովիւր նայեց մրգավաճառին ու մնաց ապշած,  
որ այնչափ հասուն մրգերի միջին, ձեռք չէր զիպցնում  
մէկին կամ միւսին։ «Սա կոյր կըլինի», ինքն իրան  
ասեց և փորձել ուզեց։ Մահակը մեկնեց դէպի բախ-  
կալը և քիչ էր մնում աչքն էր կոխում։

— է՛յ, ինչ ես անում, զոռաց բախկալը սաստիկ  
բարկացած։

— Բա, հէնց իմացայ, դու կոյր կըլինիս. եթէ դու  
կոյր չես և լաւ ես տեսնում, բա այդ մրգերից ինչի  
չես ուտում...»

ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Օրը տաքացաւ, ձինը հալեց արեից.  
Քըզքըշալով ջուր է հոսում դռներից.  
Սար ու ձորեր զարդարեցան կանաչով,  
Դաշտը ծածկեց ոչխարների հօտերով:  
Հա—հա—հա, — պարուն է, միտուրո  
Տեսէք ինչպէս սիրուն է:

ՄԱՍՏԻԿ

Սաստիկ շոտ է. ցորեն գարի հասել են,  
Հնձողները խոտը քաղել, զիզել են,  
Բոլոր ծառեր ծածկըւել են տերեսով,  
Գտուղները «ճիթ» են անում ժպտալով.

ՀՕ—ՀՕ—ՀՕ, ամառ է, ո ճայից քաս  
Արել խիստ կըգառէ...»

Եած մեռչի նըխաւ նորուն մուսար և նուցման  
ցոյս և նուշի միջն մուցման ոց մն նորի

III

Ջոգերն անցան. պտուղները քաղեցին,  
Հացով, մրգով ամբարները լցըեցին,  
Երկինքն ամպեց, բարակ անձրկ է մաղում,  
Մերկ դաշտերը և ծառերը ողողում։  
Է՛յ—է՛յ—է՛յ—աշուն է,  
Տեսէք ինչպէս նախուն է։

IV

Օրը կարճ է, արև չըկայ, շատ ցուրտ է.  
Ճերմակ ձիւնը քուլաքուլա կըրբթէ,  
Մարդ անհասուն բուք բորանից վախեցած,  
Տաք-տաք տներ, խոք-խոք բնելն են մտած։  
Օ՛յ—օ՛յ—օ՛յ, ձեռն է,  
Սնտանելի մի բեռն է...»

ԵՐԿՐԱԳՈՐԾ

Ո՛հ, երկրագործ, երկրագործ,  
Քանի սիրուն է բո գործ։  
Արել չըծագած՝ մաճն է քո ձեռքիդ, եօթը զոյգ  
եղ, գոմէշ լծած գութանիդ, ծըռում ես, պատռում դու  
կոշտ ու խոպան, լիոներ ու ձորեր, անդ ու անդաստան։  
Ցանում ես ցորեն, կորեկ ու դարի, հաճար ու վար-

սակ, բըինձ ու բամբակ, ծլում են, ծաղկում ճակտիդ  
քրտինքով, քո վարած գաշտեր, որ լինէր փշով:

Անցնում է գարուն, ոսկեզօծ հասկեր լցում, ծածկում են քո սիրուն արտեր, Քամին փշում է, արտը տատանում, կառեն նոր հայութեան

Համար, զարծոս սոր-հարս է, հօրանց է գնում։  
Համում է ամառ. մանղաղը ձեռքիդ, հնձում ես,  
հնձում, խուրձեր կապոտում. խուրձերը բարդ-բարդ  
սայլով ու ձիով կրում ես, բերում կալումբդ դիզում։  
Հաշան ես անում, կասում ու քամում, մաքուր ցորենը  
տանըդ ամբարում, իսկ չոր դարմանը՝ ճմեռւան պա-  
շար՝ անամուց համար մարաքրդ լցնում։

Եւ երբ փշում է ցրտաշունչ ձմեռ, խրճիթումնըս-  
տած, բոլ խոփն ես սրում, արօր ու գութան սարքում,  
պատրաստում, և գարնայն ուսուց.

Գալուն նորից, երկրագործ, երկրագործ,  
Քանի սիրուն է քո գործ.

ZUSAMMEN

Հոյսը բացւում է. շուտ արտը զնամ,  
Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի.  
Իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ,  
Մինչև օրենքը ամըան արկի:  
Թաղեմ ոկո ճական ամըան արկի:

Թէ Աստուած ուղեց զու կանաչեցիր,  
Թող դարդըս մեռնի գետնի տակ անհետ,  
Դու ինձ մխիթար կը կին տուն դարձիր:

Եւ զերմ՝ աղօթքով Տիրամօը առջև  
Ես մոմ՝ կըպառեմ, ես խունկ կըծխեմ,  
Որ քեզ պարզեէ մի պռատ անձրեւ,  
Որ քեզ միշտ սիրով նայէ խնդրալէմ:  
Բայց թէ այդ չնորհին, մեղքելիս համար,  
Արժանի չըլնիմ, ծով կըդարձնեմ  
Ես տաք քըտինքը ճակտիս արեառ,  
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ շրթողնեմ:

ծլիք, կանաչք, ոսկի սաւանով  
ծածկիր իմ արտը ողջ ալէծածան.

Նոր այն ժամանակ անուշ շրջիմով,  
Ցուր ջարդած սրտիս մի քուն հանդ

Ամպեր են վազում բարձր լեռներից խիստ քամու ձեռից. փախչում, դնում են, կարծես խրտնում են ծարաւ արտերից:

«Կացէք, այ ամպեր. ի՞նչու էք փախչում, անձը չէք թափում, մեր ծարաւ արտեր՝ օրեր համբելով, ձեզ են սպասում:

«Քամի, դու քամի, խղճա արտերին, թող այդ ամպերին, թող կանգնեն թափեն անձրկի շիթեը, զրեն մեր արտեր»:

Քամին հանդարտւեց, մեզմ անձըկ թափեց, արտերը ջրեց։ Արտը բարձրացաւ, ցողուն արձակեց ու հասկեր բռնեց։ Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց, խնդաց ու ասաց.

«Փառք Քեզ, ով Աստուած,  
Որ տուիր մեզ հաց, և նու ու  
2ըթողիր քաղցած»: բգ զի  
Եղիսաբէթ ՀԱՆԱՔԸ  
ԵՂԻՍԱԲԻ (Առասպել)

Մէկ օր եղիան վերկեց կանչեց և մարդկանց  
յայտնեց, թէ այսուհետեւ ձեզ շեմ օգնելու, անձրեւ շեմ  
տալու: Այս ասաց թէ չէ երկինքը կապւեց, էլ ոչ մի  
կաթիլ անձրեւ չըկաթեց:

Եւ այնուհետեւ աղբիւրը լռեց, առուն ցամաքեց,  
վարդը թառամեց, անտառը դեղնեց, դաշտը սետցաւ,  
արտը չորացաւ, անտառն և մարդ, թռչուն և գաղան  
անջուր մնալով՝ ուշաթափ եղան:

Եղիան որ տեսաւ, թէ ինչ բան եղաւ, ծիծաղը  
եկաւ և ծիծաղեցաւ. բայց ինչպէս ծիծաղ... այնպէս  
որոտաց, որ երկինք զետինք թնդաց, զզըրդաց, ու ամ-  
պերն իրաք այնպէս զարկւեցին, որ փայլակ, կայծակ,  
շանթեր հանեցին: Երկինքը մթնեց, յորդ անձրեւ թա-  
փեց, նըւաղածներին թթչեց, ողողեց և ուշքի բերեց:

Եւ այնուհետեւ սար ու ձոր զարթնեց. աղբիւրը  
թլրաց, շուշանը ծաղկեց, առուն քըշըշաց, արտը  
կանչեց. արտուտը երգեց, աքլառը կանչեց, հաւը ձու  
ածեց, մաքին գառ ծնեց. գառը մորթեցինք Եղիայի  
համար, որ մեզ խնայի, էլ հանաք շանի:

ՀՆՁԻՌՆԵՐ

(Խ. Ա. Դ.)

Ահա եկաւ խոտ հարողը  
Ուսին գրած գերանդին,  
Բոլոր խոտը սա հարել է,  
Բան չի թողել մեր հանդին:

—Այ խոտ հարող, ասա տեսնենք,  
Դու ինչպէս ես խոտ հարում:  
«—Այսպէս ահա, լաւ նայեցէք,  
Ես այսպէս եմ խոտ հարում—

ՀԷՊ, ՀՕՊ,  
ՀԷՊ, ՀՕՊ,

—ԱՇԽ, ինչ լաւ է, եկէք սովենք,  
Մենք էլ այսպէս խոտ հարենք—

ՀԷՊ, ՀՕՊ,  
ՀԷՊ, ՀՕՊ.,

Ահա եկաւ արտ հնձողը բղոյից  
Զեռքին փայտէ մատնոցներ,  
Պատրաստել է սուր մանգաղը,  
Պէտք է հնձէ մեր արտեր:

—Հնձող եղբայր, ասա տեսնենք,  
Դու ինչպէս ես հունձ անում,  
«Այսպէս ահա, լաւ նայեցէք,  
Ես այսպէս եմ հունձ անում—

Հէպ, հօ՛պ, հէպ,  
Հէպ, հօ՛պ, հէպ:  
— Ա՛խ, ինչ հեշտ է. եկէք սովորենք,  
Մենք էլ այսպէս հունձ անենք —  
Հէպ, հօ՛պ, հէպ,  
Հէպ, հօ՛պ, հէպ...

Ո Ս Կ Ի Զ Կ Ա Խ

1

Մի ծերուկ ձկնորս և իր պառաւ կին  
Քընակում էին Մեծ ծովի ափին,  
Ծերը զնում էր ձուկ բոնում ծովից,  
Պառաւն էլ տանը թել մանում բրթից.  
Այսպէս միասին՝ մի հին գետնատան,  
Երեսուն երեք տարի ապրեցան:  
Ահա մէկ օր էլ ծերը զնաց ծով,  
Որ ձուկը որսայ իր մաշւած ցանցով.  
Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց,  
Առաջին անգամ միայն տիզմ հանեց:  
Երկրորդ անգամը ցանցը ձգեց ծով,  
Ցանցը դուրս եկաւ ծովային խոտով:  
Իսկ երրորդ անգամ որ ցանցը ձգեց,  
Ո՞վ կարէ ասել, թէ ինչ դուրս հանեց.  
Նա բերաւ իր հետ մի ոսկի ձկնիկ՝  
Չկանց արքայի գուստը գեղեցիկ.  
Ծերի ցանցն ընկաւ, իբրև խեղճ գերի,  
Ոսկի աղջիկը ձուկ-թափաւորի,

59835-66

Խեղճ ոսկի ձկնիկ, ինչպէս է խնդրում,  
Վարդկային լեզով ծերին ազաշում.  
«Թո՞ղ ինձ, թո՞ղ, ծերո՞ւկ, թո՞ղ ինձ անվտանգ,  
Քեզ կը վճարեմ թանգագին փրկանք.  
Ինչ սիրտը ուզի, ինչ որ կամենաս,  
Ուղիղն եմ ասում, ինձնից կստանաս»:  
Վախեցաւ ծերը, մնաց զարմացած:

**ԲԱԼՈՒՏ:**  
Նա այնքան տարի ձկնորս էր եղած,  
Քայց ձկան մասին երբէք չէր լսել,  
Թէ նա մարդու պէս լաբող է խօսել,  
«Գնա, Տէք ընդ քեզ, ասաց ծերունին,  
Ինձ չէ հարկաւոր փրկանք թանգագին.  
Գնա քեզ համար դու ծիրանի ծով,  
Ու այնտեղ ապրիր ապատ, ապահով»:

Ես դէպքից յետոյ ծերը տուն դարձաւ,  
Պատմեց պառաւն՝ թէ ինչ բան տեսաւ.  
«Այսօր ես ծովից, գիտես ինչ, ա կնիկ,  
Թռնեցի յանկարծ մի ոսկի ձկնիկ,  
Ոսկի եմ ասում և ոչ քու գիտցած,  
Այսպիսի հըաշք ոչով չի տեսած:  
Նա խօսել գիտէք ուղիղ մեր լիզով,  
Ազաշանք արաւ, որ յետ ձգեմ ծով.  
«Թո՞ղ, ասաց խնդրում, թո՞ղ ինձ անվտանգ,  
Քեզ կը վճարեմ թանգագին փրկանք».  
Քայց ես ոչ մի բան չըպահանջեցի,  
Ոչինչ չեմ ուզում, զնա, ասացի,

2



Գնա՞լքեղ համար դու ծիրանի ծով,  
Ու այնտեղ ապրիլ ազատ, ապահով»...  
Պառաւը երբ ու այս բանը լսեց,  
Խեղճ ալեսորին շատ յանդիմանեց,  
Թէ ինչու ձկնից վրկանք չի ուզել,  
Ու այնպէս ձրի յետ ծովն է ձգել:  
«Այ յիմար անմիտ, հայնոյեց ծերին,  
Պոնէ կասէիր դու ոսկի ձըկին՝  
Մի նոր տաշտակ տուր տանեմ իմ կնկան,  
Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...  
Դարձաւ ծերունին ծովի ափ դնաց.  
(Յեսաւ նա ծովը մեղմիկ ծածանւած).  
Հսկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Զուկը լողալով մօտեցաւ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.  
Ծերը գլուխ տըւաւ ու պատասխանեց.  
«Ողորմած լինիս, թագուհի-Ձկնիկ,  
Ինձ նախատում է իմ պառաւ կնիկ,  
Հանդիստ չի թողում խեղճ ալկորիս,  
Վըրաս մըթմըրթում, ուշունց է տալիս.  
Մի նոր տաշտակ է հարկաւոր իրան,  
Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...  
Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց,  
«Դնա, Տէր ընդ քնզ, մի տխրիլ, ասաց.  
Թուղ քու պառաւը շատ շընեղանայ,  
Այսօր նա մի նոր տաշտակ կունենայ»...

Յետ դարձաւ ծերը դէպի իր տնակ,  
Տեսաւ կնկայ մօտ մի սիրուն տաշտակ.  
Բայց կինը դոհ չէր. նա այս անդամ էլ  
Ըսկսեց ծերին սաստիկ նախտել.  
«Գնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,  
Ինչո՞ւ մի ուրիշ բան չըխնդրեցիր,  
Յետ զնա՞ շուտով, անմիտ անասուն,  
Դլուխ տուր նըրան և ուզիր մէկ տուն»...  
ծերունին դարձաւ ծովի ափ գնաց,  
(Այս անդամ տեսաւ ծովը պղտորւած),  
Ըսկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Չուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.  
ծերը դլուխ տըւաւ ու պատասխանեց.  
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,  
Ինձ շատ նախտեց իմ պառաւ կնիկ.  
Խեղճ ալեսըիս հանգիստ չի թողում,  
Հիմա էլ կատղել՝ մէկ տուն է ուզում»...  
Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց  
«Գնա՞ Տէր ընդ քեզ, մի տխրիլ, տաց.  
Թող լինի այնպէս՝ ինչպէս կամենաք,  
Դուք ձեր ցանկացած տունն էլ կունկնաք».  
ծերը ետ դարձաւ կրկին դէպի տուն՝  
էլ նա չըգտաւ իր հին գետնատուն.  
Մի նոր տուն տեսաւ լուսամուտներով.  
Կըտուրից հանած ծըխահաններով,  
Պատ ու վագարան մօքուր սըլաղած,

Կըով ու կաւճով սպիտակացրած.  
Վարսետի տաշած, կաղնի տախտակից,  
Մեծ դուռն էր կախած լայն բակի կողմից:  
Պատրհանի տակ կինն ուռած նստել՝  
իր չարութիւնից ուզում է արաքել.  
Ի՞նչ անէծք ասես աշխարհիս տակին՝  
Բոլորն էլ թափեց խեղճ մարդի գլխին.  
Վերջը երբ փոքր ինչ բարկութիւնն իջաւ,  
Մուռթը կախած՝ ծերունուն դարձաւ.  
«Անշնորհը ծերուկ, տնակ ուզեցիր  
Երկի քու մէջ մեծ բանկարծեցիր.  
Յետ դարձիր, անխելք, յետ դարձիր դիան,  
Ոսկի ձկնիկին իմ կողմից ասա,  
Որ էլ չեմ ուզում մնալ գեղջուկ կին, ախան  
Ուզում եմ լինել գերազնիւ տիկին...»

4.

Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց,  
(Սյա անգամ տեսաւ ծովը վրդովւած),  
Հսկսեց կանչել ոսկի ձրկնիկին,  
Չուկը լողալով մօտեցաւ ծերին,  
Ի՞նչ ես կամենում, ծերուկ, հարցրեց  
ծերը գլուխ տըւաւ ու պատասխանեց,  
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,  
Հանդիսաւ չի տալիս ինձ իմ շաը կինիկ,  
Ել չի կամենում մնալ գեղջուկ կին,  
Ուզում է լինել գերազնիւ տիկին,  
Չը դիտեմ՝ գլուխն ի՞նչ քամի մտաւ,  
Որ գեղջկութիւնից յանկարծ ձանձրացաւ...»

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց քայլ զի  
«Դնա, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ապաց, աղցօ  
Թող քո պառաւը հէնց այսօրւանից յա մնո՞  
Ազատ համարւի իր գեղջկութիւնից...»

Յետ դարձաւ ծերը, և ի՞նչ է տեսնում.  
(Կարծեց ցնորը է աշքին երեսում).

Միտուն հոյակապ վերնասրահում  
Պառաւն է կանգնած ինչպէս նոր խանում, բ  
Հաղին սամուրէ բաճկոնակ սիրունով առաջ,  
Գլխին դիտակէ շարդաթ գոյնզգոյն, ի՞նչ ան  
Վիզը զարդարած մարգարիտներով, և զի  
Մատերին մատնիք անգին քարերով, և առաջ  
Մաշիկներն ինչպէս կաս-կարմիր որդան,  
Միւս հազուտներն էլ մետաքս պատւական:  
Ծառաներ ունի մի քանի տասնեակ,  
Բոլորն էլ իրան հըլու հպատակ: այ զօնից  
Մարդին որ տեսաւ՝ պառաւը կատղեց  
Խեղճ ծառաներին ծեծել ըսկսեց, մաղցուց  
(Երկի ուզեց ցոյց տալ իը մարդին, ի՞նչ ցցոյց  
Որ հիմա ինքն է գերազնիւ տիկին). առաջ զի  
Հայհոյանք թափեց ամենքի վըրաց, իսոյ զից  
Տեղի անտեղի քօթկեց անխնաց,  
Մէկի մազերից բոնեց քաշքաշեց,  
Միւսին էլ մի լաւ ապատակներ զարկեց:

Ծերը մօտեցաւ գող դող քայլերով՝ ամ  
Ասաց պառաւին՝ իսոր գլուխ տալով վախացաւ զի  
Քիարով գերազնիւ խանում-խաթունիս,  
Հիմա խօմ զո՞ն ես, հանդիսու կը լինիս», առաջ  
Պառաւը տիկինը այնպէս բղաւեց,

Որ խեղճ ծերունու լեղին պատառեց,  
Նըրան հրամայեց, որ իսկոյն զընայ  
Դոմն աւլէ, քերէ ու այնտեղ մնայ:

5.

Մէկ-երկու շաբաթ հազիւ անցկացաւ,  
Պառաւ խանումը նորից կատղեցաւ  
«Ճուտ կանես կերթաս, ասում է մարդին,  
Ու իմ կողմանէ կասես ձկնիկին,  
Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,  
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...

Այս խօսքի վըրայ ծերունին սոսկաց,  
Եւ աղաչելով պառաւին ասաց.  
«Գժւել ես, ա կնիկ, ես չեմ հասկանում,  
Արդեօք դու զիտեն՝ ինչ ես ցանկանում,  
Մէկ նայիր վըրադ, շէնք ու շնորհքիդ,  
Լըբլըբան լեզլիդ, ծուսումուռ բայլքիդ,  
Ախըր ինչ ունիս թագուհու վայել,  
Որ խելքիդ այդպէս քամի է փշել,  
Երի լսիր ինձ, մի անիլ այդպէս,  
Ամբողջ աշխարհքին կը ծիծաղեցնես»...

Էլ չըհամբերեց մեր պառաւ տատը,  
Որ վերջացնէր մարդն իր խըրատը.  
Նա այնպէս գոռաց, այնպէս որոտաց,  
Որ ամբողջ տունը հիմովին թնդաց.  
«Ի՞նչպէս թէ այդպէս, յանդուզն, ըստահակ»,  
Գոչեց ու զարկեց մի ուժգին ապտակ,  
«Համարձակմաւ ես, զոեհիկ անդէտ,  
Վիճել ինձ նման ազնիւ տիկնոց հետ.

Քեզ հրամայում են պատւառը խօսքով,  
Որ իսկոյն զնաս քո յօժար կամքով.  
Եթէ ոչ՝ ահա ժողովւած կշտիդ,  
Սըրանը կը տանեն՝ խփելով զգիդ»:  
ծերունին դարձեալ ծովի ափ զնաց.

(Իյս անգամ տեսաւ ծովը սկացած),  
Քսկսեց կանչել ոսկի ձկնիկին.  
Չուկը լողալով մօտեցաւ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցըրեց.  
Ծերը զրուխ տըւաւ ու պատասխանեց.  
«Ոզորմած լինիս, Թագուհի Ձկնիկ,  
Էլի է կուռում իմ պառաւ կնիկ.  
Ներիր ինձ, խնդրեմ, ես ամաշում եմ,  
Որ չար պառաւիս նոր ուզածն ասեմ.  
Բայց որ ջուրն ընկնիմ, հանգիստ չի թողում.  
Կրակն է զցել, այրում խորովում.  
Դնա, ասում է, — ախ, նզովեալ կին —  
Ճնւաւ գնա ասա ոսկի ձկնիկին,  
Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,  
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...

Ոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.  
«Դնա, Տէր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց,  
Թող քո պառաւի ուզածը լինի,  
Թող գնա դառնայ ազատ թագուհի»:

6.

Պ'վ կարէ պատմել, թէ ծերն ինչ տեսաւ,  
Երբ ձկան մօտից տուն վերադարձաւ.

Ել ինչ տուն, ինչ բան.. դու աղքայական  
 Ապարանք ասա, կամ հսկայական բնոխու յի  
 Մեծ մեծ պալատներ շարիշար կանգնած  
 Բարձր բուրգեսով չորս կողմը պատաժ,  
 Ճքեղ դահլիճներ, անթիւ սենեակներ,  
 Մարդ կըշշկլէր, եթէ մէջն ընկնէր:  
 Ծերը բարձրացու մարմար սանդղուղքով.  
 Մի զահլիճ մտաւ խիստ պատկառնքով  
 Առջել բացսեց մի նոր տեսարան,  
 Երբ այստեղ դուռ իր պառաւ կնկան,  
 Նա հիմա աղատ թաղուհի դառած  
 Առօք ու փառօք ճաշի է նստած.  
 Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէղեր,  
 Ոտի են կտնզնած ողպէս ծառաներ,  
 Թագուհու համար դինի հն ածում  
 Եւ ահուղողով աջ-ունքին նայում  
 Ճէմքում կտնզնել են ահեղ զինուրներ,  
 Ռւայրին բռնած կացնածն սըեր,  
 Մենակ պառաւն էր սեղանին բազմել,  
 Ո՞վ կը յանդդնէր նրա հետ նստել.  
 Բայց կերակուրներն այնքան շատ էին,  
 Որ հաբիւր հոգի կը կտացնէին  
 Եւ քանի տեսակ անծանօթ բաներ,  
 Ի՞նչ անուշեղէն, ի՞նչ տապականեր...  
 Պառաւն ուտում էր մեծ ախորժակով,  
 Ու զինին դարտկում կը բաժակով,  
 Գերջն էլ մեղրահաց կերաւ բաւական,  
 Որ քաղցրացնէ շրթունք ու բերան,  
 Օհըն այս տեմնուղ մաս շփոթւած

Ընկաւ պառաւի ոտքերն ու ասաց.

«Բարով քեզ, բարով անեղ թագուհի,

Քո մեծութիւնը յաւիտիան լինի»:

Այս խօսքից յիտոյ կամաց շընչեց,

Ու փսփսալով պառաւին հարցրեց,

«Ճիմա որ բախտի վերին ծայրումն ես, արևի

Խօմ բաւական ես, ա կնիկ, ի՞նչ կամես...»

Թագուհի դառած պառաւն այս անգամ

Մարդի երեսին չընայեց անգամ.

Հրաման մումռաց նա քթի տակին,

Որ դուքս վոնդեն մեր անկոչ հիւրին, նի ու

չէնց որ լուեցաւ թագուհու հրաման, սասաւ

Հնագանդ երեալ ամենքն ուղեցան,

Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէղեր,

Ինչպէս որսորդի արնախում չներ,

Խփելով ծերի շնքակոթին՝ նի ցը

Ճքեղ դահլիճից դուքս վոնդեցին.

Ճէմքումը կանդիսած պահապաններնեւ.

Իբանց կացիններն էին պատրաստի,

Վրայ վաղեցին ամենքը մէկնն,

Ու քիչ մնաց որ խեղճին խողիսողեն:

Ինչպէս որ եղաւ, սմի կերպ գուըս պլծաւ,

Գուըսն էլ ամբոխի ծաղրի տակն ընկաւ,

Որ կարծ ես նըտն լինէը տղասում մասապը

Անձքի տակին ցեխոտ փողոցում:

— «Եթէ լաւ արին, ծերուկ դու անդէտ,

Ում հետ ես մեկնում անճոռնի ոտներդ,

Թող այդ քեզ համար լինի լաւ խընաւ,

Որ էլ շըցանիս մանդը կտպահպահուի.

մասամբ քայլութ լիս գորդու նման չմի

7.

Այս դէպքից յետոյ շատ օրեր չահցան,  
Պառաւի այծելն էլի մօտ եկան.  
Ուղարկում է նա իր իշխաններին,  
Որ գտնեն բերեն արտաքսած ծերին,  
Եկաւ ծերունին. Պառաւն սկսեց.  
«Դու պէաք է զնաս ձկան մօտ, ասեց,  
Կերթաս, խոր գլուխ կըտաս դու նըան  
Ու իմ փափազը կը յայտնես իրան.  
Կասես՝ չեմ ուղում մնալ թաղուհի,  
Ուզում եմ լինել ծովի տիրուհի,  
Ուզում եմ սկկեան ծովումը կինալ,  
Ոսկի ձկնիկին ծառայ ունենալ,  
Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի,  
Ու ինչ ուզենամ, իսկոյն կատարիս...  
Պառաւին լսեց ծերը լուռ ու մունջ,  
Առանց յայտնելու որ և է տրտունջ,  
Ծերունին դարձեալ ծովի ափ զնաց,  
(Այս անդամ ծովը խիստ էր փոթորկւած,  
Փրփրած ալիքներ սարեր դառնալով  
Իրար են զարկուում ահեղ գռապով).  
Ողբաձայն կանչեց ոսկի ձկնիկին,  
Չուկը լողալով՝ մօտեցաւ ծերին.  
«Ի՞նչ ես կամենում, ծերնեկ, հարցրեց,  
Ծերը գլուխ տըւաւ ու պատասխանեց,  
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,  
Իսպառ գժւել է իմ պառաւ կնիկ,  
Ի՞նչ անեմ արդեօք այդ նզովիալին,

Մինչեւ երբ տանջւիմ քաւթառի ձեռին.

Էլ չի կամենում թագուհի լինել,

Այլ տես անիծածն ինչ է միտք արել՝

Իշխել է ուզում բոլոր ջրերին

Ու իշխանուհի դառնալ ծովալին.

Ուզում է Ովկեան ծովումը կենալ:

Ոսկի ձկանդ ծառայ ունենալ,

Որ իր հրամանին միշտ պատրաստ կենաս,

Ու ինչ ուզենալ, չուտ կատարում տաս»...

Ոսկի ձկնիկը լուռ ու մունջ լսեց,

Բայց էլ ծերունուն շըպատասխանեց,

Զըի երեսին շըրմփեց պոչով

Ու անցաւ գնաց դէպի խորին ծով...

Ճատ մնաց ծերը և շատ նայեցաւ,

Բայց ոսկի ձկնիկն էլ չիրկեցաւ,

Դարձաւ գլխակոր որ յայտնէ կնկան,

Թէ ինչ փորձանքի մէջ գցեց իրան...

Եւ զնաց տեսաւ... (բայց ինչ տեսնի լաւ,

Որ արդար լինի և ոչ անիրաւ),

Ճին խուղի շէմքում պառաւն է նստած,

Կոտրած տաշտակը առաջնն ընկած...

իմ ձայնով ես սրան դիւր գամ, փոխարէնն անշուշտ  
պարզելուտանամ, և նա վերջ կը տայ իմ ըստքութեան»:

Այսպէս յոյս տըւաւ սոխակն ինքնիրան, և ոգեոր-  
ւեց, երգել սկսեց, և անուշ ձայնով սիրուն երգերով

նա իր պարսնին զմայլցըեց:

Պարսնն էլ հէնց այդ կ'ուզէր և միայն նրան հա-  
ւանեց և լաւ խնամեց, իսկ միւսներին՝ վատ երգող-  
ներին, իսկոյն արձակեց:

Եւ այնուհետև մեր խեղճ սոխակին և

Աւելի ամուգ ու պինդ փակեցին...  
Թ Ծ Ո Հ Ն

Մի ձմռան օր էր փշում էր քամին,

Զինի քուէքը ամեն տեղ ծածկում,

Մարդ և անասուն յրտի երեսից

Փախչում էր մտնում տան մէջը փակում:

Իմ պատուհանին, որ պինդ փակւած էր,

Յանկարծ մօտեցաւ մի փոքրիկ թոշուն.

Նա գողգողում էր, թեերը շարժում

Եւ իր կտուցով խփում ապակուն:

Տեսնելով թոշնի այդ դառն վիճակ,

Ցուզեց իմ սիրտը, գթացի վրան,

2ը թողի երկար տանշել այն ցըտում,

Իսկոյն սեսնեակս առի ես նըրան:

Դաղարեց ձիւնը, հանդարտւեց քամին,

Իմ սիրուն թոշնակը նորից ուժ առաւ,

Ուզգեց թեերը, սաւանեց օգում,

Եւ մի քաղցը երգ երգել ըսկաւ:

## ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Ս Ո Հ Ա Կ Ն Ե Շ

Մի ճարպիկ թոշնորս կարնան օքերում անտառ-  
ների մէջ սոխակ էր որսում. վանդակում դնում: Խեղճ  
սոխակները վանդակում փակւած՝ ճռւղում էին ճար-  
ները կտրած. թէն ի հարկէն նրանք կուղէին, որ ան-  
տառներում ազտա ման զային, բանտում փակւած-  
ներն ինչ սիրտ կունենան, որ դեռ երգեն էլ կամ  
զըւարճանան:

Բայց էլ ինչ անէին, որ զոնէ չ'երգէին և իրանց  
ու օրը միասին չ'ողբալին: Նրանցից միայն մէկը չէր  
երգում, նա իր սիրելու կարօտն էր քաշում: Արտաս-  
ւաթոր աչքերով նա դաշտերին էր նայում, զիշեր ցե-  
րեկ տանջւելով՝ ընկերուհուն էր յիշում: Իր ընկերու-  
դակում փակւած:

Անքախտ սոխակը վերջը մտածեց. «Այսպէս չի լի-  
նիլ», ինքն իրան ասեց. «անխելք մարդիկն են շարու-  
նակ տխրում, իսկ խելօքները հնար են փնտըում, որ  
դժբախտութեան մի կերպով վերջ տան: Կարծեմ ես  
ինքս էլ, եթէ աշխատեմ, իմ թշւառութեան մի ճար կը-  
գտնեմ: Միդ խօմ չեն բռնել, որ մեր միսն ուտեն, այլ  
որ մենք երգենք, իրանք էլ լսեն: Մեր այս պարսնը,  
ինչպէս կ'երեի, երգեր լսելու սաստիկ սէր ունի. Եթէ

Անուշ էր երգը, մեղմ ու զբաւիչ,  
Նա շարժեց իմ սիրտ, ազդեց իմ հոգուն,  
Բոնեցի նրան, դրի վանդակում.  
Որ դո՞ւ չըգնայ կատաղի քամուն,  
Քայց մի ժամ շանցած, նա տխուը, տրում,  
Դլուխը կախեց, արձակեց մի ճիչ,  
Մօտեցայ նրան, նա յետ-յետ քաշեց.  
Կասես ևս նրան լինէի դահիճ:  
«Այո, դժւար է, ասացի նրան,  
Աննման երգիչ, սիրելի թռչնակ,  
Ընկերից բաժնւած, քո բնից հեռու  
Վարել քեզ այսպէս բանտարկեալի կեանք:  
Ահա կըբանամ քո բանտի դուռը,  
Թըռիը դէպի դաշտ և կամ խոը անտառ,  
Գտիր ընկերիգ, սիրէ քո բունը.  
Մահ ու գերութիւն մի է քեզ համար»:

Դժիւը Հնջրոհիթին

I

Մեծ քաղաքներից մէկում կենում էր իր գործին  
լաւ հմուտ մի կօշկակար, Օհան անունով, Վարսկատ Օհա-  
նըն ինչքան ցանկանում էր հարստանալ, չէր լինում,  
չէր յաջողում: Ինչ զործ որ տալիս էին, շատ դեղեցիկ  
կատարում էր, և գնողները շատ անգամ ոսում էին,  
թէ նրա պատրաստած կօշիկները հարիւր տարի կը-  
հագնիի: Շատ պատէբներ էր ստանում, ամենիքը լաւ

գին էին վճարում, բայց վարպետ Օհանը դարձեալ  
չէր կարողամում փող դիզել:

Սրա պատճառն այն էր, որ ամեն տարի վարպետ  
Օհանին Աստուած մի տղայ կամ աղջիկ զաւակ էր  
պարզեցում և բոլոր երեխայքը մեծանում էին առողջ,  
զըւարժ և խաղում այնպէս, ինչպէս ձկները ջրի մէջ:

Իններորդ զաւակից յետոյ վարպետ Օհանի կինը  
մեռաւ և նա մնաց իր իննը երեխաների հետ որբ: Սա  
հեշտ բան չէր: Երեխաներից մի քանիսն արգէն դպրոց  
էին գնում. նա մէկին պէտք է մանգալ սովորեցնէր,  
միւսին զրկած ման ածէր, մէկէլին կերակրէր իր ձեռ-  
քով, շորբորդին մի բանով զբաղեցնէր. հինգերորդի  
երեսը լըւանար, մի խօսքով—բոլորի համար պիտի  
հոգս քաշէր, իսկ այս քիչ նեղութիւն չէ: Երբոր ան-  
կողինները ձգում էին, ամբողջ սենեակը դառնում էր  
ննջարան և ամեն տեղ երեսում էին միծ ու փոքը չէլ  
ու թռւս գլուխներ, և խըլպլտում էին ձկների նման:  
Վարպետ Օհանը մինչև կէս գիշեր նստում էր, շինում  
իր բանը և միւնոյն ժամանակ շտկում էր այս ու այն  
երեխայի վերմակը, որ բաց շրման, չըմբսեն և շատ  
անգամ ասում էր ինքն իրան:

Աստուած ինձ իննը երեխայ է տըւել, փառք  
իրան, ես պատճառ չունիմ տրտնչալու: Բոլոր երե-  
խայքս առողջ են, գեղեցիկ են և բարի:

2.

Զընայած վարպետի խեղճ ասլըուստին ու նրա որ-  
դոց քաշած ամեն տեսակ զրկանքին, այնու ամենայնիւ

Նրանք օրէցօք ամբապնդում էին, ցուրտը նրանց վնաս չէր տալիս ու ցամաք հացը շատ անուշ պատառ էր թւում։  
Բայց ահա Զատկի թաթախման երեկոյին, երբ վարպետ Օհանը՝ սաստիկ յոգնած՝ տուն էր վերապառնում, տեսաւ խանոթներում զատիկւայ համար շատ զանազան ընծաներ ջարւած, մի քիչ կտնդնեց ու մտածեց։

— Ես էլ պէտք է մի բան առնեմ երեխաներիս համար։ Բայց ինչ առնեմ, միթէ բոլոր իննի համար մի- միապամից։ Ոչ, այդ իմ կարողութիւնից վեր է, եթէ միայն մէկի համար առնեմ, այն ժամանակ միւսները պիտի նախանձեն նրան։ Ոչ, թէ որ պիտի զըւարձանան, թող ամենքը միասին զըւարձանան։ Ես նրանց մի այն- պիսի բան պիտի տամ, որ ոչ որ նրանցից չկարողանայ իմեկը, մի լաւ ու թանկագին բան, որ երբէք չըկորցնեն։  
Եւ վարպետ Օհանը մտնելով տուն՝ ասաց.  
Երեխէրը, ամենքդ էլ տանն էք։ Գիտէք, այսօր Զատիկի է։ Այսօր պէտք է զըւարձանանք, չենք բանե- լու, այս երեկոն պիտի ուրախ անց կացնենք։

— Սպասեցէք, իս ձեզ մի լաւ երդ կըսովորեցնեմ, թող այդ երդը լինի ձեզ համար զատիկւայ ընծայ։  
Հէնց որ հայրը վերջացը եց այս խօսքը, երեխայքը նրան շրջապատեցին, փաթաթւեցին վզին, և խնդրեցին, որ երգէ խոստացած երգը։

Վարպետ Օհանը կարգով շարեց մանուկներին, իսկ երկու ամենափոքրիկներին նստեցը ծնկների վըայ։  
— Դէ, այժմ՝ հանդարտ։ Ես կ'երգեմ, իսկ զուք կըկրկնէք։

Մաքարանամեղմի ձայնով սկսեց երգել Զատկի երգը։  
— Աայի մզմի բաս խոր ճայմը շնարի դայի։  
«Հողմը հնչեց ի հարաւէն, ձաւար՝  
ուսգրա իոյ Ռզատւեցան դաշտք ձիւներէն, և աւոյ  
ուս նամք Բերկրութիւն է ամեն տղոց, և դաշօ  
Քրիստոս յարեաւ ի մեռելոց։»

Միծերը ձայն էին պահում ու հետն ասում, իսկ փոքրերը դժւարանում էին և սխալում։ Վերջապէս երգը թկան արփն, և ինչքան ուրախացան, երբ տեսան, որ ամենքը խմբովին կարողանում էն կանոնաւոր երգել։

Եսպէս ուրախանում էին նրանք իրանց միակ և անշուր սենեակում, մինչդեռ նոյն միջոցին չարացած էր և տխուր նոյն տանը իննը սենեակում մենակ ապ- րող մի պարոն։

3

Ուրախ չէր իննը սենեակում մենակ ապրող աղան։  
Նա մի սենեակումը նստում էր, երկրորդումը ճաշրւմ,  
երրորդի մէջ պառկում, չորրորդումը ման էր գալիս,  
իսկ թէ միւսներն ինչու համար էին, — Աստւած զիտէ։

Ես երեկոյին հարուստ աղան ութերորդ սենեա-  
կումն էր նստել, և մեծ բանի վըայ էր. նա մտածում էր, թէ ինչու նոյն օրւայ կերպակուրները տասի տեղ ինն էր, մէկն ինչու էր պակաս, և ինչու էին անհամ բո-  
լորն էլ. ինչու սենեակների ջերմութիւնը սովորակա-  
նից աւելի կամ պակաս էր մի.երկու աստիճանով։  
Եհա այս տեսակ մտած մունքների մէջն էր, որ նրա

ականջը հասաւ վարպետ Օհանի երգելու ձայնը. Աղան երկար ականջ զնելուց յետոյ՝ ասաց ինքն իրան.

— Պատճառն ինչ է արդեօք, որ ես այսքան հարուստ եմ և տխուզ ու անմիտիթար, իսկ աղքատ Օհանը միշտ ուրախ է և զըւարթի: Մէկ գնամ տեսնեմ, դրանք ինչով են դըւարճանում այդքան:

Սյալէս մաածելուց յետոյ՝ աղան գնաց Օհանիմօտ: Վարպետը նրան պատւով ընդունեց և իր աթոռի վըայ նրան նստեցրեց, որովհետեւ էլ ուրիշ աթոռ չունէր: — Թու ես կօշկակար Օհանը, հարցրեց հարուստ աղան:

«Այն, ծառադ եմ: Գուցէ կօշիկ էք ուզում գնել»:  
— Ո՞չ, ես դրա համար չեմ եկել: Գու շատ որդի ունիս:

«Այն, ծառադ եմ, շատ կան. Աստուած տըւել է, չի խնայել, գոհանամ Աստուծոյ. ահա, ինչպէս տեսնում էք, կան մեծեր էլ, փոքրեր էլ: Եւ այս բոլոր բերանները հաց են ուզում և Աստուած կերակըում է սրանց, փառք իրան:

— Եւ այդ բոլոր բերանները միաձայն երգում են ուրախ ու զըւարթ, աւելացրեց աղան ժպտալով: Գիտես ինչ կայ, վարպետ, ես ուզում եմ քո երեխաններից մէկին վեր առնել և բախտաւորեցնել: Ես կը-որդեգրեմ նըան և կըկրթեմ իմ հարազատ զաւակիս նման, ինձ հետ արտասահման կըտանեմ, հարուստ աղայ կըդաւնայ և կօգնէ իր միւս եղբայրներին և քոյլերին,

իմուն նաև զայտ և զամանակաց պայու և մարդ պայման որ և այլաւոյն մազայ մմբաւ չ' ։

**4.** Զարմացաւ վարպետ Օհանը, իր զաւակներից մէկը կարող է հարուստ մարդ դառնալ, դրանից լաւ բան էլ ինչ կարող էր լինել:

— Ընտրիր որին կամենում ես, ասաց աղան: Վարպետ Օհանն սկսեց ընտրել, ասելով՝

«Մրա անունն Արամ է: Մրան չեմ տալ. սա գեղեցիկ կարդում է, ժամումը փոխ է ասում, ժամանակին լաւ քահանայ կրդառնայ: Մրանից փոքրը աղջիկ է. աղջիկը ձեզ հարկաւոր չէ: Յետոյ դալիս է Տիգրանը. սա ինձ օգնում է. առանց սրան իմ բանը դժւար կըլինի: Մա էլ իմ Օհանիկս է. իմ անւանակիցս է, չեմ կարող տալ: Հիմա գանք սրան. սա էլ իմ Յովսէվին է. սա իր հանգուցեալ մօր սիրելին էր. եթէ ձեզ տամ, սրա մօր հողին կըվշտանայ. ինկ այս երկուաը այնքան փոքր են, որ բարի աղային պէտք չեն գալ:

Այսպէս ջոկշըկեց Օհանը իր բոլոր որդիքը, բայց ոչ մէկին չըկարողացաւ ընտրել. Յետոյ դարձաւ երեխաններին և ասաց:

«Երեխէր, ձեղանից մէկն ու մէկը թող ընտրւի. ով է ցանկանում աղայ դառնալ, կառքերով պտտենել. դէ, ասացէք, ինչու էք լուում, ով ուզում է, թող ասէ»:

Որդիքը պատասխանի տեղ վաթաթւեցին իրանց հօրը և պինդ կպան. որը ձեռքը բռնեց, որը զոգնոցը, որը ոտքը, որը թաք կացաւ փեշերի տակին, որ ոչ ոք չըփախցնէ: Օհանը գրկեց ամենքին և չեմ աբատասուքները անձրեսի պէս թափեց ամենի դլիխին. լաց

Եղան և բոլոր երեխաները և ուսուք տեսած հաւի ձագերի նման մտան իրանց ծնողի գիրկր:

— Ո՞չ, ազնիւ պարոն, չնորհակալ եմ քո բարեսըր-  
տութեան համար։ Տեսնում ես ահա, որ ոչ ես և ոչ  
իմ զաւակներս յօժառ չենք այդ բանին»։

— Տեսնում եմ, տեսնո՞մ, պատասխանեց հարուս-  
տը։ Դէ որ այդպէս է, գոնէ մի երդ երգեցէք խմբո-  
վին և ահա դրա համար ձեզ մի հաղար ուսկի։

Տիվանաւ, յազմանց շնորհ մասնաւ առքուայ  
-մրգը տա. յան անձ մայթ 5. Ա նայթ մերանու աղթ,  
մայթանանած, նայուն է աղթ մայթ աղթ աղթ աղթ

Վարպետ Օհանը իր կեանքում «Հազար ոսկու»  
միխյն անունն էր լսել, բայց աշքով տեսած չէր, իսկ  
այժմ իր ձեռքի տակին ունէր «Հազար Ոսկի», երբ որ  
հարուստ աղան տուն գնաց, վարպետը տնտղեց ոսկիքը  
և ահ ու դողով թաքցրեց պահարանումը։ Այնուհետեւ  
նա լրեց, լրեցին և որդիքը։ Էլ շըկաբողացան երգել:  
Մեծ երեխաները լուր ու մունջ նստեցին և փողքերին  
էլ շուտ-շուտ ասում էին, որ էլ կարելի չէ երգել,  
հարուստ աղան կըլսէ և կընեղանայ, Խնքը վարպետն  
էլ սկսեց տիրել, և երբ իր հանգուցեալ կնոջ սիրե-  
լին խնդրեց, որ կըկնէ երգը, նա հըելով՝ ասաց. «Շր-  
պիտի երգենք»։

— ինչու, հայրիկ, ինչու չպատի երգեսք, հազ-  
ըց երիխան...

Սնմեղ երեխայի այս հարցմունքը վարպետ Օհանի  
աշըք կարծես քնած տեղից բաց արաւ «Իլաւ, ինչու  
չըսվածի երդինք, ինչ եմ անում այս ոսկիքը, եթէ սա  
պիտի մեր ուլախութեան վերջ տայ, և ով գիտէ ինչ

փորձանքի մէջ պիտի ձգէ ինձ»։ Այսպէս մտածելուց յետոյ, չուտով վերկայաւ տեղիցը, վեր առաւ ոսկիքը և վագեց ազարի մօտ։

«Եղնիւ պարոն, ասաց Օհանը, խնդրեմ ձեր փո-  
ղերը յետ վերցնէք, որ ևս կարողանամ երգել իմ ու-  
զած ժամանակը: Իմ երեխաների ուրախութիւնն ինձ  
համար աւելի թշանդ արժէ»:

Այս ասելով ոսկու քսակը դրաւ աղայի սեղանի վրայ և շուտով վերադարձաւ տուն այսպէս ուրախ, ինչպէս մի մեծ պարագից կամ գերօնթիւնից ազատած: Եւ այսուհետեւ երսի ձայնը կը կին բարձրացը ին խմբովին:

ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր, և  
Հոգով դեռապի, գլխով ալեղը, և  
Մեծ ծով էր պատել նրա աշխարհը. և յուզ  
«Ոսկի» ասացին դիտունք այն դարբ:

Աւնէրանա երկու մատադիաս աղջիկ,

Մինու խիստ աղեղ, միւսը գեղեցիկ:

Մի օր տգեղը ասաց զեղեցին,

Տաղաւոր ծովի ափ, բոլորի, մեասին»:

Սիրունը պնաց առաջից տըտում,

Տղեղը հետքից ուս պահած սրտում.

Հազիւ թէ օսկի ափին էր հասած,

սիրուն քըրոջ գլորեց նա ցածր շամբ

Կամացեա իհապամկո սիօունա օգեա

«Քարոզի՛, իսկ զգութիւն, մահեւ ինչ մասէ կա»

«*Люблю я вас, я люблю вас, я люблю вас*,

«Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,  
Առ, էն քնզ լինի, պարգևէ ինձ կեանք»...

Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ,  
«Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,  
«Կըտամ քեզ սակի պսակ պատւական»:

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,  
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:

«Քոյրիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունշ,  
Քեզ սիրուն գեսաս կըտամ անտրտունշ»:  
Տգեղի սիրտը դառել էր լեռ քար,  
Քըրոշ խնդիրքը թողեց անկատար:

Զկնորսը ծովլ ձգեց մեծ ուռկան,  
Բոնեց մարմինը սիրուն աղջկըկան:  
Զըիցը հանեց, զրեց ափի մօտ,  
Ճատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ:  
  
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջրկան,  
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան,  
Տարաւ իրա տուն այդ անգին գիտը,  
Հորացըրեց նորա մարմնու դիփ հիւթը.  
Գեղեցիկ տաւիդ շինեց ոսկերից,  
Քաղցրածայն լարեր հիւսեց մազերից:  
Երբ որ ամեն բան պատրաստեց կարդին,  
Դնաց արքունիք տաւիդը ձեռքին.  
Երբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած,  
Տեսաւ տգեղին փեսի մօտ կանդնած.

Բացեց բերանը, լարերին խփեց,  
Հիւրերի աւշեց քաղցրածայն երգեց.

«Ճնչէ, իմ տաւիդ, հնչէ համարձակ.

«Հարազատ քոյրըս խլեց իմ պսակ.

«Լսէ, իմ ծնող, լսէ, սիրական,

«Հարազատ քոյրըս խլեց իմ փեսան.

«Լսէ, ժողովուրդ, լսէ անխռով,

«Հարազատ քոյրըս գլորեց ինձ ծով»:

Միւս օրը դահիճը խարոյկ շինեցին,

Մահապարտ քըրոջ մէջը գլորեցին.

Հուրը պըլպըլաց, աղջիկը կանշեց.

«Իմ մեղաց համար Աստւած ինձ պատժեց»:

ՀՆԱՐԱԳՀԵՑ ՋՈՒՆՀԱԿՀ

(Աւանդուրին)

Ճահ-Աբասի ժամանակ հեռու աշխարհից դէրւիշէ  
հագուստով մի մարդ է գալիս Սպահան քաղաքը: Քա-  
ղաքի ընդարձակ հրապարակի մէջ այդ դէրւիշը մի մեծ  
շրջան է քաշում փայտով, ինքն էլ կշտիննստում լուս  
ու մունշ: Անց ու դարձ անողները նայում են և զար-  
մանալով հարցնում, թէ դու ո՞վ ես, այս ինչ բան է  
որ դու քաշել ես. արդեօք մի թալիսման չէ սա, և մեզ  
համար բարի, թէ չար թալիսման է... Դէրւիշը բնաւ  
չի խօսում: Ամերոջ քաղաքը վարանման մէջ է ընկնում,  
թէ սա ինչ կընշանակէ արդեօք: Վերջը իմաց են տա-  
լիս Ճահ Աբասին, թէ այսպէս մի դէրւիշ է եկել...

Ճահ-Աբասը իր գիտնականներից մէկին ուղարկում

է, որ տեսնէ ինչ բան է, ինչ է դէրւիշի ուղածը, ինչու է ժողովրդին սարսափի մէջ դցել: Դիտնականը գնում է և ասում դէրւիշին.

— Ով մարդ, ես հասկանում եմ քո միտքը: Քո շըջանը նշանակում է երկինք: Դատարկ է մէջը: Այդ դատարկութիւնը նշանակում է, որ դու ուզում ես երկինքը կապել, որ ոչ մի ամալ չըլինի այնտեղ, որ էլ անձն չըդայ, սով ընկնի մեր աշխարքը: Դիտեմ, զիտեմ, որ դու կարող ես այդ բոլորն անել. բայց խղճա միզ, այդպէս բան մի անիք, ինչոր ուզես, քեզ կըտայ թաղաւորը...

Դէրւիշը բնաւ չըխօսեց և զիտնականի երեսին անդամ շնայեց: Բայց ժողովուրդը լինով զիտնականի բացատրութիւնը, աւելի մեծ երկիւղի մէջ լնկաւ: Ել չին ասում, թէ զուցէ սխալ էր զիտնականի բացատրութիւնը, այլ դիս հակառակ՝ լուն ուզտ շինելով, պատմում էին իրար, թէ՝ «Բա չէք ասիլ, դէրւիշը մի ամենազօր մարդ է, այս ինչ երկրում հեղեղ և կարկուտ է թափել, բոլոր բնակիչներին կոտորել. այն ինչ տեղ եօթը տարի շարունակ կապել է երկինքը, ոչ մի կաթիլ անձք չի եկել, սով է ընկել երկիւրդը բարեկանը կերել են միմեանց...»

Միւս օր Զահ-Աբրասն ուղարկեց մի ուրիշ զիտանական:

Դիտեմ, զիտեմ, ով ես դու մարդը Սստուծոյ, ասում է զիտնականը: Քո շըջանը նշանակում է երկիրս: Դատարկ է մէջը: Դրանով ուզում ես ասել, որ ժանտախտով պիտի դատարկես մեր երկիւրդը: Խնայիր մեզ ինայիւր ի սէր Ամենակալին, այդպէս բան մի անիք, ինչոր ուզենաս քեզ կըտանք...

Դէրւիշը դարձեալ մնաց լուսուն Աւելի ևս սաստկաց ցաւ: Ժողովրդի երկիւրդը և նորանոր առասպելներ տարածւեց քաղաքին մէջ:

Բոլոր գիտնականները յաջորդաբարոգնացին դէրւիշի մօտ և բոլորն էլ ունքը շինելուանդ աշքն էլ հանեցին: — Վոխանակը ժողովրդի վասկածը վարատելու, նրան աւելի երկիւրդի ու մնահաւատութեան մէջ գցեցին:

Թագաւորը կարծում էր, որ դէրւիշի արածը մի հասարակ հանելուկ պիտի լինի, և իրան համար շատ ամօթէր համարում, ոքայդ հասարակ հանելուկը լուծող մի զիտնական չունի: Այսպիսի մտատանջութիւնով նա մէկ օր ծպտած ման էր գալիս Սպահանի հայոց թաղումը, ուը ճանպահեցաւ մի տարօրինակ բանի: Մի տանիքի վրայ ցորեն կաը փուած անդունի համար, ոչ ոք չըկաը մօտը, բայց մի երկայն եղէդ կաը ցցուած, որ ինքն իրան անզագարտաբուքերն ըսվ քշում էր ճնճկուկներին: — Այս հրաշքի գաղտնիքը պէտք է տան մէջը մինտքել, տաց թագաւորն ուներս գնաց տուն, և այստեղ տեսաւ մի ջուլհակ, որ կտաւ էր գործում:

Եզր որ թագաւորը նեզս մտաւ, ողջունեց ջուհակին, օդուհակը նայեց նըրա վրայ, խկոյն ոտքի կանդնեց, խոր զլուխ տալով պատասխանեց նըրա ողջունին, յետոյ միսեց շարտնակել իր գործը: Զուհակի աջ ու ձախ կողմին մի-մի օրօրոց կաը գլուած: Երբորնակակսեց գործել, թրօրսցներն էլ սկսեցին օրօրւիլ տանիքի ինքնաշարժ եղէպնի պէս: Յըորոցում եղած երեխաները ծերունու թուներն էին, որինց մայբերը տան մի անկիւնումնստած ճախարակղիքամբակէին մանում կտաւի համար: Իր հարսներին գործից չըզցելու հսմազ հնարա-

գէտ ջուլհակը տանիքի եղէգից մի թել էր կապել, թել մէկ ծայրը փաթաթել կտափ սանդրին, որ իր տարուբերւելովը շարժում էր եղէգը: Օրօրոցներից նմանապէս թելեր ունէր կապած, որոնց հակառակ ծայրերը իր աջ ու ձախ մատներին էր փաթաթել: Աջ ձեռքով մքուքը նետելիս, աջ կողմի օրօրոցն էր օրօրուում, ձախով նետելիս, ձախ կողմինը: Այսպիսով նա մէկ անգամից երեք գործ էր կատարում:

Թագաւորն այդ ամենը նկատեց և գովեց իր մըտքումը նրա հնարագիտութիւնը, միայն նրա ստքի կանգնելով խոր զլուխ տալը թագաւորի մէջ կասկած ձգեց, թէ չըլինի իրան ճանաշեց: Այս բանն ստուգելու համար, թագաւորը մի մութ հարցմունք արաւ նրան.

— չըլինիմ, չըլինիմ...

— Միթէ, միթէ... պատասխանից ջուլհակը:

Թագաւորը «չըլինիմ, չըլինիմ» ասելով, ուզեց ասել ծերունուն. «Եթէ ինձ ճանաշեցիր, չըլինի թէ երկցնես այդ բանը, թող այդ մեր մէջը մնայ»: Իսկ ծերունին պատասխանեց «միթէ, միթէ». այսինքն՝ «միթէ ես յիմար եմ և այդքանը չըգիտեմ»:

— Քանիսի մէջն ես, վարպետ, յետոյ հարցըց թագաւորը:

— Երկուսը լրացրել երեքի մէջն եմ մտել, պատասխանեց ջուլհակը:

Թագաւորի այս հարցմունքը ջուլհակի հասակին էր վերաբերում: Ջուլհակը պատասխանեց, որ երկու ոտքով ման գալն արդէն վերջացրել է, հիմա գաւազան է գործ ածում, իբրև երեք ոտք, մէկ խօսքով ծերացել է:

Թագաւորն այսպիսի շատ մութ հարցմունքներ ա-

րաւ և բոլորի պատասխանն էլ ստացաւ դարձեալ մութ կերպով: Տեսաւ որ ծերունի հայր մի հնարագէտ և հանճարի տէր մարդ է թէ գործով և թէ խօսքով, մտածեց, որ միայն սա կարող է դէրւիշի պատասխանը տալ:

— Դու որ այդշափ հնարագէտ ես, ասաց թագաւորը, եթէ մի քանի սադ ուղարկեմ քեզ մօտ, կարող ես փետրել նրանց:

— Դրա քաջ վարպետն եմ ես, պատասխանեց ջուլհակը:

Այս պատասխանն ստանալուց յետոյ թագաւորը գնաց: Ճատ չանցաւ. ջուլհակի մօտ եկան թագաւորի գիտնական նէզիլ-վէզիրները:

«Ահա եկան թագաւորի սագերը. իրաւ որ լաւ փետրելու թուշուներ են», ասաց ջուլհակն ինքն իրան:

Թագաւորը տուն գնալով սաստիկ բարկացել էր զիտնականների վրայ և սպառնացել էր, որ եթէ գոնէ մի մարդ չըգտնեն, որ գէրւիշն պատասխան տայ, նրանց բոլորին էլ կաքսորէ. Այսպէս նեղի գալով որոշեցին դիմել հնարագէտ ջուլհակին, որի համբաւը նրանցից մէկը լսել էր:

— Վարպետ եղբայր, կարող չես արդեօք մի պատասխան տալ մեր տարօրինակ հիւրին որ ժողովրդի վրայ պարսափէ տարածել, ասացին գիտնականները և պատմեցին գէրւիշի գէպքը, որ արդէն յայտնի էր ջուլհակին:

— Ինչո՞ւ չէ... կարող եմ... բայց մեծ ծախք կը պահանջւի դրա համար: Պէտք է ձեռք բերել մի կախարդական զաւագան, մի անմահական սխտոր և մի ոսկի ձու ածող հաւ:

Գիտնականները մնացին ապշած:

— Դրա ծախքը մինք կըվճարենք, ասացին նրանք

ուշքի պալով, միայն մենք չենք գլարող զանել այդ  
բաները, ինչոք գուշ ես ապահով, և եթէ ինքը կըդտնիս,  
միայն ամեն բանի իմ ուզածը, և հս ինքս կըդտնիս,  
պէտք Դուք երեք հոգի էք, ամենքդ ձեր գլխարկովը-  
մէկ ոսկի կըբերէք, ես էլ կըգամ դէրւիշին պատաս-  
խան կըտամ.

Գիտնականները ճարահատած համաձայնեցին:  
Դնացին երեք գլխարկ ոսկի բերին տըւին ջուլիալին:  
Այսպէս փետրելավ նըանց, ինչպէս պատուիրել էր թու-  
գաւորը, վեր կացաւ առաւ իր հմնի դաւազանը, մի  
զլուս հոտած սխտոր, ոտի մէկը կոտրած մի հաւ, և  
զնաց սարսափ տարածող դէրւիշի մօտ:

Թագաւորը իր բոլոր իշխաններով:  
Զուլիակը շխոսեց դէրւիշի հետ, նա լուռ ու մունչ  
իր գաւազանի ծայրով մի խոր ակօս քաշեց շրջանի  
մէջ տեղով ծայրէ ի ծայր և այսպէսով դէրւիշի շըր-  
շանը երկու հաւասար մասնի բաժանեց և նստեց նըա-  
դէմ յանդիման:

Դերւիշը երկար մտածեց, զլուխը թափ տըւաւ,  
վերջը մի գլուխ սոխ հանեց դրաւ առջելը:  
Զուլիակն, առանց երկար մտածելու, իսկոյն իր  
սխտովը հանեց դրաւ իր առջելը:  
Բարկացաւ դէրւիշը և իր չէրից հանեց մի բուռ  
կորեկ և շաղ տըւաւ ամբողջ շրջանի մէջ,  
կոյն կըտկը վիշի տակից հանեց իր հաւը, որ իս-  
դէրւիշն էլ մինչեւ վերջը շրապասեց, իսկոյն վեր-  
կացաւ և մոմուալով հեւացաւ զնաց.

Թագաւորը մօտեցաւ ջուլիակին և ինդրեց, որ  
քացաւորէ այդ հանելուկի նշանակութիւնը:  
— Ողջ լինի թագաւորը, ասաց ջուլիակը: Եյս մար-  
դը մի խելագար գէրւիշ է, երևակայիլ է, որ ինքը մի  
շատ զօրեղ իմաստուն մարդ է և կարող է մեր ամ-  
րող աշխարհին տիրել: Իր բաշած շրջանով ուզում  
էր մեզ հասկացնել, թէ իրանն է բոլոր մեր երկիրը:  
Ես չուզեցայ հասկացնել նըան, որ այդ խելագարութիւն  
է, այլ կէս արի մէջտեղից, որով ուզեցայ ասել, թէ  
կէսն էլ իմն է: Նա բարկացաւ և իր սոխով ինձ պա-  
տերազմ յայտնեց, կամ ուզեց ասել, մեր մէջ դառնու-  
թիւն կըծագի, կոիւ կըլինի: Ես էլ իմ սխտորով հաս-  
կացը նըան, որ ես վախչող չեմ, թէկուղ կրւից էլ  
վատթար բան պատահի: Նա իր կորեկով ինձ սպառ-  
նաց, որ իր զօրքերն անհամար են: Ես էլ իմ հաւով  
ցոյց տըւի, որ ահա այսպէս կըջարդեմ ես քո անհա-  
մար զօրքը: Դրա վրայ նա տեսաւ, որ էլ չի կարող  
մեզ վախեցնել, վախաւ զնաց...  
Քաղաքացիք շատ ուրախացան, որ վերջապէս ա-  
զատւեցան դէրւիշի տալիք երևակայական սովից ու մա-  
հից և ամենքը միարեքան զոչեցին՝ «Կեցցէ ջուլիակը»:  
Ղահ-Աբբասը որ շատ արհեստակը թագաւոր էր,  
զովեց ջուլիակին և յետոյ հարցրեց:  
— Ի՞նչ արիր իմ սագերին, լաւ վիետրեցիք, թէ ոչ...  
— Ողջ լինի թագաւորը, այս, լաւ վիետրեցի, ահա  
նըանց վիետուրները, ասաց ջուլիակը: Կ թագաւորի  
առջեր զրաւ մի պարկ ոսկի:

— Քեզ ին արժանի այդ ոսկիը, ասաց թագաւորը,  
զու աւելի օգտակար գործադրութիւն կըգտնես դրանց

համար, Մի այդքան էլ իմ գանձարանից ստացիր և  
մի մեծ գործարան բաց արա. թող ծաղկի քո արհեստը  
իմ երկրիս մէջ: Եյսուհետև իմ պալատի գոները միշտ  
բաց ենք համար. թող իմ հովանաւորութիւնը լիուլի  
տարածւի քո իմաստուն ժառանգների և քո ազգի վրայ,

*ՔԵՈՐԾՂՀԻՆ ԶՐԱՂԱՑՊԱՆ*

(Մի արկած Քեօրողուն կեանքից)

Մէկ անգամ Քեօրողու ժառաներից մէկը, Քա-  
չալ-չամզան, վախել էր: Քեօրողին հեծաւ Ղըռաթը,  
որ իր ընտիր ձիաներից ամենից լաւն էր, և ընկաւ  
չամզայի ետևից, որ բռնէ նրան և պատժէ:  
չամզան դեռ շատ չէր հեռացել: Նա յետ մտիկ  
տրւաւ և տեսաւ, որ հեռւից թող է բարձրանում ամպի  
պէս, իսկոյն գլխի ընկաւ, որ Ղըռաթի բարձրացրած  
թողն է այն, ուրեմն ուր որ է Քեօրողին պիտի հասնէ  
և բռնէ նրան: Հնար չկար փախչելու: Նրա բախտից  
նոյն տեղ մի ջրաղաց կար, վազեց մտաւ ջրաղացը,  
երես-մերեսը ալրաթաթախ արաւ, շորերն էլ նոյնպէս,  
և այսպէս կերպարանափոխած՝ դուրս եկաւ կանգնեց  
ջրաղացի դռանը:

Քեօրողին ձին քշած եկաւ և չամզային պատա-  
հելով հարցրեց, թէ՝ «Այս ու այս նշանով մարդ չան-  
ցաւ արդեօք»:

— Ի՞նչպէս չէ, պատասխանեց չամզան, քո ասած  
նշաններով մի մարդ մտաւ այս ըստիս իմ ջրտղացը:  
— Ուրեմն, բռնիր ձիս, ասաց Քեօրողին և իշաւ

2ին թողեց Համզայի ձեռքին, իսկ ինքը մտաւ  
ջրաղացը, տեսաւ որ այնտեղ ոչ ոք չըկար, գուրս ե-  
կաւ, որ բարկանայ ջրաղացպանի վրայ, բայց կեղծ ջրա-  
ղացպանը՝ այսինքն Համզան՝ արդէն Ղըռաթի վրայ էր:

— Անպիտան, ինձ խարեցիր՝ բաւական չէ, հա-  
մարձակեցար հեծնել նաև իմ Ղըռաթըս, ասաց Քեօ-  
րողին բարկութեամբ:

— Ճատ մի խօսիր, պատասխանեց Համզան, այժմ  
Քեօրողին ես եմ, իսկ դու գնա ջրաղացպանութիւն  
արա, նայիր միայն որ լաւ աղաս, կորկոս շանես: Եյ  
ասելով՝ Ղըռաթի գլուխը շրջեց ստահակ ծառան և...  
և այսօր ես անյայտացել, թէ էգուց...

Քեօրողին նոր գլխի ընկաւ, որ փախչողը և իր  
սիրած ձին փախցնողը Համզան էր, բայց էլ ինչ կա-  
րող էր անել: Նա քահ քահ ծիծաղելով իր միամտու-  
թեան վրայ, գլուխը թափ տըւաւ և մտաւ ջրաղացը:

Քեօրողին սովորութիւն չունէր յուսահատելու. այս  
տեսակ զէպերենը միշտ ուրախու զըւարթ տըւամա-  
դրութիւնը չէին խանգարում: Նա տեսաւ որ ամբարը  
լիքն է ցողենով, բայց ջրաղացպանն ուրիշ տեղ է  
գնացել, զուրը կապեց նաւի մէջ և բան ձգեց աղօ-  
րիքը: Երբ որ շանշախն սկսեց իր ներդաշնակ շըխ-  
ութիքը, Քեօրողին նրան սազի տեղ համարեց և  
սկսեց երգել հետևեալ երգը.

Այ Քեօրողի, ջան Քեօրողի,

Այ Քեօրողի, ջան Քեօրողի,

Քեղ խարեց Համզան, Քեօրողի, հայ, հայ, հայ.

Բայց որ գաւար ջրաղացպան,

Կանչիր, թող գայ դան, Քեօրողի, ջան,

Քանի թե Քեօրողի ջանքամ պարան մէջ  
- և սկսոր Քան Քեօրողի։ Առաջ յու առաջ զբարակ  
- այց հրձ ուայ ուոյ վաճառք լամակաց յու այց  
- ոյժ այց Մարդուս բախտն էլ ահա ալպէս՝  
- այց այց զտըտում է ջաղացի պէս։ Առաջ այց  
- ու այց Մէկ օր ահռելի վիշապ էս,  
- Միւս օր ջաղացպան, Քեօրողի։ Այս մէջրոց  
Ներ, մարդու սմանական ուոյ ին առաջ —  
Բայց դու էլի Քեօրողին էս, մի առաջ —  
միջնորդ սիրելին էս, առ մէջրոց այց  
այց առաջ Թէկուզ ջաղացպան էլ լինես,  
... մ առ թէկուզ ջաղացպան էլ լինես,  
Բեղ պատիւ կըտան, Քեօրողի։

Թէկ Դըռաթիցդ դըրկւած, մէջրոց այց  
Բայց թուը ունիս վրադ կապած, ճաղին  
չամզան ստրուկ, թուկից փախած,  
Իսկ դու պատ խան, Քեօրողի։

Մօտրդ կանչիր հսկանելիդ,  
չաւատաքիմ կտրիճներիդ,  
Թուկ գան գանեն փախած պերիդ;  
Չըկորչի չամզան, Քեօրողի։

Քեօրողլու ձայնը շատ ահեղ էը, Եյս երգը երդե-  
լուց յետոյ բարձրացաւ ջրաղացի տանիքի վրայ և այն-  
պէս որոտաց, որնը ձայնը սար ու ձոր դրմբացնելով  
հասաւ մինչև 2 ամլիքէլ սարը, ուր գտնում էր Քեօրողլու  
անմատելի բերդը։ Քեօրողլու կինը՝ նիգեար խանումը,  
որ շատ սուր լսողութիւն ունէր, ամենից շուտ իմացաւ,  
որ իր ամուսինը մը անակնկալ փորձանքի է հանդի-  
պել։ Խսկոյն իմաց տրաւ քաջերին, որոնք մի ակն-

թարթում դուքս թափւեցին բերդից և հասան իրանց խմբապետին։ Դրանց մէջ նշանաւոր էին Դամուրջօղլին, Խսար-Ալին և Գգիր-օղլի։ Մուստաֆա-բէզը։ Երբ որ գնացին տեսան Քեօրօղլուն ջաղացպանութիւն անելիս, Ղըրաթը խլել տրւած, շատ ծիծաղեցին։ Դամուրջօղլին մի երգով չնորհաւորեց Քեօրօղլու նոր արհեստը և նոր առուտութը։ (Որովհետև Համզան Ղըրաթը փախցնելով՝ նրա փոխարէն իր ջորին թռել էր Քեօրօղլու մօտ)։

Ահա թէ ի՞նչ է ասում Դամուշօղովին և ի՞նչ ձեռվ.

Նոր վաճառական ես դառել  
Ըուրտուըզդ չնորհաւոք,  
Զին տղւել ես, ջորին առել,  
Ըուրտուըրդ չնորհաւոք:

Հին տըւել իս, ջորին առել,  
Առտուրըդ չնորհաւոք, հոգի՞ս  
Առտուրըդ չնորհաւոք:

Ալիւըզդ ջորուն կըբարձես,  
Բազար կըտանես կըծախես,  
Դեղին ոսկիք կըհաւաքես,  
Առտուբըզդ չնորհաւոր:

Քեզ կասմն՝ ուստա մուշան \*),  
Երբ կըդառնաս լաւ ջաղացպան,  
Գլուխ. գլուխ շահադ \*\*) կըտան  
Ըսրտուրդ շնորհաւո՞ր...

\*) Քեօթողյուն ուղիղ անցւնը մուշան է.

\*\*) Համար է առւում աղալու համար տըստ վարձը, որ մի յայտնի չափով արւում է այն հատիկից, ինչ որ աղայուում է:

Դամուրջօղլի, շատ լաւ կանես,  
Որ Քեօրօղլուն զովաբանես,  
Ասես՝ լաւ վաճառական ես,  
Առասուրլոդ շնորհաւոր...

Դամուրջօղլին այսպէս երկար կըշաբունակէքր  
բայց Քեօրօղլին նըան միջահատում է, ասելով՝ կա-  
տակի ժամանակ չէ, և ինքն է սկսում երգել այլ ե-  
ղանակով և ահեղ ձայնով.

Ծառաս փախել է մինչ Երաբստան,  
Չուտ արէք, ուր որ է, վնտրեցէք, բերէք.  
Երլնքին զարկելով՝ կապէք կոները,  
Երաբ ձիու վրայ բարձեցէք, բերէք.  
Երլնքին զարկելով՝ կապէք կոները,  
Երաբ ձիու վրայ բարձեցէք, բերէք.

Երի, հոգիս, արի,  
Երի, անուշի՛կ,

Իր դործած յանցանիքը զրէք իր վրդին,  
Որ չասեն՝ անմիշ էր, ի զուր պատժեցին.  
Մոըթեցէք եղան պէս, քերթեցէք կաշին,  
Միու մաս-մաս արէք, չարդեցէք, բերէք:

Քեօրօղլին եմ, ես չեմ մասլ չաղացանի,  
Եմ Երաթին երբէք չի տիրել չամզան,  
Գետնի տակն էլ լինի, հանեցէք նըան,  
Չիու պոշից կապած՝ քաշ տըլէք, բերէք:

Ել ինչ ասել կուղի, որ Քեօրօղլու հրամանը շուր-

տափոյթ կատարւեց: Քեօրօղլուն պատահած այս  
արկածը պատմում է և ուրիշ ձեռվ <sup>\*)</sup>:

ԽԱԶԻՂԻԱՅ ԼԻԾԸ ԿԱՄ ՀԱԽԼՈՒԽԻ ԹՈՒՐԸ

(Աւանդուրին)

Շատ ու շատ դարեր մեզանից առաջ մի թա-  
գաւոր կար, անունն էր Պոօշ, ինքը զօրաւոր, ազնիւ  
ու արդար: Նստում էր նա իր Լաթար քաղաքում: Նա  
չէր կուտասէր, թէպէտ կարող էր ամեն բան ուժով.  
Եթէ ուզենար, աշխարհք կըքանդէր Հաւլունի թրով.

Հաւլունի թուրը, Հաւլունի թուրը.

Սմեն բան կանէ Հաւլունի թուրը.

Չի լինիլ նըրան աշխարհում նման,

Կանէ ամեն բան Հաւլունի թուրը:

Օ՛, նա չէ շինած հողեղէն ձեռքով,

Սնձեռագործ է Հաւլունի թուրը.

Չէ նա Խորասան և ոչ ալմաղից,

Ալմաղ կըկտրէ Հաւլունի թուրը:

Կրակոտ ամպերում, կայծակների հետ

Միւնիլ է, կոփւնի Հաւլունի թուրը.

Կրակոտ ամպերում, կայծակների հետ

Եշխարհ է իջել Հաւլունի թուրը:

Ով տիրէ նըրան, աշխարհ կըտիրէ,

\*) Քեօրօղլու բոլոր երգերը երեք եղանակ ունին միայն:  
Եյստեղ բերած երեք երգերից ամեն մէկը ջոկ եղանակ ունի,  
որ ասել է՝ երեք եղանակներն ևս կան: Երգերի ձևն ու տողերի  
շափը ցոյց են տալիս արդէն, թէ որն ինչ եղանակ ունի: Երգել-  
լիս առաջին տաճ կազմութիւնը պէտք է տալ և միւս աներին:

Աշխարհ կըդերէ չաւլունի թըռփ,  
Դէւերի մեծին գերի կըդերէ,  
Հստրուկ կըշինէ չաւլունի թըռփ:  
Երբայազնուհին 2ինումաշինի  
Իր հարս կը բերէ չաւլունի թըռփ,  
Եալրուղ սարն էլ որ նրա առաջ ենի,  
Երկու կէս կանէ չաւլունի թըռփ,  
Չաւլունի թըռփ, չաւլունի թըռփ,  
Ամեն բան կանես չաւլունի թըռփ,  
2ի լինիլ նրան աշխարհում նման,  
Ինչ ուզես, կանես չաւլունի թըռփ:

Ահա թէ ինչու Պոօշ թագաւորից ամենքն էին  
սարսում, թէպէտ նրա մտքով մի մարդու անդամ  
վնասել չէր անցնում: Եւ ո՞վ չէր սարսիլ. մեծ էր  
չաւլունի թըրի զօրութիւն. բայց չէր ցանկանում Պոօշ  
թագաւորը փառք, իշխանութիւն:

Ոչ ոք չըգիտէր, թէ քանի տարի Պոօշի պապերը  
կըում էին իբրև մի անդին աւանդ չաւլունի թուրը,  
թէ ինչ հրաշքով ընկել էր թուրը աշխարհի վրայ, թէ  
ո՞րը Պոօշի մեծ նախնիքներից ձեռք էր բերել այն.  
յայտնի չէ թըրի սկզբնաւորութեան մուլժ պատմու-  
թիւնը. լուսմ է այդ մասին աւանդութիւնը. դիտեն  
այս միայն, որ Պոօշի նախնիք այնքան տարիներ ի-  
րանց զօրութիւնը և ուժը երբէք ի զուը չեն գործ

Պոօշն էլ հետեւց իր նախնիքներին, ստացաւ  
թուրը հօր մահւան ժամին, առաւ աւանդը, խօստա-  
ցաւ հօրը. «չայլին, երդում եմ քո տըւած սրով,

որ քեզ հետեւիմ, չարի կործանիչ, բարու հաստատիչ  
հանապազ լինիմ»:

Եյսպէս էլ արաւ: Քառասուն տարի Պոօշի թձեռ-  
քում չաւլունի թուրը կայծակի նման վայլում էր  
վառւում, բայց նրա ձեսքով մի անմեղ արիւն երբէք  
չըթափւեց, կայքից ու կեանքից չաւլունի թըռփ ոչ  
ոք չըգրկւեց: Ոչ մի թագաւոր կամ արգար իշխան  
շընկաւ իր գահից, ոչ մի ժողովուրդ չըգրկւեց իրան  
ազատութիւնից: Ինչ բան բարի էր, նա զօրացնում  
էց իր զօրեղ ձեռքով, ինչ բան որ չար էր, չնչում,  
կործանում չաւլունի թըռփ:

Եւ ինչ չէր անիլ, մեծ էր չաւլունի թըրի զօրու-  
թիւն, բայց Պոօշ թագաւորն այդ չէր ցանկանում,  
այլ ասում էր միշտ: «Թող մարդիկ ապրին ազատ ու  
խաղաղ: Լաթար քաղաքս լաւ կառավարեմ, այն էլ է  
հերիք»: Եւ լիանում էր Լաթար քաղաքը ամեն բարի-  
քով, ձգում էր շէնցած Խաչլըւայ լընի կանաչ ափերով:

Բայց ինչ կայ արգեօք յաւիտենական այս աշ-  
խարհի մէջ: Պոօշ թագաւորի դլումն էլ ծածկւեց  
սպիտակ մազերով այն զօրեղ անձը, որից զողում էր  
ամբողջ աշխարհը, էլ չէր կարենում վերցնել չաւլու-  
նի յաղթական թուրը:

Ընկաւ Պոօշը, ուժահաս ընկաւ մահինը մահւան:  
«Ահա մօտեցաւ իմ վերջին օրը, ասաց ինքն իրան.  
«իմ ժառանգն ո՞վ է, ո՞մ պիտի յանձնեմ չաւլունի  
թուրը»:

Թագաւորն ունէր եօթը հատ որդի, իւրաքան-  
չիւրը մի սարի դլիմի, ամեն մէկն ունէր մի բերդ  
սկիփական, ամենքն էլ ծարաւ մէկ մէկու արեան:

Որդին տար արդիօք չաւլունի թուրը: Նրանցից ոչ  
ոք սրին չէր արժան. վեց անգէն եղբայրը դլխները  
կտրած պիտի թրաբրտան. չաւլունի թուրը պիտի  
զէնք դառնայ մարդասպանութեան:

«Ո՛չ, այս չի լինիլ», ասաց Պոօշը, կանչեց մեծ  
որդուն Բէջանու բերդից: Եկաւ մեծ որդին, որ լսէ<sup>2</sup>  
իր հօր կտակը վերջին:

«Որդի՛, մեռնում եմ», ասաց Պոօշը. «Վերջի կտա-  
կըս յայտնում եմ ես քեզ, բայց մահիցս առաջ պիտի  
կտարես»:

— չայլի՛կ, պատրաստ եմ. վերջին կտակը ես կը-  
կտարեմ, տուր ինձ, թէ կուզնէս, չաւլունի թուրը,  
աշխարհք կըքանդեմ:

«Այո՛, քեզ կըտամ չաւլունի թուրը, բայց լսիր,  
որդիս, աշխարհք մի՞ բանդիր, այլ տար, Խաչլըւայ  
ծովակը ձգիր»:

Մեծ որդին տարաւ չաւլունի թուրը, բայց հօրը  
խարեց, ծովը շըձգեց, այլ հօրից ծածուկ մի տեղ  
թաքցրեց:

«Որդի. ինչ արիր չաւլունի թուրը, ձգեցիր ծո-  
վը», հարցրեց հայրը:

— Այո՛, այո՛, հայր, չաւլունի թուրը տարայ ձգե-  
ցի Խաչլըւայ ծովը:

«Տեսար ինչ եղաւ Խաչլըւայ ծովը, երբոր ձգե-  
ցիր չաւլունի թուրը»:

— չայր, ոչինչ չեղաւ Խաչլըւայ ծովը, բայց ես  
ձգել եմ չաւլունի թուրը:

— Ոչ, սուտ ես խօսում, անարժան որդի, խա-  
ռում ես հօրըդ. զնա՞մ, բեր շուտով, թէ չէ կանիծեմ,

Որդին դողալով զնաց, յետ բերեց չաւլունի թու-  
րը: Պաօչը կանչեց իր երկրորդ որդուն և ասաց  
նրան «Որդի, մեռնում եմ. վերջին կտակս ես յանձ-  
նում եմ քեզ, բայց մահիցս առաջ պիտի կատարես:  
Պատրաստ եմ, հայրիկ. վերջին կտակը ես կը-  
կատարեմ. տուր ինձ, թէ կուզնէս, չաւլունի թուրը,  
աշխարհք կըքանդեմ:

«Եյն, քեզ կըտամ չաւլունի թուրը, բայց լսիր,  
որդիս, աշխարհք մի քանդիր, այլ տար, Խաչլըւայ  
ծովակը ձգիր»:

Երկրորդը տարաւ չաւլունի թուրը. բայց հօրը խա-  
քեց, ծովը շըձգեց, այլ հօրից ծածուկ մի տեղ թաքցրեց:

«Որդի, ինչ արիր չաւլունի թուրը, ձգեցիր ծո-  
վը», հարցրեց հայրը:

— Այո՛, այո՛, հայր, չաւլունի թուրը տարայ ձգե-  
ցի Խաչլըւայ ծովը:

«Տեսար ինչ եղաւ Խաչլըւայ ծովը, երբոր ձգե-  
ցիր չաւլունի թուրը:

չայր, ոչինչ չեղաւ Խաչլըւայ ծովը, բայց ես  
ձգել եմ չաւլունի թուրը:

«Ո՛չ, սուտ ես խօսում, անարժան որդի, խարում  
ես հօրըդ. զնա՞մ. բեր շուտով, թէ չէ կանիծեմ, գլխիդ  
կըճաքի չաւլունի թուրը»:

Որդին դողալով զնաց, յետ բերեց չաւլունի թու-  
րը. Միւս որդկերանցն էլ կանչեց Պոօշը, բայց նրանք  
ամենքն էլ այնպէս վարւեցին, մինչև հերթը հասաւ  
ամենից փոքրին: Եկաւ և փոքրը: «Որդի, ասաց Պոօշը.  
գոնէ զու լսիր վերջին կտակս: չաւլունի թուրը յանձ-  
նում եմ ես քեզ, կտանես Խաչլըւայ ծով կըձգես».

— չայր, ես պատրաստ եմ, կուզնէս ես ինքս էլ  
նրա հետ ընկնեմ:

«Ո՞չ, դու մի ընկնիր, այլ միայն թուրը ծովը  
կըձգես և ինչ որ տեսնես, կըդաս ինձ կասես»:

Ուզբաթ էր օրը. թուրն առաւ որդին ու ծովը  
ձգեց: Բայց թէ ի՞նչ տեսաւ, ինչքան վախեցաւ, նա  
այսպէս պատմեց.

«Եէի մօտեցած դեռ ևս ծովին,  
Սբեն երկնքում երեսը ծածկեց,  
Մե ամպից իշաւ սատանի քամին,  
Խաւար և մռայլ աշխարհս պատեց,  
Մօտեցայ ծովին. ախ, մեր սիրուն ծով,  
Իր նախկին գոյնը այլաս չունէր,  
Ժանտ դէւի նման պղտոր ջրերով  
Մի անմեղ որսի կարծես սպասում էր:  
Ծովը ձգեցի չաւլունի թուրը՝  
Յանկարծ մի գոռոց ծովի յատակից,  
Մեծ իրարանցում ծովի խորեզում,  
Ահեղ արձագանդ ձայնեց երկնքից,  
Ջրերը լեռնացան ու իրաը անցան,  
Երկինք էր հասնում ծովի փրփուրը.  
Յանկարծ Խաշլըւան բացեց իր բերան,  
Դէւի պէս կլանեց չաւլունի թուրը:  
Ահեղ փոթորիկ, աղմուկ, որոտում,  
Թէ ծովին նայես և թէ երկնքին,  
Իրաը են խառնել. դողում է աշխարհ.  
Ես էլ վախեցայ և ընկայ գետնին:  
Կըկին նայեցի, ոչինչ չըտեսայ.  
Խաւար մռայլը աշխարհս էր պատել.  
Սմայք, ալիքներ իրաը վրայ դիզւած,  
Երկինքը երկրի հետ էր միացել.

Ծովի խորեզից բիւրաւոր ձայներ  
Խառնիխուռն և խուլ որոտում էին,  
Կարծես բիւրաւոր բաշերի գնդեր  
Ծովի յատակում մարտնչում էին:  
Հայրիկ, դողում եմ, էլ մի յիշեցնիր,  
Չեմ կարող պատմել ես իմ լիզւովը,  
Հայրիկ, սարսում եմ, էլ մի հարցնիր,  
Թէ ինչեր արաւ Խաշլըւայ ծովը»:  
— «Այն, այդպէս է. առ իմ օրհնութիւն,  
Լաթար քաղաքս էլ քեզ ժառանգութիւն  
Սաց Պոօշը և աչքը խփեց,  
Եւ իսկոյն և եթ հոգին աւանդեց:

Ընցան տարիներ ու դարեր անհետ,  
Աշխարհիս վրայ շատ բան փոխւեցաւ,  
Պոօշի աւանդն էլ նըրա մահից յետ  
Երկրիս երեսից շուտ անհետացաւ:  
Բայց ժողովրդի մտքից չի կորել  
Հաւլունի թրի վառ պատմութիւնը.  
Նա ողերած պատմում է դեռ էլ  
Պոօշ թագաւորի աւանդութիւնը:  
Նա ցոյց է տալիս մի աւեր աւան,  
Ասում է. «Այստեղ էր Պոօշը կենում,  
Այս Լաթար քաղքից առիւծի նման  
Շրջակայ աղգաց սարսափ էր աղդում»:  
Նա ցոյց է տալիս մի պղտոր լճակ,  
Ասում է. «Սա է Խաշլըւայ ծովը.  
Սա չէ, ասում է, մի ծով հասարակ,  
Այստեղ է թագաւծ չաւլունի թուրը»:  
Թէ հարցնես նըրան իբրև կարեկից,  
«Ինչո՞ւ է պղտոր ձեր ծովի ջուրը».

Կասէ. «Այսպէս է եղած այն օրից:  
Երբ այստեղ ընկաւ չաւլունի թուրը»:  
Նա քեզ կըպատմէ, թէ ամեն ուբբաթ  
Խաշլըւայ ծովը փսփրում է, կատղում,  
Իրար են զարկում ջրեր լեռնացած,  
ծովի յատակից ձայներ են լսում...

Երբոր Պոօշի փոքրահաս որդին  
Տանում էր ծովը չաւլունի թուրը,  
Դեռ չէր մօտեցնէ նա ծովի ափին,  
Երբ իրար անցան ծովի քաջերը:  
Կորիւ, կոտորած ընկաւ նրանց մէջ,  
Սուրն ընկղմւեցաւ Խաշլըւայ խորը.  
Ահեղ կոտորած, բայց ոչ ոք յաղթեց  
Եւ անտէր մնաց չաւլունի թուրը:  
Ահա այն օրից ամենայն ուբբաթ,  
Խաշլըւայ ծովը փսփրում է, կատղում,  
Իրար են զարկում ջրեր լեռնացած,  
ծովի յատակից ձայներ են լսում...

Այդ հին կորիւն է կըկին նորոգուում,  
Կըկին ընկնում են իրար վրայ քաջեր.  
Անցնում են զարեր, կուում են, կուում,  
Բայց չաւլունի թըրին շեն կարում տիրել:

Բայց Պոօշ արքան սուրը կախարդեց,  
Երբոր ցամաքի ծովակի ջուրը.  
Աստուծոյ կամքով մի քաջ կըծնի,  
Վըհանէ լըճից չաւլունի թուրը:

## ԵՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՍԱՐԴԻՆ ՈՒ ՇԵՐԱՄՄՀ Առաջ թէ առան  
Ջերամը մետաքս էր շինում և գոյնզգոյն կոկոն-  
ները կախկախում կաղնու թարմ ոստերից կապած  
Խուրձի վրայ, իսկ սարդը տան մի անկիւնը քաշւած՝  
Եր ցանցն էր հիւսում և ծիծաղում շերամի վրայ, ասելով.

— Ջերամ եղբայր, զու շատ դանդաղ ես տանում  
Քո գործը և շինածըդ էլ մի բանի նման չէ. բայց  
Էս, նայի՞ր, տես ի՞նչ գեղեցիկ բան եմ շինել, և  
տես ինչքան երկար են իմ թելերը:

Ջերամը պատասխանեց. — Սարդ եղբայր, զու  
Գիտես ինչ կըհշանակէ բարութիւն:

— Ո՛չ, չըգիտեմ:

— Այդ նրանից է, որ զու շար ես, քո գործն էլ  
շարութեան գործ է: Դու քո երկայն թելերով մի  
թակարդ ես ցանցում, որ անմիտ ճանճերին որսաս և  
ծծես նրանց արիւնը, իսկ իմ գործը բոլորովին ուրիշ  
բան է, սարդի ընութիւնից և խելքից վեր է:

Ջերամն ու մեղուն են բարութեան նշան,  
իսկ սարդն ու բրէտը նշան շարութեան.  
Քնքոյց շերամի պէս եղիր անաբատ,  
Թէկուզ շար սարդերը ծիծաղին վըրադ:

ԱՐՁԸ ԵՒ ՄԵՂՈՒՆ

Անտառի խորքում մեղուն իր համար մի փուշ ծառի մէջ՝ ինչպէս փեթակում, մի բոյն էր շինել, մէջը ձագ հանել և անուշ մեղրով բճիճը լցրել:

Հըգիտեմ ինչպէս, մի օք արջուկը առաւ այդ մեղրի անուշիկ հոտը. մըրթմըրթաց, վրնթվլնթաց, ծառնի վեր կանգնեց և թանթունեը ծառի մէջ կոխեց.

Մեղուն տպտղաց, տպտղացին ձագեր, արջը չը քաշեց իր բրդոտ թաթեր, ողջ բունը քանդեց, ձագերը չարդեց, խորիսխը հանեց, լափեց, լափլրփեց: Մեղուն որ տեսաւ իր ձագուկներն այս անգութ արջի ոտքի տակ ճգմւած, դռոաց, դրդրոաց, խալթեց արջի աշք, և ինքն էւ անշունչ ընկաւ ծառի տակ:

ԱՉԻՀՍ ԵՒ ԱՉԱԽՆԻ

Աղէսը մի աղաւնի տեսաւ ծառի վրայ, գնաց ծառի տակը և դունչը վեր ցըցելով ասաց. — Բարե քեզ, իմ աղաւնեակ, իմ սրտակից բարերոնք, լաւ են, ինչո՞ւ ես մենակ մնացել. Զայնդ հեռւից կամ. ինչպէս ես, լաւ ես, առողջ ես. ինչպէս են ձեւեցի, իսկոյն իմացայ որ դու ես, ասեցի՝ մէկ գնամ

տեսնեմ բարեկամիս, շատ ժամանակ է չեմ տեսել: Աղաւնին պատասխանեց. — Ճնորհակալ եւ աղէսը պարոն, որ ինձ չես մոռացել, թէպէտ իմ միտո չէ, թէ մենք երբ ենք բարեկամ երել. շատ ժամանակ է էլ այս կողմներումը չէիր երնում, ես էլ հէնց իմաց, թէ դու սատկել ես արդէն:

Աղէսն այնպէս ձեացաւ, որ իբր թէ չի լսում աղաւնու ասածը, և ասաց նըան. — Ի՞նչ ես ասում, հոգիս, ձայնդ ականջս չի համնում, չեմ իմանում, ինչո՞ւ չես ցած դալիս: Եկ այս սիրուն կանաչկոտ տեղը մենք կը պատասխանենք, եթէ ոչ՝ դու ծառի վրայ, ես գետնին, ինչպէս իմանանք մէկմէկու:

Աղաւնին պատասխանեց. — Զեմ կարող իշնել վախենում եմ. թռչունների համար գետնի վրայ ման գալը երկիւղալիք:

— 2ըլինի թէ ինձնից ես վախենում, ախ, ինչ եմ ասում ես էլ, այդ ինչպէս կարելի է: — Ոչ, միայն դու խօմ չես, միթէ ուրիշ գաղանաներ քիչ կան:

— Ճշմարիտ է, կան, բայց հիմա հրաման է զուրս եկել, որ էլ այսուհետեւ ոչ մէկը միւսին մի վնաս չըտայ: Հիմա գաղանները էլ իրաւունք չունին շարութիւն անելու, և չեն անում:

Մի՛ — թէ... այդ ի՞նչ լաւ է եղել: Ես էլ զարմացայ, թէ այս ինչիցն է, որ մեր աղէսը էլ չի վախենում չներից, որ ահա գալիս են վազելով:

Ճների անունը որ լսեց աղէսը, զանը զող ընկաւ. սլոշը ներս քաշեց, ականջները սրեց և փախչելու պատրաստւեց: Աղաւնին այս ըանը նկատելով ասաց. «Ի՞նչու ես շտապում, բարեկամ, սպասիր, զեռ խօսում ենք. փառք Աստուծոյ, հիմա խօմ հրաման կայ, չներիցն էլ ահ չունիս»:

— Ե՞ն, ով գիտէ, կարելի է թէ չները դեռ չեն լսել որ հրաման է զուրս եկել, որ էլ չնութիւն շահնեն, ասաց աղէսն ու շուտով փախտ, որ չների ճանկը չընկնի:

ԹԱՅԼԵՐԻ ԺԱԳՈՒՄՐԸ

(Առասպեկտ)

Մեղանից շատ ու շատ տարի առաջ բոլոր մարդիկը շատ բախտաւոր էին: Նրանք անարատ մանուկների պէս անմեղ էին և միշտ ուրախ ու զբարթ: Եյս այն ժամանակն էր, երբ, ինչպէս ասում են՝ գառն ու գայլը միասին էին արածում: Եւ ճշմարիտ որ՝ ամեհի գազաններն ու խեղճ կենդանիքը դունչ դնչի, բերան բերնի դրած՝ իրար լիզում, լրպատում էին: Առիւծը կովի հորթին էր ծիծ տալիս, կատուն մըկներին փայփայում, կերակրում:

Հրճում էին մարդիկ և խնդում,  
Ուրախ ու զբարթ ամեն կողմ վազում,  
Ոչ մի կենդանի, ոչ մի արարած  
Վախ ամեննեին էլ չէին ըզգում...

Մինչդեռ ամենքն էլ ահա այսպէս ուրախ և երշանիկ էին, մէկ օր էլ չար ոգին մանում է երկու շների մէջ, որոնցից մէկը քած է լինում և միւսը որձ, և դրանք խօսք-մէկ են անում և յարձակում մի անմեղ դառան վրայ, նրան պատառ-պատառ անում, լափում, և արիւնոտ կզակներով գնում են մեր նախօր առջել կանգնում, իբր թէ ոչ մի չար բան չն արած: Մեր նախահայրը որ տեսնում է նրանց, իսկոյն իմանում է նրանց արած չարութիւնը, ահիւն թափեցիք: Եյս ասելն ու այն երկու շների դայլ դառնալը մէկ է լինում:

Այնուհետև նրանց աքսորում է դէպի անտառները և միւս շներին պատւիրում, որ միշտ հալածեն նրանց: Այս է պատճառը, որ գայլերը թէպէտ շան նման են, բայց չուն չեն, այլ վայրենի, անգութ և ագան գաղաններ են:

ՀՈՒՄՆԱՀԱՅ

— Հայրիկ, ինչու մեր հօղարը, որ սրբանի Միշտ հաշում է լուսնի վըրան, Միթէ պայծառ լուսնեակը, Մէկ վնաս է տալիս նըրան: — «Ո՞չ, որդեակ իմ, ոչ թէ վնաս, Ելլ լոյս, միայն լոյս է տալիս, իսկ շանն-իբրեւ գայլի ցեղի — Լոյս գիշերը դիւր չի գալիս, Բայց լուսինը խօսմ չըգիտէ, Որ իբ վըրայ հաշողներ կան, նա լուռ ու մունչ, բակ բոլորած, Շարունակում է իբ ճանապան. Մենք էլ, որդեակ, լուսնի նման Պէտք է լոյս տանք մութ աշխարհին, Եւ համարենք, թէ չենք լսում Մեր վըրայ գուր հաշողներին»:

Սկիւար, ծառի վըրայ թաշկոտելիս, յանկարծ վայլ ընկաւ մի գայլի վըրայ, որ քնած էր ծառի տակին:

Գայլը վեր թռաւ, բռնեց սկիւռին և ուզեց ուտել:  
Սկիւռն աղաշանք արաւ, որ իրան բաց թռողնէ: «Թող  
ինձ, ասաց, գայլ եղբայր, ինչ ուզենաս, քեզ կըտամ:  
Գայլն ասաց.—Ճատ լաւ, քեզ կըթողնեմ, եթէ  
ինձ կասես: Թէ պատճառն ինչ է, որ ես միշտ տխուր  
եմ, միշտ դարդոտ, իսկ դուք, սկիւռները, միշտ ու-  
րախ էք, միշտ զըւարթ, և շարունակ թռչկոտում էք  
ծառերի վրայ և խաղում:

Սկիւռն ասաց.—Առաջ թռող ինձ ելնեմ ծառը,  
այնտեղից կըտամ քո պատասխանը:

Գայլը բաց թռողեց: Սկիւռը վեր ելաւ ծառը և  
այնտեղից ասաց գայլին:—Քո տխրութիւնը նըանից  
է, որ դու չար ես. շարերն ուրախութիւն չունին:  
Իսկ մենք ուրախ ենք միշտ նըա համար որ բարի  
ենք. ոչ սքի վատութիւն չենք անում:

Գայլը շատ բարկացաւ և շարութիւնիցն ուզում  
էր կատաղել. բայց էլ ինչ կարող էր անել. սկիւռը  
ծառի վրայ էր և գայլից շատ բարձր:

### ԴԱԲԻՆ ՈՒ ԴԱՅԼՀ

Հնուց մնացած մի լաւ առակ կայ և շատ ուղիղ  
է, Աստուած է վկայ, որ հզօրի դէմ, թէն մեղաւոր,  
անզօր արդարն է լինում յանցաւոր:

Այսպէս մէկ անդամ շողից նեղացած, հօտից մո-  
լորած, մի ծարաւ գառնուկ խայտալով վագեց դէպի  
ինչ զովանայ, վազէ տուն զնայ:

Այդ իսկ ըստէին, որտեղից որտեղ, մի գայլ դուրս  
պլծաւ և կամաց կամաց, սուս փուս, դողի պէս, շան

կերպ արսնքով, ադառին մօտեցաւ: Ի՞նչ ասել կուզի,  
թէ ինչու համար, քաղցած գազան, փափլիկ գաւ-  
նուկ, կառնէր կըտանէր և անուշ կանէր: Բայց չը-  
տարաւ: Զլգիտեմ որտեղ՝ մեր ծաղկաթաւալն ուսում  
էր ասել, օրէնք սովորել. ուզեց իր գործը իսեղն  
գառնուկի հետ օրէնքով տեսնել, որպէսզի շասեն, թէ  
գառն արդար էր, գայլը՝ մեղաւոր: Բայց ինչ էլ լի-  
նէր, գարձեալ գազան էր, կոպիտ բաւական, հետք  
չըկար վրան ուսման, կըթութեան, ինչպէս կըտեսնէր  
նրա խօսելից, վարւելու ձեից:

—Եւ դու անպիտան, կենդանի անբան,—ասում  
է գառին գայլն ուսումնական, —ի՞նչ իրաւունքով և ո՞ր  
օրէնքով համարձակւել ես իմ մաքուր ջուրը, պարզ  
խմելիքը քո պիղծ բերանով այսպէս պղտորել աւա-  
զով, ցեխով և հազար տեսակ աղբ ու զիբիլով: Քո  
այդպահնդուզն շարութեան համար գիտես ինչպիսի  
պատիժ կայ զբւած:

—Վսեմափայլ տէր, ասում է գառը, ես գիբ չը-  
պիտեմ, բայց թէ թոյլ կըտաս այսքանը կասեմ, որ  
ջուրը ցածից վերև չի գնալ, դու էլ կիմանաս:

—Ի՞նչ ես գուրս տալիս, ես շեմ հասկանում.  
Ջուրը ներքեկց վերև չի գնալ, այդ մի շըգիտէ, էլ  
ասելդ ինչ է:

—Իմ ասեն այն է, Վսեմափայլ տէր, որ դու վե-  
րեից եկար դէպի ինձ: Այդ էլ որ շատենք, հէնց ջրին  
նայենք, շատ լաւ կըտեսնենք, թէ ինչքան պարզ է,  
ինչքան մաքուր է: Զուր է, նշմարիտ, քո բարկութիւնը:

—Տեսէր, մէկ տեսէր այս ըստահակին, սրա տ-  
սած ին: Համարձակում ես, կենդանի անբան, տալ ինձ

պատասխան։ Քո իսելքով ուրեմն ես սուտ եմ իսօսում, շառ եմ հնարում։ Ես լաւ եմ յիշում և չեմ մոռացել, որ մէկէլ տարին էլի դու էլը, որ յանդզնեցար, ինձ ընդդիմացար, և հայնոյելով այստեղից փախար, ձեռքիցը պըճար։

— Ա՛խ, ի՞նչ ես ասում, տէր իմ պատւական, գեռ ես չըկամ ես մէկ տարեկան։

— Ուրեմն եղբայրդ էր. էլ ով կըլինէր այնքան քեղնման, քեզ պէս անպիտան։

— Ողորմած տէր իմ, ես եղբայր չունիմ։

— Ինձ համար մէկ է, ով կուզի լինի. մըթէսուր չունիս քաւոր, ինամի. Մէկ խօսքով նա ձեր յիմար ցեղիցն էր. Դուք, ձեր չները, ձեր հովիւները, ինձ չսիրելով, իմ շարն ուզելով, երբ որ կարենաք, միշտ վնաս կըտաք։ Այդ մեղքի համար, ես հիմա գիտեմ, թէ քեղն ինչ կանիմ։

— Ա՛խ, Աստած իմ, Աստած. — Պառն աղաղակեց — ի՞նչ է իմ մեղքը, սա չըհաստատեց. . . Վասմափայլ տէր, ողորմած եղիր, ես մեղաւոր չեմ. . .

— Լոյիր, անպիտան, ոչխարի լակոտ, իմ բան ու գործս խօմ չի կտրւել, որ բո մեղքերդ ըսկանմ քննել։ Եկ գնանք անտառ, ես այնտեղ կանեմ քո դատաստանը. — ասաց գաղանը, և մեր գառնուկին դրաւ շալակին. . .

ԲԱԶԵՆ ԵՀ ԱՂԱԽՆԻՆ

Գիշատիչ բաղէն իր սուր ճանկերում

Բըռնած՝ աղաւնուն պատառուում էր.

«Հը, ճանկը ընկար. զուր ես աշխատում

Գրծնիլ իմ ձեռքից, զուր այդ հսարքներ։ Խարեբայ, ես ձեղ լաւ կմ ճանաշում,

չայնոյիշներ էք, խորամանկ օձեր.

Չեր ցեղը միշտ մեր արիւնն է խմում, Դուք էք մշտական մեր թշնամիները. Բայց կան աստուածներ վրէժխնդրութեան, նրանք ամենքին կանեն դատաստան։

— Ա՛խ, ուր էր, թէ այդպէս լինէր։ Չարագործներին խստութեամբ պատժէր».

Հազիւ հառաջեց աղաւնին մարած, Սուր-սուր ճանկերում սաստիկ սխմըւած,

«Ի՞նչպէս, ի՞նչպէս, այդ ի՞նչ ասացիր, Ա՛խ զու ուրացնկ, մի մէկ էլ կըկնի՛ր,

Դու չես հաւատում, հա՞ աստւածներին, Նախախնամութեան այն հզօր ուժին։

Է՛հ, ուզում էի ազատել ես քեզ, Բայց, չէ, տեսնում եմ, զու արժանի չես, Ուրեմն մեռիր, զուր է փրկութիւն,

Յնաստւածներին չկայ թողութիւն։

Երեր եղը միասին դաշտում արածում էին. Եղաներից մէկն սպիտակ էր, մէկը կարմիր և մէկը սև.

Մէկ օր մի քաղցած գայլ, մօտեցաւ սրանց և ուզում էր մէկին կամ միւսին վիրաւորել, բայց եղները

քամակի տրւին, ցոյց տրւին գայլին իրանց սրածայր պօզերը. Գայլը տեսաւ որ եղներին ոչ մի

վնաս չի կարող տալ, քանի որ նրանց մէջ միութիւն կայ, մտածեց երկպառակութիւն ձգել մէջները, միմենանցից բաժանել, որ կարողանայ ամեն մէկին ջոկ յաղթել։

— Բարով ձեզ, բարեկամննր, ասաց գայլը, ես չեմ  
եկել ձեզ մի վնաս տալու, ձեր պողերն ինչու էք իմ  
դէմ բռնում: Ես էլ ձեզ պէս շորս ոտն ունիմ, երկու  
ականջ, երկու աչք, մի պոչ, մի բերան, մի գլուխ.  
միթէ կարելի բան է, որ նմանը նմանին մի վնաս  
տայ: Բացի սրանից, դուք սուր սուր պօղեր ունիք,  
ես շունիմ. ձեզանից ամեն մէկը մի դէւ է ահագին,  
իսկ ես ձեր հորթի չափ էլ չըկամ: Համարեցէք թէ  
ես ձեր պահապան շունն եմ, թողէք ձեզ մօտ կենամ,  
ձեզ հետ արածեմ, երեք շըլինինք՝ շորս լինինք, ինչ  
վնաս ունի:

Գայլի այս խօսքերի վրայ եզները միամտւեցան  
և մի քիչ էլ վփեցան իրանց պօղերովը, մանաւանդ  
երբ տեսան, որ գայլն էլ է արածում: Բայց գայլի  
փոքը ցաւում էր, նրա համար էր արածում, և այն  
էլ ոչ թէ արածում էր, այլ խոտերը պոկում, էլ ետ  
վեր էր ածում, և եզներին խարելու համար ցոյց էր  
տալիս, որ իրը թէ նրանց նման արածում է:

Վերջը, երբ սպիտակ եզը մի կողմ քաշւեց և սեն  
ու կարմիր միւս կողմը, գայլը մօտեցաւ ջուխտ եզնե-  
րին և փափսաց նրանց ականջին.— Բարեկամներ, դուք  
երկար չէք կարող այս կանաչ խոտումն արածել.  
Սպիտակ եզն իր գոյնովը ձեզ փորձանքի մէջ կըձգի:  
Դուք ձեր գոյնովը ցերեկն էլ չէք երևում, իսկ սպի-  
տակը գիշերն էլ է լոյս տալիս ճրագի նման: Ծաղ-  
կակոխները (ուզում է ասել գայլերը) շուտ կըտեսնեն  
նրան և կըգան: Նրա պատճառով դուք էլ կընկնիք  
փորձանքի մէջ և կըպատժւիք:

— Բօ—բօ—բա—բա, զոշեցին եզները, միաբե-  
րան, որով ուզում էին ասել միթէ ճշմարիտ ևս ասում:

— Ի հարկէ, ասաց գայլը, ես ինչ օգուտ ունիմ  
սուտ ասելու, ես ձեր լաւութիւնն եմ ուզում, երդում  
եմ ձեր ամենազօր պօղերովը, որ սուտ չեմ ասում:

— Մա—մա, —մու —մու, ասացին եզները. այսինքն  
ինչ անենք ուրեմն, որ ազատւինք այդ փորձանքից:

— Ոչինչ հարկաւոր չէ, ասաց գայլը, դուք ձեզ հա-  
մար արածեցէք այստեղ, ես կազմատեմ ձեզ նրանից:

Եզները կամք տրւին, և գայլը գնաց սպիտակի  
բկիցը բռնեց: Սպիտակն իր օրհասական զոռոցով և  
բղբղոցով միւսներին օգնութեան կանչեց, թէ եկէք, եղ-  
բայրք, օգնեցէք, սա գայլ է մէկ օր էլ ձեր բկին կը-  
չոփի իսկ սեն ու կարմիրը նրան չօգնեցին այլ ուրախա-  
նալով ասացին—Քո հախն է, անպիտան, ինչու գու  
սպիտակ ես և ոչ մեզ պէս կարմիր կամ սե. դու քո  
անպիտան գոյնովդ մեզ էլ պիտի կրակի մէջ դցէիր:

Գայլը երբոր հատացրեց Սպիտակի միսը և նորից  
քաղցեց, մէկ օր էլ մօտեցաւ Սեին և փսփսաց ական-  
ջին.— Գիտես ինչ կայ. ես անցեալ անգամ քիզ ոչինչ  
չասացի, որովհետեւ Կարմիրը մօտըդ էր. բայց հիմա  
սպարտք եմ համարում ասել, որ կարմիր գոյնը նոյքան  
մինասակար է, ինչքան և սպիտակը: Միայն քո գոյնն է  
շահաւէտ, որ ոչ ցերեկն է երեսում և ոչ գիշերը: Եկ ինձ  
լսիք և թող կարմիրցն ազատեմ քեզ: Այնուհետեւ գու  
մենակ կարածես, նրա բաժին խոտն էլ քեզ կըմնայ:

Սեուկը կամք տրւաւ. գայլը գնաց Կարմիրի բկիցը  
բռնեց: Կարմիրն ազատակեց և Սեուկին օգնութեան  
կանչեց՝ ասելով.

— Արի, օգնիք ինձ, սպանենք այս կեղծաւորին,  
թէ չէ՝ մէկ օր էլ քո բկին կըշոքի:

Սկուկը հեռու կանգնած, փորին ուղցրած, պօզե-  
թը չալիտախ արած, տեսնում է իր ընկերոջ մահը և  
ուրախանալով՝ ասում.—Քո հախն է. ինչու դու էլ  
ինձ պէս սկ չես. քո անպիտան կարմիր գոյնովլոդ  
ինձ էլ պիտի կրակի մէջ գցէիր։ Այսուհետեւ քո բա-  
ժին խոտն էլ ինձ կըմնայ, ես մենակ կուտեմ և ա-  
ւելի կըդիքանամ։

Մի քանի օրից յետոյ անկուշտ դայլը Պարմը  
միսը հատացըել էր և կրկին քաղցել։ Մօտեցաւ Սկու-  
կին և ասաց.

— Բարեկամ, ախորժակս բացմէլ է. էլի միս է  
ուզում սիրտըս։ Ասում են՝ եթէ ատամներդ սկ եղան  
կաշւին քսես, իսկոյն կըկշտանաս, էլ քո օրումը չես  
քաղցիլ։ Մտածեցի, որ սրանից լաւ բան էլ ինչ կը-  
լինի։ Կերթամ, ասացի, ատամներս մեր Սկուկի կաշ-  
ւին կըքսեմ և կըկշտանամ, նա էլ այնուհետեւ էլ եր-  
կիւղ չի ունենալ ինձանից, և մենք աւելի սիրով  
կապընք։

— Իօ՞— հօ՞մ— հօ՞մ, ասաց Սկուկը, որ կընշանալէ,  
թէ—այդ ինչ լաւ բան են ասել։ Ճշմարիտ որ միշտ կաս-

կածով եմ նայում քեզ վրայ, բայց որ կուշտ կըլինիս,  
կաշին, ատամներդ վրան քսիր, ինչքան կամենում ես։

— Ճնորհակալ եմ, բարեկամ, շատ շնորհակալ, որ  
այդքան բարի ես. միայն խնդրում եմ, որ մի ըոալէ աշ-  
քերըդ վիակես, եթէ ոչ կաշիդ չի ազգիլ ատամներիս  
Սկուկն աչքերը վիակեց և մինչև այսօր դիս

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ  
Երկու ընկերներ իրիկնապահին  
Հրացան առած՝ անտառ դնացին։  
Որ մէկ քան, որսան,  
Չուտով յետ դառնան։  
Յանկարծ անտառից մի արջ դուրս ալրծաւ  
Ու կատաղութեամբ նրանց վրայ վագեց,  
Մէկն շտապելով ծառը բարձրացաւ,  
Միւսն անճարացած գետնի վրայ պառկեց,  
Չունչն իրան քաշեց  
Ու անշարժ մնաց,  
Որ արջը կարծէ,  
Թէ նա մեռած է։  
Եղջը մրոռալով մօտեցաւ նըրան,  
Ականջը կամաց դրեց բերնի վրան,  
Ականջ դրեց,  
Հոտ քաշեց։  
Ակրչապէս նրան մեռած կարծելով,  
Հետացաւ գնաց՝ զունչը լիզելով.  
Փախած ընկերը ծառիցն իշաւ ցած,  
Բնկերին հարցրեց, թէ արջն ինչ ասաց։  
— Երջն ինձ պատիրեց, որ ես միւս անդամ  
Քեզ պէս մարդու հետ որսի շըզնամ,  
Որ միզ մի վտանգ, բան պատահելիս  
Մենակ շըթողնես ու ինքդ փախչիս...

ԺԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՑԻՆԲ  
Ծառերն անսպառում երբ շատ նեղացան կացնի  
Ճեռիցն, ու էլ շիմացան, թէ ինչ անեն, որ իրանց

Պլուխը պահեն, խորհուրդ արին, որ մի հնար գտնեն.  
 «Կացինն ով է, կամ ինչ է, որ մեզ կարենայ  
 զոռ անել, յաղթել, ինչ մեծ բան է նառ. այսպէս  
 ձայն տւաւ ծառերից մէկը. ամենք որ կոթ չըտանք,  
 կացինն ինչ է որ յանդզնի անել մեզ կտոր-կտոր»:  
 Ով որ կոթ կըտայ պողւատի կացնին,  
 Թող «հոգւոցն» ասէ առաջ իր անձին:

ԾԱԽԱՀԵԼ

(Հերիար)

Չատ հին ժամանակ մի թագաւոր կար,  
 Զօրեղ իմաստուն ու շատ էլ արդար:  
 Դա որ ծերացաւ, մօտեցաւ մահւան,  
 Չըգիտէր, թէ ով կըյաջորդէ իրան:  
 Թէպէտ նա ունէր տասներկու որդի,  
 Բայց չը իմանում, թէ որին ընտրի:  
 Մեծը ուժով էր, բայց անզութ ու չար,  
 Նըրանից փոքրը՝ թոյլ և ցաւագար,  
 Երրորդը՝ անհոգ ու խելքից պակաս,  
 Չորրորդը՝ անմիտ, թէս անվնաս:  
 Եյսպէս՝ ոչ մէկը հօր սրտովը չէր,  
 Ոչ մէկը իրա բնոյթը չունէր:  
 Միայն մի քիշ յոյս կըտսերն էր տալիս.  
 Նայց նա էլ հօր մօտ չէր գնում, գալիս,  
 Եյդ պատճառով էլ հայրը շըգիտէր,  
 Թէ արդեօք նա ինչ չնորհքի տէր էր:  
 Թափաւորն այսպէս շատ որ մտածեց,  
 Հանելուկի պէս մի բան հնարեց.

Մի թարմ ցախաւել իր առջև դրած՝  
 Որդոցը կանչեց և նըանց ասաց.  
 «Սիրելիք, այսօր ես ձեզ կանչել եմ,  
 Որ վերջին կամքս ամենքիդ յայտնեմ,  
 Ինչպէս տեսնում էք, ես ծերացել եմ,  
 Եւ բաւական է որքան ապրել եմ.  
 Չուզով իմ նախնեաց ճանպովը կերթամ,  
 Նըանց պէս ես էլ սկ հող կըդառնամ.  
 Բայց քանի ողջ եմ, շունչս բերնումը.  
 Կուզեմ ձեզ յայտնել ինչ կայ մտքումը՝  
 Ըհա ձեր առջև մի նոր ցախաւել,  
 Որ ես հինց այսօր կապել եմ տրւել.  
 Զեղանից ով որ կըկոտըէ սըրան,  
 Իմ թագն ու գահը ես նըրան կըտամ.  
 Դէս անդ եկէր, ուժերդ փորձեցէր,  
 Տիսնեմ ձեզանից որըդ կըկոտըէր»...

Институт  
ВОСТОЧНОЕ СЕДЕННИЯ  
Академии Наук  
СССР

— Հայր, ես կըկոտեմ, ասաց մեծ որդին,  
 Եւ վստահութեամբ մօտեցաւ աւլին.  
 Վերցրեց աւելն ու ծունկը կալաւ,  
 Քաշեց, քաշքաց, ոչինչ չի եղաւ.  
 Չատ քրտինք թափեց, շատ չարչարեցաւ,  
 Դեղնեց, սփրթնեց և յետ քաշւեցաւ:  
 Յետոյ երկրորդը եկաւ, վեր առաւ,  
 Նա էլ իր եղբօր դառն օրին հասաւ,  
 Երըրդն էլ եկաւ, իր ուժը փորձեց,  
 Բաւական տանջանք չորրորդն էլ կրեց.  
 Միւսներն էլ իրանց բախտը փորձեցին,  
 Բայց ցախաւելը չի էլ ծռեցին.

Ամենից վերջը փոքրը մօտեցաւ  
Եւ իր հօր առաջեւ այսպէս խօսեցաւ.

— Հայր, Ես չեմ ուզում իմ ուժը վորձել,  
Իմ եղբարց նման իզուր շարշարւել,  
Ես երեխայ չեմ, որ ձեռքս մեկնեմ  
Դէպի լուսինը, որ նրան բռնեմ.  
Քուրը կըխեղդէ, կըակը կայրէ,  
Ով այս ըրդիտէ՝ թող ինքը փորձէ:  
Ես ոյժ տեսնում եմ ամենայն բանում  
Թէ երկրիս վրայ և թէ երկնքում:  
Առ մի բարակ ծեղ, մի մազ կամ մի թել,  
Մեծ ուժ կըգտնես ամենի մէջ էլ.  
Թէ փոքրիկ միջատ, թէ ուզու ահապին,  
Ամենքն էլ ուժից մէկ բաժին ունին:  
Կայ և խելքի ուժ, ինչպէս և սըտի,  
Եշքի, ականջի, ձեռքի և ոտքի,  
Ուսերն ու մէջքն էլ պակաս ուժով չեն,  
Բայց զբանք թոյլ են, թէ միացած չեն.  
Ուժով չի լինի ոչ մի առարկայ,  
Եթէ մասներում միութիւն չըկայ,  
Մասերն իրար հետ ելք սերտ կապ ունին,  
Այդպիսով միայն ուժով կըլինին.  
Այսպէս շատ անհատ երբ որ միանան,  
Մեծ և շափականց մեծ ոյժ կըստանան:  
Մեզ լաւ օրինակ մըջիմն ու մեղուն,  
Թէ նրանք խմբով ինչեր են անում,  
Նրանց պէս եթէ մարդիկ միանան,  
Լեռներ կըշընեն՝ եթէ կամենան.

Եւ ինչքան լճեր, ինչքան ջրանցքներ  
Միացած ուժով կարող են շինել:  
Ես քո տէրութեան ցըւած ուժերը,  
Ինչպէս ցախաւլիդ ճկուն ճղները,  
Ամուր կապերով կապած կըպահեմ.  
Այս է քո միտքըդ, ես ինչքան գիտեմ.  
Բայց որ ասածըս լաւ հասկացնեմ,  
Տեսէք՝ աւելը ինչպէս կըկոտրեմ:  
Եւ այս ասելով՝ նա վեր է առնում,  
Աւլի կապերը քանդում, արձակում.  
Ճկուն ճղները վերցնում է հատ-հատ,  
Ամենի առջև կոտրատում, չարդում:

— Ապրիս, իմ որդի, ասում է հայրը.  
Քեզ է արժանի իմ թազն ու գահը:  
Գրկում է որդուն, ճակատից պաշում,  
Եւ թազն իր ձեռքով գլխին է գնում:  
«Տեսէք, ասում է միւս եղբայրներին:  
Գուք շընախանձիք ձեր եղբօր փառքին.  
Եթէ սրա հետ սերտ սիրով մնաք,  
Աւելի մեծ ոյժ և փառք կըստանաք,  
Իսկ եթէ զատուիք և զոկ-ջոկ լինիք,  
Քանդւած աւլի պէս շուտ կըկոտրատուիք:  
— Մենք հնազանդ ենք, ասում են նրանք՝  
Տալով եղբօրը պատիւ և յարգանք:  
Իմաստուն որդին հասաւ մուրազին,  
Գուք նոյնպէս հասնիք ձեր մուրազներին:

3 U h b L h u d

# ԱՐԵՎԱՏՅԱՆ

4 U U

## ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

## Նըւեր հայ մանուկներին

Ինքնուիրութն եհ ԱԶԱՏ՝ ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՐ

մայց ոյ պահու ոյլ նումք զգըսի Խոտեսմ զէ  
ունօքար զըստ թայ դիմեցիոն մայիսայական զիրիսա-  
ւո ոյ սրբ շնչու միանձ քա միավե չո զիանելուոքը  
ունք ոյ և Խոտեսմ զէ մայր ունք ոյ մայր

**Ե**ատ հին ժամանակ, երբ աշխարհը լիքն էր հրա-  
շըներով և երբ բարի ու չար Ովիներն անընդհատ պա-  
տերազմ էին մղում իրար գէմ, այդ ժամանակ Մասիսի  
ստորատում կենում էր մի ծերունի իշխան՝ Արման անու-  
նով:

Սրմանն ունէր երեք զաւակ, մօրից որբ մնացած՝  
Նրանցից երկուսն աղջիկ էին մինը քան զմիւսը գեղե-  
ցիկ, իսկ երրորդն աւելի ևս չքնաղ և չնաշխարհիկ, մի-  
տյն բարի Ոգիները նրա ինչ լինելը Ժաքցրել էին հողե-  
ղիներից։ Սյդպէս էին կամեցել բարի Ոգիներն իրանց  
համար յայտնի, նպատակով և մի որոշ ժամանակով։ Եր-  
բոր ժամանակը լրանար, նրա տղայ կամ աղջիկ լինելն  
այն ժամանակը պիտի յայտնւէր։ Բայց Արմանը նրան չէր  
որոշում աղջիկներից, և երեքին էլ միաձև աղջկայ հագուս-  
տով էր սլահում, — «Թող սա էլ աղջիկ համարել, ասաց  
նա, մինչև բարի Ոգիների կամքը կատարւիլը», և անունն  
էլ դրաւ Արեգնազան՝ միատեսակութեան համար, որով  
հետեւ մեծի անունը դրել էր Զանազան, իսկ միջնակինը  
Զարմանադան։

Սրբագուազնը միծացաւ աղջկայ սլէո. և թէպէտ հաւատացած էր, որ ինքն աղջիկ է և աղջիկներից էլ ամենից գեղեցիկը, բայց ատում էր աղջկան վայել բաները: Նա չէր սիրում բուրդ գգել, թել մահել, կար ու ձև անել, և դրա հակառակ՝ երբ մի լաւ ձի կամ մի դինք

էր տեսնում, լսելը գնում էր: Մայր չունէր, որ նրան ստիպէր տնարաբութիւն սովորեցնէր, խոկ հայրը, կարծես գիտութեամբ, ոչ միայն այդ մասին ոչինչ հոգս չէր անում, այլ և նրան իր հետ որսի էր տանում և ձի հեծնել ու զէնք գործածել էր սովորեցնում:

Այսպէս անցաւ մի ժամանակ, մէկ օր Արմանը կանչեց իր զաւակներին և ասաց.

—Ես ծառայում էի մեր բարի թագաւորին և նա ինձ շատ սիրում էր: Ահա այս զաշտերն ու անտառները, այս սարերն ու ձորերը, որ հիմա մեր ձեռին է, բոլորը թագաւորն է ընծայել ինձ, հաւատարիմ ծառայութեանս համար: Երբոր ձեր մայրը վախճանեց, սաստիկ տիսրութիւն եկաւ վրաս: Վեր առայ ձեղ, բաշւեցայ այս լատաղ վայրերը և, տիսրութիւնս փարատելու համար, գլուխս որսորդութեան տըլի: Գուշը հիմա մեծացել էր, խոկ ես՝ ծերացել, Գուշը այստեղ մեծանում էր, ինչպէս վայրի եղի հարլէ, շատ վատ: Ապագայ թըշւառութիւնից ձեղ առաջանալու համար ես մտածել եմ, որ ձեղանից մէկին տըլադի հագուստով ուղարկեմ թագաւորի մօտ ծառայելու: Թագաւորը սիրով կընդունի և իմ տեղը ժամանակով նըրան կըտայ: Այսպիսով ձեղանից մէկը կարող է միւսներիդէլ տանել իրան մօտ: Հիմայ որը կուզենաք գնալ:

—Ես կերթամ, հայրիկ, ասաց մեծ աղջիկը:

—Ես էլ, հայրիկ, ես էլ, մէջ ընկաւ միջնակը.

—Իոկ դնէ, նազանիկ, որ չես կամինակ, հարցը Արեգնազանին, կարծես ուղում էր, որ զնացողը նա մինէր անպատճառ:

—Ինչու չէ, հայրիկ. բայց երբոր իմ մեծ քոյրն ուղում է, ես ինչու արգելը լինիմ նրան:

—Այստեղ արգելը բան չըկայ, հոգիս. ինձ համար դուք երեքդ էլ մէկ էք, միայն դեռ չըդիտեմ, թէ ձեզանից նրն աւելի յարմար կըլինի:

—Ես ամենից յարմարն եմ, հայրիկ, ասաց մեծը, որովհետեւ ես ամենից մեծն եմ:

—Շատ լաւ, բայց ես աւանց ովայմանի ոչ մէկիդ չեմ ուղարկելու: Եթէ գու կամենում ես, կերթաս ուրեմն կըփոխես հագուստով, կընտրես զէնքը ու զրահ, և առաւոտը շատ վաղ քո ձին կընեծնես, կերթաս որսորդութեան. եթէ գատարի չըվերադառնաս, բեզ կուզարկեմ թագաւորի մօտ:

Միւս առաւօտը մեծ աղջիկը, ինչպէս պատիրել էր հայրը ճանապարհ ընկաւ դէպի դաշտ՝ մի բան որսալու համար: Երբ որ մտաւ մի խոր ձորի մէջ և ուզում էր անցնել միւս կողմը, նրա առաջը կտրեց մի դիմակաւորած ձիաւոր՝ ոտից մինչև զլուխ զինաւորած: Աղջիկը նրան որ տեսաւ, այնպէս վախեցաւ, որ քիչ մնաց լեզուն կապւի. սաստիկ երկիւղից մնաց կաշկանդւած, վախչել անկամ չըկարողացաւ: Զիաւորը մօտեցաւ նրան ու ասաց.

—Այ տղայ, սիրուն տղայ,  
Ո՞ւր ես գնում այդպէս մինակ.

Ինչու փափուկ անկողնիցդ  
Գուրս ես ելել անժամանակ:

Աղջիկը սլատասխանեց կմկըմալով,  
—Ես... ես... զնում եմ...

Ոչ... ոչ... չեմ գնում,  
Հա... հա... պիտի գնամ...

Ե՞նչ երեսով հատ դաւնամ... այս լ  
Չիաւորն ասաց սպառնալով.

— Դու զնում ես, ուր ես զնում  
Ո՞ւր ես փախչամ դու ձեր գեղից.

Յատ դառ իսկոյն, թէ չես ուզում,  
Ու զլուխտ թռչի տեսից...

Սյս ասելսվ ձիաւորը հանեց թռչը և բարձրացրեց,  
որ զարկէ աղջկան բայց նա բզաւեց. «Վայ, վայ, մի  
զարկիր, մի զարկիր, ես աղջիկ եմ, ես աղջիկ եմ, ահա,  
ահա, յետ եմ դառնում»:

— Որ աղջիկ ես, ուրեմն դնա ձեր տսնն, ձեր հար-  
մբին կուտ տուրք. Տղամարդի հաղուստ ունենալը բաւա-  
կան չէ, պէտք է աղամարդի սիրտ էլ ունենալ. Եթի լաւ  
էր որ ինձ պատահեցար և ոչ մի ուղիւն, ասաց ձիա-  
ւորը և անյատացաւ:

Սղջիկը գոզողակավ վերագարձաւ տուն:

— Է՞... ուր է լերած որսրդ, հարցրեց հայրը, ին-  
չն այդպէս շուտ վերագարձար:

— Ճանապարհին ջէրմս բանեց, հայրիկ, զլուխտ ցա-  
ւում է...

Միւս օրը միջնակին ուզարկեց. Նա էլ մեծին պա-  
տահած փորձանքին հանդիպեց—նրա պէս վախեցած վե-  
րագարձաւ տաւն:

Երբորդ օրը Սրեպնաղանին ուզարկեց. Նրան և  
հանդիպեց մինոյն ձիաւորը և ասաց.

— Այ աղայ, սիրուն աղայ,  
Ո՞ւր ես զնում այդպէս մինակ

Խչն փափուկ անկողնիցր զժի մորք  
Գուրս ես եկել անժամանակ:

Սրեպնաղանը պատասխանեց բարկանալով. զմաք  
«Քեզ ի՞նչ, թէ ես ուր եմ գնում. Ենձ

Ուր զնում եմ, այդ հս գիտեմ.

Ենձ չեմ գնում, որ քեզ նման

Խաղաղ մարդոց ճանիփէն կապեմ»:

— Ուրեմն ես աւազակ եմ:

Թնձ ես ասում ինձ այդ բանը,

Այս լուգէիս դու կ'ստանաս

Քո այդ խօսքիդ պատասխանը.

— Այս, թէ դու աւազակ ես,

Ցոյց է տախս բո գիմակը,

Բայց թէ ինչպէս տղամարդ ես,

Այդ թող տեսնէ իմ նիղակը...

Սյս ասելով՝ Սրեպնաղանը յարձակեց նրա վրայ

տսելով:

— Դէն ձզիր դիմակը, տեսնեմ դու ինչ մարդ ես,

իթէ ոչ՝ այս բոլորիս կըթոցնեմ զլուխդ:

Չիաւորն ընդիմացաւ, վահանով պաշտպանեց և

թրով յարձակեց Սրեպնաղանի վրայ. Սրեպնաղանը նոյն-

պէս պաշտպանում էր վահանով և յարձակում թրով.

Մի ժամ շարունակ տեսնց նրանց կոխոր, և ոչ մէկը չըլա-

րողացաւ զարկել միւսին, զարկերը՝ վահաններին էին դիպ-

չում. Միայն Սրեպնաղանը հևտողնետէ զօրանում էր, իսկ

նրա հակառակորդը թուլանում. Վերջը Սրեպնաղանը մի

ճարպիկ ուստինով թուլ ձիուցը. իր հակառակորդի

փողպատից բռնելով վայր վլորեց ձիուց, և հէնց այն է,

ուզում էր, որ մի հարւածով դլուխը թոցնէր, նու իս.

կոյն զեր կալաւ դիմակը...

— Ա. իս, հայրիկ, հայրիկ, բացականշեց Արեգնազանը. այս ինչ փորձանքի մէջ էիր զցում դու ինձ... եթէ մի փոքր ուշ վեր կանէիր դիմակդ, ինձ հայրապան պիտի շինէիր:

Հայրը մօտը նստեցրեց Արեգնազանին և նրա վրան նայելից չէր կշտանում. Մի փոքր շունչ առնելուց յեաոյ ասաց.

— Ապրիս, ապրիս, Արեգնազան,  
Ծլիս, ծաղկիս, զօրանաս,  
Հիմա գիտեմ, որ իմ տեղը  
Գու անպատճառ կոտանաս:

Եղուր չեմ քեզ սովորեցրել  
Չէնք ու զրահ գործ ածել,  
Կնքը գիտես, որ ամենքից  
Քեզ եմ սիրել առաւել:

Թող սա լինի, ասացի ևս,  
Արու զաւակ ինձ համար.  
Սորա անվախ, անահ սիրուք  
Քաջ տղամարդի է յարմար:

Էլ աղջիկ չես այսուհետեւ,  
Չմոռանաս այդ ընաւ  
Գու աշխատիր, որ ստանաս  
Բարի անուն մեծ համբաւ.

Արբայական ապարանքը  
Մի մեծ բոյն է փորձութեան,  
Եթէ սխալ մի բայլ անհս,  
Գու կորած ևս յաւիտեան:

Այժմ զնա դու իմ հոգեակ,

Օրհնութիւնս քեզ հետ տար,

Եղիր բարի, մեծահոգի,

Եղիր անմեղ ու արդար...

2.

Երբոր Արեգնազանը ներկայացաւ թագաւորին և յայտնեց. որ ինքը Արմանի որդին է, թագաւորը շատ ուրախացաւ:

— Ես այնպէս էի կարծում, ասաց թագաւորը, որ մեր Արմանը հասած տղայ չունի: Անունըդ ինչ է տղաս:

— Տէրութեանդ ծառայ Արեզ:

— Արեզ... շատ լաւ անուն է և քեզ բոլորովին յարմար. Ուրախ կաց, տղաս, քեզ այստեղ լաւ կըպահնեն: Եթէ մի նեղութիւն, մի կարիք ունենաս, մեզ յայտնիր: Վաղը պիտի որսի երթանք, դու էլ կըգաս մեզ հետ:

Թագաւորը մինումար մէկ աղջիկ ունէր նունուֆար անունով: Այնրան զեղեցիկ էր նունուֆարը, որ արեգակին ասում էր՝ «դու մի դուրս գալ, ես եմ լոյս տալու»:

Երբոր թագաւորը խօսում էր Արեգնազանի հետ, նունուֆարը վարագոյրի ետեից թաքուն նայում էր նրա վրայ և զմայլում:

«Սա իսկ և իսկ այն պատկերն է, որին բանի անգամ տեսել եմ ես երազումս, ասում էր նունուֆարն իրան:

Միւս առաւոտը որսական փողերը հնչեցին:

Հազարից աւելի ձիաւոր զուրս եկան, բոլորն էլ զինաւորւած լայնակամար նետաղեղներով, երկայնակոթ նիզակներով և այլ զենքերով. Իրանց հետ ունեին բազմաթիւ գամփոներ, բարակներ, բաղէներ... մի խօսքով որսի ամեն սպառաստութիւնով...

Սնցան գնացին, հասան մի լայնատարած դաշտ, շորս կողմից ահազին անտառներով շրջապատւած. Որսական չներով անտառներից դուրս փախցրին բոլոր էրեներին դէպի դաշտ, զղթայածն շրջապատեցին ամբողջ դաշտը, և բոլոր որսերին կալմէց արած՝ սկսեցին անխնայ կռտորել.

Սրեգնազանը թագաւորի մօտից չէր հեռանում և նրանից էլլիշ չէր կռտորում: Որսասպանութեան այդ միջոցին թագաւորը մի եղքերի ետևից ձին շափուցելիս, ինչպէս պատահեց, վայր ընկաւ ձիուց, թէև անվնաս, միայն ձին խրտնեց, փախաւ, թագաւորը մնաց հետիւոտ և իսկոյն ընկաւ մի առջի առաջ: Սրջը ետևի ոտների վրայ կանգնեց, բերանը բաց արաւ և հենց որ ուզում էր թագաւորին իր գիրկն առնել, ջարգել, Սրեգնազանը մի ակնթարթի մէջ նետի պէս սրացաւ իր ձիուց և թրի մի հարւածով կէս արաւ արջի զլուխը և վայր զլորեց ամենի գազանին. Թագաւորն աղատւեց և Սրեգը դարձաւ նոյն օրւան հերոսը:

—Այ քեզ բախտ... ինչն ես չէի մօտիկ թագաւորին, ասում էին որսորդներից շատերը:

Թագաւորին սոյն օրւան պատճած դէպրի լուրը շուտով քաղաք հասաւ և պատանի որսորդի արած քա-

Չութեան համբաւը մի բողէում տարածւեց ամբողջ քաղաքի մէջ:

Տեսնելու բան էր, թէ ինչպիսի աղակակ էին բարձրացնում քաղաքիր որսորդների վերադարձին:

—Կեցցէ թագաւորը, կեցցէ բազ Արեգը զոռում էին միաբերան և երգում.

—Ո՞վ է աղատել մեր թագաւորին  
Արջի ճանկերից, հայ, արջի ճանկերից,  
Մեր բաջ Սրեգը, սիրուն պատանին,  
Նա է աղատել արջի ճանկերից,  
Սրջի ճանկերից, հայ, արջի ճանկերից...

Երկայն նիզակը բիրանն է կոխել,  
Գլուխը թրով մէջտեղից կիսել,  
Սմենի զազանին վետին կործանել  
Մեր թագաւորին ունինաս պահել  
Սրջի ճանկերից, հայ, արջի ճանկերից...

Սրեգն է սիրուն արեգակի պէս,  
Նոր է զուրս եկել որսական հանդէս,  
Սրջի զլուխը արաւ երկու կէս,  
Մեր թագաւորին աղատեց այսպէս  
Սրջի ճանկերից, հայ արջի ճանկերից...

Սրեգն է դիցաղն, քաջ ու անվիճեր,  
Կեցցէ յաւիտեան, կեցցէ շատ օրեր,  
Եթէ նա այսօր այնտեղ չըլինէր,  
Մեր թագաւորին էլ ով կաղատէր  
Սրջի ճանկերից, հայ, արջի ճանկերից...

Սրեգնադանն այս ցոյցերը տեսնելով, ասում էր ինքն

իրան. «Ա՞յս, ինչ լաւ բան է տղայ լինելը, երանի և ճշմարիտ տղայ լինելիք. Աղջիկը որտեղից կարող էր այս պատվին աղժանանալ...»

— Դու այսօր ցայց տըւիր ինձ ըռ չնորհըգ, Ս.թեզ, ասաց թագաւորը, այսուհետեւ դու ինձնից ահբաժան կը մնաս. Ս.պրիս, տղաս, ապրիս. Դու մի հաղւագիւտ էակ ես. դեղեցկութեան և ջահելութեան հետ շատ հաշտ չէ քաջութիւնը, բայց Երկինքն ուղեցել է քեզ մի բացառութիւն համարել. Վ.աղը դու իմ ծիաներից կլնտրես քեզ համար ամենալաւը, իմ զէնք ու զրահներից՝ ամենից ընտիրները. Դու ժամանակով դիւցազանց կարգը կընկնիս, և հնոց այժմ էլ մի փոքրիկ դիւցազն ես...

Թագաւորը շատ ուրախ էր, որ մի փոքրիկ դիւցազն է կտել, բայց Նունուֆարի ուրախութիւնը սահմանից անց էր կացել.

— Սրան Երկինքն է ուղարկել ինձ համար, ասում էր Նունուֆարը ինքն իրան. ամեն բան այնպէս է զընում, ինչպէս որ պէտք էր ցանկանալ. Բայց Երբ պիտի տեսնեմ նրան երես առ երես, կամ նա ինձ Երբ պիտի տեսնի. Ա՞յս, ինչըն ցանկանում եմ, որ հնոց այս բովէիս նա ինձ մօտ լինի մենք միասին կըխօսենք. ես նրան կասեմ... նա ինձ կասէ... Եւ ինչն չըկանչեմ, ինչն չըխօսեմ. Հայրս նրան որդու պէս է սիրում, որովհետեւ իր բարեկամի որդին է, նա աղատ ել ու մուտք ունի բոլոր պալատում. Ոյն, այն, պէտք է կանչել. Ե՞լ, ովկաք այդտեղ, կանչեց Նունուֆարը. ներս մտաւ մի պախին:

— Այս բովէիս կերթաս Ս.թեզի մօտ և կասիս որ կայ ինձ մօտ. ասա՞ «Եկ, ինձ տես»...

Աղախինը կնաց և կանչեց Ս.թեզին. Արամիքը

— Զեմ կարող գալ, պատասխանից Ս.թեզը.

— Ինչն չէք կարող, պարտն, նա հրամայել է, պեղ պեց աղախինը:

— Ես նրա մօա գործ չունիմ հասկանեմ ես.

— Պարսն, նա ասում է, «Եկ, ինձ տես»... հասկանեմ ես...

— Գնա, ասա. «Ոչ կըգամ և ոչ կըտեսնեմ քեզ»... Աղախինը կնաց:

Նունուֆարը Ս.թեզի մերժումը լսելով՝ այնպէս սառաւ ու տաքացաւ, այնպէս կարմրեց ու սփրթնեց փոփոխակի, որ աղախինն այդ տեսնելով՝ սարսավի մէջ ընկաւ.

Նունուֆարի սիրան ուզում էր տրաքել, գլխի սկառակին ուզում էր բարձրանալ. Նա անդադար այս ու այն կողմն էր ընկնում, մերթ դուռն էր բաց անում, մերթ պատուհանը. Նրա սենեակը դարձաւ մի հնոց, և նրան այրում, խորովում էր:

— Մերժում... արհամարհներ. . ինձ, ինձ, ոհ, վլուխս, վլուխս տրաքաւմ է, տրաքում,

Աղախինը, վլուխս ասել.

— Տիրուհի, ես զարմունում եմ, որ դու մի այդպիսի գատարկ բանի համար սիրտդ շուռ ես բերում. Նա գուցէ սաստիկ ամաշում է, և դրա համար է, որ չեկաւ. Երբ բոր լսեց որ դու կանչում ես իրան, ամօթից կարմրեց, վարդ կտրւեց, և ինչըն գեղեցիկ էր...

— Ասա, ասա խօսիմ, շարունակիր, ես չըլսեցի քո բոլոր ասածները... ոհ, որքն ստոր եմ ես հիմա նրա աշբումը, որքն ստոր.. բայց նա սխալում է, այնպէս չէ, նա սխալում է...

Նունուֆարը երկար ժամանակ հոգնպէս տանջւելով  
թուլացաւ և ընկաւ անկազմին, Թագաւորին իմաց արւին.  
Նա զնաց, տեսաւ, բժիշկներ կանչեց: Հաւաքեցան քողոք  
բժիշկները, յայտ տըլին թագաւորին, թէ հիւանդութիւնը  
փոանգաւոր չէ և շուտով կը թշկին, բայց, դրա հակա-  
ռակ, բանի զնաց՝ նունուֆարի տկարութիւնը վաանգա-  
ւոր գարձաւ: բժիշկները ցուսահատուեցան և ուզգակի  
յայտնեցին, որ չեն կարողանում իմանալ ոչ ցափի պատ-  
ճառը և ոչ նրա բժշկելու հնարը:

Նատ տիրեց թագաւորը: Նունուֆարը նրա միակ  
զաւակն էր, միակ միսիթարութիւնը, իր թագաւորու-  
թեան միակ ժառանգուհին: Ամբողջ պալատը և համարեա  
ամբողջ քաղաքը տիրութեան մէջ ընկաւ: Արեգնադանն  
էր միայն անտարեր մեացողը: Նրա հոգը չէր ամենին  
և չէր էլ երկակայտմ, որ ինքն է նրա տիրութեան միակ  
պատճառը:

Նունուֆարին փորրիշատէ սիսոփողը և ուրախ տրամա-  
գրութիւն տըլողը թագաւորի ծաղրածուն էր: իսկ նրա  
վրայ հսկողն ու ինամբ տանողը վէզիրի կինն էր:

Վէզիրի այրի կինը մի հասած տղայ ունէր: Նա  
կարծում էր, որ թագաւորին արժանաւոր փեսացու մի-  
այն իրա տղան կարող է լինել և ոչ մի ուրիշը: Սյու  
պատճառով նա գլուխ ցերեկ չէր հեռանում նունուֆարի  
մօտից: աշխատում էր նրան առողջացնել և միենոյն ժա-  
մանակ նրա ուրը զրաւել:

Մի երեկոյ ծաղրածուն ներս մտաւ և սկսեց երգել:

Մէկ՝ բնեղ, միը Արեգ,  
Զորս, մորս, զնաց ոլս,

մէկ, — նից, լսպանեց  
Մի արջիկ, մի աղջիկ... մի ու զար և  
և հաշեցի և զտայ  
Մեր պալատում մի տղայ,  
Նրան տեսնող աղջիկը  
Խելը հացով կուլ կրտայ:  
Ես լիմար եմ, միշտ լիմար,  
Ինձ հիվանդի, թէ զտար ան-ան-  
Քո սիրելի տիրուհու բայց ին պատ  
Յաւի համար գեղ ու ճար: մեռնա մոցե  
Եարալլավ շարակալի,  
Ճայդէ, հիմար դուրս արի... ու մատի

Երգեց լիմարը և, մի քանի ոստիւններ անելով,  
դուրս փախաւ:

Վէզիրի կինը «մատը կծեց», և ընկաւ մտատանցու-  
թեան մէջ: — Ես հիմա հասկացայ ամեն բան, ասաց մըտ-  
քումը: Յիմարն իմ հաշիւը տակնուվրայ արաւ: Նատ լաւ.  
Քո Արեգին հո մի այնպիսի տեղ ուղարկեմ, որ «զնալն ըլի,  
գալը չըլի»...

— Մեր լիմարն այնքան լիմար չէ, ինչքան կարծ-  
ուում էր, ասաց տիկինը նունուֆարին:

— Այն, բայց այս անզամ շատ լիմարացաւ, պատա-  
խանեց նունուֆարը:

Միւս առաւտուն ամենից կանուխ վէզիրի կինը  
գնաց թագաւորի մօտ.

— Ինչ կայ, ինչպէս է աղջկանս առողջութիւնը,  
հարցրեց թագաւորը:

— Ելի այնպէս է, տէր, թագաւոր, ինչպէս տեսել ես, բայց ես եկել եմ մի ուրախառիթ լուր հաղորդելու:

— Ի՞նչ լուր, ասա շուտով, դուցէ իմ աղջկանն է վերաբերում, ուրիշ ոչ մի լուր ինձ չի կարող ուրախացնել:

— Այս, այս: Այս գիշեր երազումս երեաց մեր թագուհին և ասաց ինձ, որ նունուֆարի միակ դեղը «անմահական ջուրն է»:

— Ան-մա-հա-կան ջուր ., բացականչեց թագաւորը, բայց ով կարող էր բերել այդ անմահական ջուրը, որի միայն անունն ենք լուծ, իսկ իրան շենք տեսած:

Ես հարցրի այդ մասին թագուհուն և նա ասաց, որ միայն Արեգը կարող է բերել...

— Արեգը... լաւ, ես կուղարկեմ Արեգին, թող երթայ իր բախտը փորձէ...

Թագաւորը կանչեց Արեգին և առաջարկեց նրան դնալ անմահական ջրի:

— Գնա՛, տղաս, եթէ կարողանաս այդ ջրից բերել և իմ աղջկանս առողջացնել, ես նրան բեկ կըտամ և նրա հետ իմ թագաւորութինը:

— Այդ խոստումն էլ որ շըլինի, տէր արքայ, ես պատրաստ եմ հնագանդիլ քո հրամանին. դու ինձ ասա միայն, նրտեղ է գտնուում այդ անմահական ջուրը:

— Նրա տեղն ով կիմանայ, որդի, նա մի առանձին պարզէ, մի առանձին ողորմութիւն և չնորհք, որ բարի նգիները միայն իրանց ընտրածին են տալիս: Թէ-պէտ լուծ ենք, որ նա մի աղբիւր է, որ նրա վրայ հոկում են աներեսյթ ողիները, որ նա երբեմն բղխում և երբեմն անյայտանում է, բայց այդ ով դիտէ: Դու

երեսը կըդարձնես զէպի արեելը, կընկնիս երկրէ երկիր, աշխարհէ աշխարհը. ամեն տեղ հարց ու փորձ կանես, կամ կըդտնես, կամ չես զտնիլ, այդ քո ճակատագրիցը, քո բախտիցն է կախած. բայց ինչ էլ որ լինի՝ յաջողութիւն, թէ անայջողութիւն, դու շատ բան կըտեսնես և շատ բան կըսովորես: Իմ գանձարանը բաց է քեզ համար, որբան կարող ես, հետդ ուսկի և ակնեղին վերցրու, շատ տեղ հարկաւոր կըգայ...

Արեգնազանը դնաց:

Զարմանալի մի էակ էր Արեգնազանը. միշտ աշխոյժ ու զլարթ, միշտ անահ ու անհոգ. նեղութեամն մէջ ընկած ժամանակն ես իր ուրախ տրամադրութիւնը չէր փոխում: Նա զնաց իր բազիկ ձիով, որ երե - չորս օրւայ ճանապարհը մէկ օրումն էր անցնում: Նա պըտը-տեց մի քանի թագաւորութիւն. շատ տեղ հարց ու փորձ արաւ, շատ բան տեսաւ, շատ նեղութիւններից ազատ-ւեց, մինչև հասաւ Կախարդական աշխարհը, ուր ամեն մի բայլափոխում մի նոր հրաշք էր տեսնում, մի նոր զարմանալիք:

Մէկ օր սաստիկ արև էր: Շոգը որ շատ նեղեց Բաղիկին, Արեգնազանը իջաւ մի ճի մօտ, Բաղիկին քաշեց կապեց մի խիտ ստւերի մէջ, ինքն էլ մօտը նստեց, հանեց իր ճամպի պաշարը և սկսեց ճաշել: Հինց այդ միջոցին մէկ էլ տեսաւ. որ ահա մի խումբ աղաւնիներ թռած եկան և իջան լճի ափին՝ իրանից շատ մօտիկ: Նետաղեղը լարեց, որ մի որս անէ, մէկ էլ տեսաւ, որ բոլոր աղաւնի-



Թեհրըս տուր, թեհրս,  
Թեհրըս տուր, թռչիմ զնամ,  
Ենչ կամենաս, քեզ կըտամ.

Մի վայրկենական ուշաթափութիւն եկաւ Արեգնապանի վրայ, և նա զգաց մի անսովոր բան, բայց շատ հաճոյական։ Նայեց ջրի երեսին, ուր՝ ինչպէս հայելու մէջ, պատկերացաւ մի դէմք, բոլորովին Արեգնապանի նման, միայն նորածիլ բեխերով ու մօրուքով։ Ոյտ պատկերն առաջ մի բիշ խորժ թքւաց Արեգնապանին, բայց յետոյ այնքան զմայլելի եղաւ, որ վրան նայելից չէր կը շտանում։ «Այս ես կըլինիմ անպատճառ, առաց ինքն իրան։ Ես հիմա ճշմարիտ որ Արեգ եմ»։

— Յիրուն աղջիկ, զու տրւիր ինձ այն, ինչ-որ իմ միակ ցանկութիւնն էր, այժմ զու աղատ ես. ես չէի աղատում քեզանից այսպէս բան, ուրեմն զու ինձ կասես, զու անպատճառ կիմանաս, թէ որտեղ է գտնուում անմահական ջուրը, որի համար ես ահա քանի ժամանակ թափառում եմ։

Սղջիկն ոկսեց երդել.

Թող նունուֆարդ ուրախանայ,  
Որ ճանկ գցեց քեզ պէս փեսայ,  
Հիմա հասար ըս մուրադին,  
Եկար աղջիկ, կերթաս տղայ։  
Անմահական ջնուր ես ուզում...  
Թեհրըս տուր, թեհրս,  
Թեհրըս տուր, թռչիմ զնամ,  
Եւ իմ կտցով բերեմ տամ,  
Գետ, օղնիր տկարներին,

Հոգի ու շունչ տուր բարերին,  
Թէ որ կուզես ինչպէս հիմա նուս ու  
Մնալ փոխւած ինչպէս տղայ.  
Եսկ եթէ ոչ, լաւ գիտենաս,  
Որ տպայից քար կը գառնաս,  
Երբ բարացած քաղաքի մէջ  
Կախարդ կընկան կըմօտենաս։  
Թեհրըս տուր, թեհրըս,  
Թեհրըս տուր, շուտ հագնեմ,  
Թռչիմ զնամ ու քեզ համար  
Անմահական ջուր բերեմ...»

Աղջկայ վերջին խօսքերից շատ բան չընառկացաւ Արեգը, բայց շուզենալով այլիս ուշացնել նրան, թեհրը տըւաւ իրան։ Աղջիկը թեհրը հաղնելուն պէս գարձաւ աղաւնեակ և թուաւ գնաց։ Մի բանի բողէ շանցած՝ մի փորբիկ շիշ կտցին, անմահական ջրով լիրը բերաւ Արեգին տըւաւ ու ինքը կըկին թուաւ ու գնաց։

Արեգը ձին հեծաւ և ճանապարհ ընկաւ ձիու հետ խօսելով.

— Բաղիկ, ես հիմա տղայ եմ, գիտես, էլ աղջիկ չեմ։ Ուռաջ աղջիկ էի. այդ ոչ որ շըզիտէր. զուցէ զու էլ շըզիտէիր. հայրս սպատիրել էր, որ ոչ ոքի շասիմ, թէ ես աղջիկ եմ. բայց հիմա տղայ դառայ։ Օ՛, որ գիտենաս, Բաղիկ, ինչըն ուրախ եմ հիմա։ Դու չես իմանում. թէպէտ աղջիկն էլ լսու է, բայց տղային որտեղ կըհանիր. Ես հիմա չըգիտեմ՝ ուր եմ գտում։ Բաղիկ, զու ինքրդ զնա որ կովմ կուզես. այսուհետեւ ինձ համար միենոյն է... Բայց սպասիր, ես մի աշտարակի ծայր եմ նշամարում, նա անպատճառ մի քաղաք կըլինի, զնանք դե-

պի այն կողմբ: Զարմանալի անհոգ եմ ես, Բազիկ. մէկ չես առում թէ, ինչու այդ իմաստուն աղջկան շըհարցրիր, թէ՝ ով զու զեղեցիկ և իմաստուն աղջիկ, որ կողմով պիտի յետ գառնամ ես իմ աշխարհը: Դեռ լաւ էր որ նա առանց իմ ասելուն՝ ինձ տղայ գարձրեց. որ բանն ինձ մնար, ես դեռ էլի աղջիկ կը լինէի. Ի՞նչ կարող էի մտածել, որ այդպէս բան կարող է պատահել: Բայց երբոր տեսայ, թէ այդպէս բան լինում է, ինչու չասացի՝ սիրուն աղջիկ, ինձ որ տղայ դարձրիր, մեր Բազիկին էլ մարդ գարձրու, եթէ ոչ՝ զոնէ խօսելու ձիրք տուր, հը, ինչ կասես, Բազիկ: — Ոչինչ, դու տղայ դառար, ես էլի մնացի ձի: — Իրաւ, իրաւ, այդ լաւ չեղաւ: Մի բան տեսնելիս այնովէս յափշտակում եմ որ բոլոր մնացած բաները սոսանում եմ, յետոյ միտս է զալիս, բայց ուշ է լինում...

Այսովէս ձիու հետ խօսելով և նրա վոխտնակ ինքը պատասխանելով՝ մեր վերանորոգւած Սրեպը զիմեց զէպի երեացող աշտարակը:

#### Հ.

Երբոր Սրեպը մօտեցաւ բարձր աշտարակին, հետևդ հետէ երեացին և ուրիշ շատ տներ, և նրա առաջն բացւցաւ մի մեծ քաղաք: Մօտեցաւ քաղաքալուսնը, տեսաւ մի քանի մարդիկ կանգնած, հարցրեց նրանց:

— Տղէք, ի՞նչ քաղաք է սա, և որտեղ են իջնում օտարականները.

Մարդիկ ձայն չըհանցին:

— Չեղ եմ առում, տղէք, չէք հասկանում:

Ձայն չըկայ:

Երեի խուլ են, մտածեց Սրեպը և զնաց ձեռք դիմեց նրանց:

— Ո՞վ երկինք, բացականչեց Սրեպը, այս ինչ եմ տեսնում. այս ի՞նչ հիմնալի արձաններ են, իսկ ես կարծեցի, թէ ուղիղ մարդիկ են: Սյս ինչքան ճարտար քանդակալործ է եղել սրանց շինողը...

Սրեպը, կարծելով թէ իր տեսածներն ուղիղ շինովի արձաններ են, ներս մտաւ քաղաքը և առջեր բացւեցան նորանոր տեսարաններ՝ բոլորն էլ քարեղէն:

Ահազին շուկայ, կարգին խանութներ, թէ կրպակ, թէ տուն, թէ կատու, թէ շուն, ուտելիք ու հագնելիք, զեղեցիկ գորգիր և ուրիշ զարգեր... բոլորը, բոլորը բարացած: Ոչ ծուխ, ոչ կրակ, ոչ ձայն, ոչ շունչ... կեանդի հետք ու նշոյլ չըկայ...

— Ես հիմա համկացայ, սա է աղաւնի աղջկայ ասած քարէ քաղաքը, ասաց Սրեպը և սկսեց շրջիկ քաղաքի մէջ, ուր ամեն մի քայլափոխում մի նոր տեսարանի էր հանդիպում:

Մի տեղ մի խումբ մարդիկ կանգնած՝ որպէս թէ իրար հետ խօսում են. մէկի գեմքը բարկացած է և բերանը բաց. կարծես միտսին հայհոյում լինի, մէկը ծիծաղում է, միւոր լաց է լինում. մի կին՝ երեխան գրկած, սպորմութիւն է ուղում. մի տեղ հարսանիքի հանգէս է, իր ամեն սարք ու կարգով, հարսին տանում են վեսայի տուն: Մէկ խօսրով, եթէ շարժման մէջ եղած մի քաղաք մի վայրինում տեղնուտեղը քարանայ, ի՞նչ պատկեր կըստանայ, աճա այդպիսի մի պատկեր էր ներկայացնում քարացած քաղաքը: Մրգավաճառը միլոր քաշել է և կի-

սով չափ ածել առնողի գամբիւղը, մինչև միւս կենն ածել՝ քարացել են՝ ինքն էլ, կշեռն էլ, առնողն էլ, միրգն էլ, ահա այսափի արագ էր եղել քարանալը:

— Խեղճ մարդիկ, ասաց Արեգը, հող դառնալու էլ չէր արժանացել, այլ դառել էք ծախու ապրանքը: Ճշմարտու, եթէ մէկն այս անթիւ արձանները կարողանար տանել հեռու աշխարհներ վաճառելու, անջափ հարստութիւն կըզիգէր: Սհա այս նորապսակ ազջկայ արձանին՝ ոլ գիտէ իր բաշովը մէկ ուսկի կըտային: Բայց ինչ եմ մտածում ես էլ, այս թշուառութիւնն աշխարայ տեսնողը՝ էլ ինչ կարող է հարստութեան վրայ մտածել: Սհա հարստութիւն՝ մեր առջեւ պատկերացած իր խսկական կերպարանքով... Ե՞ս, երանի թէ սրանցից մէկը լեզուառուէր և ինձ պատմէր իրանց զլսի անցրը: Արի մէկ կըրդաւեմ, ինչ կըլինի՝ կըլինի:

— Ո՞վ քաղաքացիք, ինչնել էք քարացել... կանչեց Արեգը:

— Քարացէլ... արձագանկ արտին բալոր քարերը:

— Փ...ա...ր... յանկարծ մի նոր ձայն լսւեց:

— Սհա ձայն լսեցի, ասաց Արեգը և մէկ էլ բուց. Ո՞վ կաք կենդանի...:

— Ե...ս... պատախանեց ձայնը:

Արեգը որոշ կերպով լսեց, թէ որաեղից է զալիս ձայնը, զնաց դէտի այն կողմը: Մի զեկեցիկ ապարանք էր. առաջնն ընկարձակ պարտէզ, բոլորն էլ քարացած. փոքրիկ մի ծաղկոցում նա գտաւ մի քարացած մարդու կննդանի գլուխ:

— Ո՞վ ես զու, ո՞վ մարդ, հարցրեց Արեգը:

— Զուր... զուր... պատաստանեց գլուխը՝ հազիւ կարողանալով խօսել:

— Զուր ես ուզում:

— Զուր... զուր... տուր... տուր...

— Հայրիկ ձեր քաղաքի զուրն էլ է քարացել, զուր շըկայ:

— Մի... մի... կաթ... կաթ...

— Մի կաթիլ զուրը բեզ ինչ կօգնէ, բո ծարաւը մի կարաս ջրավ չի յագենալ, ես ունիմ ինձ մօտ մի քանի կաթիլ զուր, եթէ կըրաւոկանանաս, շեմ խնայիլ քեզանից:

— Հա... հա... հա...

Որեգը հանեց անմահական ջրի շիշը և նրանից մի քանի կաթիլ կաթեցրեց կիսարձանի բերանը: Կենդանի զլուխը ոչ միայն կատարելապէս զովացաւ, այս զգաց մի վերակինդանութեան ցնցում իր բոլոր մարմնի մէջ և սկսեց պարզապէս ասել:

Դու րարի հրեշտակ,

Ո՞րտեղից եկար

Փախիր, հնաւացիր

Մի առ ժամանակ.

Բայց ոչ, սպասիր,

Ես էլ եմ զալիս...

Այն, զալիս եմ,

Նայիր, մէկ նայիր...

Կիսարձանը կենդանացաւ և սկսեց քայլել, առաջ մի փոքր դանդաղ, յետոյ աւելի շուտ-շուտ և սկսեց փախչիլ, իր ետեից կանչելով Որեգին.— Փախիր, փախիր, որգիս, ել իմ ետեիցս, մեզ հարկաւոր է թաքչիլ, հիմա ուր որ

է, պիտի գայ քարացնող պառաւ հրէշը: Արի, արի, մըտնենք իմ ապարանքը, գոնէ ըեղ չըդանէ:

Արեգը մնացել էր շփոթւած, չէր իմանում, թէ ինչ անէր, բայց վերջը հետևեց վախչող մարդուն: Զին բաշց ներս, վարի յարկումը մի մուժ անկիւնում կապեց, իսկ ինքը վերև բարձրացաւ այն մարդու մօտ:

—Ես չեմ հասկանում, այդ ինչ հրէշ է, որից այդքան վախենում ես դու, ասաց Արեգը:

—Եյդ հրէշը մի պառաւ է, որդի, նա է քարացրել մեր քաղաքը, ամեն օր այս ժամանակին վալիս է նայում և զւարճանում իր շարութեան վրայ. հիմա ուր որ է պիտի գայ, և եթէ մեղ տեսնէ կենդանի, իսկոյն կըքարացնէ:

—Հիմա հասկացայ: Բայց լինչպէս է եղել, որ քեզ բոլորովին չէր քարացրել:

—Սւելի տանջելու համար: Ես այս քաղաքի թափաւորն եմ. ինձ կասեն Անդաս թափաւոր: Քաւթառ հրէշը զլտիս կենդանի թողեց ասելով.—Աշքերդ բաց եմ թողնում, Անդաս, որ տեսնես քո թափաւորութեան ոչնչութիւնը իմ զօրութեան, իմ ուժի առջի:

—Ինչնումն է նրա զօրութիւնը, կամ ինչնո՞ւ է նա ուժեղ, չըդտես:

—Նրա զօրութիւնն իր գաւազանների մէջն է, նրա գաւազանները մահ են սփռում ամեն տեղ: Նա մի գործիք է չար ոգիների ձեռքում և նրանցով է անում, ինչոր անում է: Կամ, ով գիտէ, գուցէ հէնց ինքը մի չար ոգի է, պառաւի կերպարանք առած:

—Ի՞նչ ես կարծում, եթէ դրա ձեռքից լինեք իր գաւազանները...

—Բայց լինչպէս կարելի է մօտենալ նրան, միայն բարի Ոգիքը կարող են այդպիսի բան անել, կամ այնպիսի մի մարդ, որ բարի Ոգիների պաշտպանութիւնն իր կողմն ունի:

—Ինձ թւում է, որ բարի Ոգիները կըպաշտպանեն մեզ, ասաց Արեգը, և պատմեց ազանի աղջկայ հետ հանդիպելը, նրա արածն ու ասածը...

—Օ՛... եթէ այդպէս է, ապա ուրեմն դու մի բարի ովի ես, երկնքից ուզարկւած, բացականչեց թագաւորը: Ես կարող եմ այժմ համարձակ գուրս գալ նրա առաջը, իսկ դու ինձ մօտ թաք կըկենաս, որ երբ յարձակի ինձ վրայ, դու իսկոյն կըբռնես նրան և զինաթափ կանես: Ահա, ահա երկում է նա. տես, ամպերի մէջ, խնոցու վրայ հեծած, օձէ մտրակը ձեռին, դալիս է:

—Տեսնում եմ, տեսնում... դու սիրագ պինդ պահնիք, չըվախնաս, ես նրա հոգին կըհանեմ: Եյս ասելով՝ իջան պարտէղ: Արեգը թաք կացաւ մի բարացած ծերունու բամակում:

Պառաւը վայր իջաւ թագաւորի գիմացը, ձեռին տուու իր երեք գաւազաններից մէկը և սպանալով ասաց.

Եյս ինչ եմ տեսնում,

Սյստեղ ով եկաւ,

Եյս կեանըն, այս հոգին

Սըրան ով տըւաւ:

Հասէր, ոգիներ,

Հասէր, շուտ հասէր,

Զեր խեղճ պառաւին

Եկէր, օպնեցէր:

Իսկ դու, զաւազան,  
Ե՞նչպէս ես զարկել, բողաք ոգովը զայ  
Որ սա նոր-մէկանց  
Ռոտի է կանգնել.

Հապա, զաւազան,  
Հապա, մէկ տեսնենք,  
Քո զօրութիւնը  
Մէկ այժմ էլ փորձենք:

Գաւազանը ձեռին յարձակում է պառաւը, որ զար-  
կէ թափաւորին, ասելով՝

Քար էիր, Անդաս,  
Ելի քար դառնաս..

Սյու միջոցին Արեգը բռնեց նրա մազերից և այնպէտ  
գետին փռեց, որ պառաւը կիսաշունչ եղաւ. Թափաւորը,  
որ առանց ուղիղ բարձնալու, այլ միայն երկիւզից մնա-  
ցել էր քարացած, նոր սրտապնդեց և մօտեցաւ պառա-  
ւին. Գաւազանները խլեցին, և պառաւի ձեռք ու ոտքը  
կապեցին:

— Հիմա ի՞նչ պատժով պատժենք քեզ, զարշելի պա-  
ռաւ, ասաց թափաւորը:

Պառաւը պատասխանեց.

Ի՞նչ պատիժ կուզէք, մէկ է լինձ համար,  
Թող ձեր պատիժը ձեզ լինի յարմար:  
Բայց այդ դու չէիր: Անդաս թափաւոր,  
Սյու աղայացած աղջէկ զօրաւոր...  
Գրւած է արդէն իմ ճակատագրում,  
Եւ ողիների մատենադրում,

Թէ երբ մի աղջիկ կը դառնայ տղայ.  
Քո թշւառ կեանքին նա վախճան կը տայ:  
— Օ... եթէ այդպէս է, ես ոլատրաստ եմ, ասաց  
Սրեգը, միայն դու պէտք է առաջ կենդանացնես այս  
բաղաքը:

— Թող այդպէս լինի, թող կենդանանայ,  
Թող ամեն մէկը եր գործին կենայ:  
Ուրիշ չարութիւն շատ ունիմ արած,  
Թող բէլիւրը նրանցով շատանայ...

Սմալեր, գոռացէք,  
Կայծակներ, զարկէք,  
Աղբիւրք, բղխեցէք,  
Գետեր, վազեցէք:  
Մարդ և անառուն,  
Գազան և թռչուն,  
Հասաւ ձեր ժամը,  
Հիմա վեր կացէք...

Պառաւն իր խօսքն աւարտած, չաւարտած՝ խորին  
լուութիւնը յանկարծ դպրոց. բազաքը մտքի արագու-  
թեամբ կենդանացաւ. Ամենքն էլ այնպէս շարունակեցին  
իրանց կիսատ թողած գործերը, որ կարծես ոչ բարա-  
ցած են եղել եր և իցէ, ոչ բան: Արազազը, որ իր  
կանչի կիսումն էր քարացել, միւս կէսը հիմա աւարտեց.  
զուռնաչին, որ զուռնան բերանումն էր քարացել, շարու-  
նակեց ածելը. պար եկողն էլ, որ ձեռները բարձրացրած  
էր մնացել, շարունակեց իր պարը. խոհարարը շարունա-  
կեց միի քափ քաշելը, և բոլորն այսպէս .. Ոչ մի մարդ,  
բացի թաղաւորից, չիմացաւ՝ որ նա երբ և իցի քար է  
եղել:

— Հիմա ինչ անենք այս չար պառաւին, ասաց թագաւորը:

— Գաւազանները ձգենք ծովը, պատասխանեց Սրբը, իսկ պառաւին թողենք երթայ. սրա գօրութիւնը վերացած է այսուհետեւ:

Պառաւը չուզեց կենդանի մնալ, և առաց նրանց.

— Ո՛չ, ինձ էլ, ինձ էլ ծովը ձգեցէք,  
Այնտեղից մօտ է Սանտարամետը,  
Մահացու կեանքից ինձ աղատեցէք,  
Թող ինձ ընդունի Սատանապետը:

Լրացաւ արդէն մի հազար տարին,  
Որ ևս գործիք եմ մեծ Բէլիարի,  
Միշտ չար գործեցի, չիմացայ բարին,  
Թող այժըմ նըրա կամքը կատարի:

Դեռ պառաւն իր խօսքը չեր աւարտել, որ թագաւորի մեծ վեպիրն ու սպարապետը եկան և խոր գլուխ տարով թագաւորին՝ առացին.

— Տէր արքայ, բոլոր զօրքը պատրաստ է, քո մեծոթեան հրամանին ենք սպասում,

— Ինչու համար էք պատրաստել զօրքը, հարցրեց թագաւորը զարմանալով:

— Ս ենք կատարեցինք քո հրամանը, թշնամու զօրքը մօտենում է, սլետք է նրա առաջն առնել:

— Սպասեցէք, սպասեցէք... այս, այն, ես հիմա յիշում եմ... այդ մեզանից ուզի՞ղ բառասուն տարի առաջ էք, ինչ որ ասում էք. մեր քարտանալու օրն էք... թշնամու զօրքերն եկան և մեղ քարացած գտնելով սարսափած փախան...

Վէզիրն ու սպարապետը իրար երեսի նայեցին և շընջացին միմեանց. «Թագաւորը խելազարւել է»...

Այս, այն, զարմանալի փոփոխութիւն. երեկ չէր, որ մօտըն էինք. մէկ օրւայ մէջ ձերացել է...

— Տեսնաւմ էք գուք այս պառաւին, ասաց թագաւորը. սա է մեր քաղաքի քարացնողը: Քառասուն տարի շարունակ սա մեր քաղաքը քարացած պահեց...

Վէզիրն ու սպարապետը թագաւորին գլուխ տալով համաձայնութիւն ցոյց տըւին, որ իր թէ հաւատում են նրա ասածին, բայց իրար հետ շընջալով՝ «հաստատ խելազարւած է սա», ասացին:

— Եթէ սա շըլինէք, շարունակեց թագաւորը՝ ցոյց տալով Սըեզին, — եթէ սա շըլինէք, մենք յաւիտեան քարացած կրմնայինք: Սա, որ մի հրաշքով աղջկանից տղայ էք դառել, և աղաւնի դարձող աղջկանից անմահական ջուր էք ձեռք բերել, պատահմամբ ասեմ, թէ Երկնիքի տնօրէնութիւնով, եկաւ և ինձ կենդանութիւն տըւաւ իր ջրով, այս չար պառաւին էլ բռնեց ու զինաթափ արտա: Սյժմ այս պառաւին ձեզ եմ յանձնում տարէք սրան, ծովը ձգեցէք, ահտ այս գաւազաններն ես ծովը ձգեցէք...

Վէզիրն ու սպարապետը գարձեալ սկսեցին շընջալ, դէպի մի կողմ քաշւելով:

— Հաստատ, հաստատ խելազարւել է, պնդեց վէպիրը:

— Դրան ինչ կասկած, կրինեց սպարապետը: «Սա, ասում է, աղջիկ է եղել, տղայ է դարձել, մի աղջիկ էլ աղաւնի է դառել, ինքն էլ անմահական ջուր է խմել, իսկ մենք՝ որպէս թէ՝ քառասուն տարի է, որ քարացած

Ենք եղել... — Խելքը զլիխին մարդը միթէ այսպիսի բաներ կրխօնի:

Այս մարդոց կասկածը շատ բնական էր, Վէղիլը քարանալուց առաջ ճաշի էր նստած և դդալը ձեռին՝ բերանը տանելիս՝ քարացել էր, իսկ այսօր դդալը տարել էր բերանը և իր ճաշը վերջացրել, եկել, Սպարապետը ոտքի մէկը ձիու ասպանվակումը դրած հեծել ուզելին էր քարացել, և այսօր էր ոտքը միւս կողմն անցկացրել և հեծել ձին ու եկել, էլուրեմն ինչպէս կարող էին երես կայել, որ երբ և իցէ քարացած են եղել:

Գիտես ինչ կայ, թագաւոր, ասաց Արեգը ծառկ: Այս մարդիկը քո խօսքերին չեն հաւատում և ըեզ խելագար են համարում: Այս շատ վտանգաւոր բան է, կարող են քեզ ճշմարիտ խելագար համարել և թագաւորութիւնից զրկել: Հիմա դու սպասիր, տես ես ինչ եմ անում, և ինձ հետեիլ: Յետոյ դառնալով վէզիրին ու սպարապետին՝ ասաց.

Եկէք, պարոններ, եկէք,

Մի կասկածէք բնաւին,

Տեսէք՝ ինչպէս եմ պատժում

Այս անըղղամ պառաւին:

Այս ասելուց յետոյ կախարդական գաւազաններից մէկը ձեռին՝ մօտեցաւ պառաւին և ասաց.

Հրամանով

Բէլիքարի,

Ուրիէլի,

Սպայէլի,

Քար դառ, պառաւ, բար...

Ասեց ու զարկեց գաւազանը: Պառաւը դարձաւ մի բած էշ և սկսեց խաւանչել:

— Այ ըեզ բան, բացականչեց Արեգը, երեխի այս դաւազաններից ամեն մէկը մի չոկ զօրութիւն ունի, կամ գուցէ իմ անէծքս էր իշափարի և պառաւն իր խառանչիւնով ծիծաղով ծիծաղով է ինձ վրայ: Փորձենք երկրորդ գաւազանը:

Սադայէլի ահեղ սրով,

Տարտարոսի մեծ զնդանով

Քեզ զարկում եմ, անիծում եմ,

Քար դառ, պառաւ, բար...

Պառաւը դարձաւ մի սե ագռաւ և սւզեց թռչի, բայց ոտները կապած էին, չըկարողացաւ:

— Սպառնեցէք, երրորդ գաւազանը փորձենք:

Ուաւ երրորդ գաւազանը և ոկսեց աւելի թունդ անիծել, կարծելով թէ իր անէծքի թուլութիւնիցն է, որ պառաւը քար չի դամնում.

Քարելիքարկնուտ,

Արիւնանձրեւ,

Մէգ, մառախնուղ, ունի ուն

Թանձը մոայլ,

Խիտ աղջամուղջ,

Թունդ երկրաշարժ,

Մահատարաժան,

Օրնտ, կայծակ,

Հրդէն, կլան,

Նալթահեղեղ

Գժոխային

Ծափուի գլխիդ,

Ով սև ապուաւ,

Դահիճ պառաւ.

Քեղ զարկում եմ

Չար մահակով,

Դադանակով,

Որոտմունիքի

Թունկ մտրակով,

Կայծակների

Ահեղ զարկով,

Անէծքս առ,

Դարձեր լեռ քար...

Սսեց ու զարկեց գաւազանը և պառաւը դարձաւ մի  
գաժանատեսիլ քարէ արձան։ Յետոյ դառնալով վէզիրին  
ու սպարապետին, ասաց Արեգը.

Հիմա ամառն է, բայց գուք չգիտէք.

Սյս շոգ կրակին մուշտակ էք հագել.

Չմեռն է եղել, երբ քարացել էք,

Ենդուր էք հիմա այդ ձեռի հկել.

Մարդ ուղարկեցէք մի ուրիշ քաղաք,

Որ վնա, բերէ ձեր տարեթիւր.

Նրանով կիմանաք ձեր զլխի անցըը,

Կուղղէք ձեր այժմեան սխալ հաշխւը։

Եթէ ոչ ես ձեղ էշեր կըշինեմ,

Կամ սե ազգաւներ, երթար կոկոաք,

Որ այնուհետ ձեր թագաւորը

Ենչ որ ձեղ տոք՝ իսկոն հաւատաք...

— 07. ես հիմա հաւատում եմ, հաւատում, ասաց  
վէզիրը, այս բոլորն աշքովս տեսնելուց յետոյ՝ էլ չեմ  
կարող շըհաւատալ... ծշմարիտ որ ձմեռն է եղել, իսկ

հիմա... ամառն է... այն, ամառն է...

— ես էլ եմ հաւատում, ես էլ... ես չեմ ուզում ոչ  
էշ և ոչ ազուա զառնալ, իսկ քարանալու ախորժակ ընաւ  
շունիմ.. երաւ, ինչ չող է այսօր, քիչ է մնում, որ  
այրուիմ...

— Տէր արքայ, ճաշը պատրաստ է, թագուհին ձեզ է  
սպասում, ասաց մի պալատական, խոր գլուխ տալով  
թագաւորին։

— Երթանք, երթանք, մի կտոր հաց ուտենք, ասաց  
թագաւորը. Ահա քառասուն տարի է, որ պատառ չեմ  
դրել բերանս, բայց ուղիղն առեմ, չեմ էլ քաղցիկ։ Միայն  
ծարաւ շատ էր տանջում ինձ երբեմն, և աւելի ևս սաստ-  
կացաւ, երբ լսեցի Արեգի ձայնը. Երեկի իմ ծարաւին էլ  
Երկնքի կամքովն էր, նրանով պիտի գտնէի իմ փրկու-  
թիւնը.. Երթանք, երթանք մի կտոր հաց ուտենք...

Անդաս թագաւորը լաւ կշտացրեց թէ Արեգին և թէ  
նրա Բաղիկին. Թագաւորն Արեգին պահեց մինչև ըսան  
օր այդ քսան օրւան մէջ շատ թագաւորներից գեսպան-  
ներ եկան և չնորհաւսրեցին Անդասի և նրա քաղաքի վե-  
րակենդանութիւնը։ Նոյն քաղաքից հագարաւոր մարդիկ  
կային հեռաւոր երկիրներ գնացած, որոնք իրանց քաղա-  
քին պատահած պատուհասից վախենալով՝ չէին վերադառ-  
նում. այժմ եկան աւելի բազմացած թւով՝ որգսց և թո-  
ռանց տէրէր դարձած, մինչդեռ քաղաքի աճելութիւնը  
քարանալու պատճառով գալաքել էր։

Նորեկներն իմանալով՝ որ Արեգն է այն բարի հրեշ-  
տակը, որ յաղթել է չարին և կիանք տարածել շաբի  
մտհ ոփուած տեղը՝ նրան աստուածավայել պատիւներ

տրւին ճոխ խնջոյքներով։ Թագաւորն ինըը մի մեծ խընջոյք տրւաւ, ուր ներկայ էին հազարաւոր անձինք։ Խեցն էր բոլոր զուարծութիւններին լինթացքը տըսողը, ինըն էր առաջարկում կինաց թասերը։ Երբ Արեգի կենաց բաժակը ձեռքն առաւ, սկսեց խօսիլ թագաւորը և ասաց.

Երես միջնարարի, առաջարար ուած բացը ս. 18—

Խոյս սկսեց էինք երեկ, և ի՞նչ ենք այսօր,

Դու պատասխանիր, Անդաս թագաւոր.

Առաջ գմբ—Քար էինք երեկ, քար անշունչ, կանգուն,  
ինչ պատախոկ այսօր՝ մարդիկ, կենդանի, չարժուն..  
միայն մարդունչ հետ պատասխան, բայց նվ կըմբանէ,  
տասու ու իմ կըդգայ, թէ ի՞նչ սոսկալի բան է—  
Եարունակ տանջեն քառ-ուան տարի, առաջ  
ուրի և Փալից ձեռքում մի անգութ չարի..

Եւ ահա այդ խիստ, չար կազմնքներից, մի է  
Սնխորտակելի այդ զդիներից

Մեզ ազատում է մի շընազ Օդի, սարմ

Ամեն տեղ սփռում և կեանք, և հոգի..?

Ո՞վ էր այդ Քաջը, այդ առաքինին.

— Սհաւասիկ նա—Երեկ պատանին.

Սա է, որ սրբեց իմ սուսն ու լայը.

Խմենք Արեգի անգին կենացը...»

Թագաւորի այս առաջարկութեան վրայ հազարաւոր

ձախներ միասին «կեցցէ Երեկ» գոշելով թնդացրին ամ-

բողջ ապարանքը։ Աշըներն էլ՝ թագաւորի ակինարկելուն

էին սպասում, խմբովին հնչեցին յիսնադի քնարները և

երգեցին միաձայն։

Արի, բիւլրիւլ, ուրախացիր,  
Քո վարդն ահա բացւել է,  
Աերագարձիր, էլ մի վախիր,  
Քո թագուհին բացւել է:

Որեղն իջաւ Երկնքիցը,  
Ամենայն տեղ կեանք սփռեց,  
Քարերն ամեն հոգի առան,  
Քո կարմիր վարդն էլ բացւեց։

• Արի, բիւլրիւլ, ուրախացիր,  
Քո վարդուհին բացւել է.  
Արի, երգիր, էլ մի վախիր,  
Քո թագուհին բացւել է:

Որեղը մէկ Արեգակ է,  
Քաջ պատանու կերպ առած,  
Սա բարի է, առաքինի,  
Արկի պէս ողորմած։

Արի, բիւլրիւլ, ուրախացիր,  
Քո վարդուհին բացւել է.  
Արի, երգիր, էլ մի վախիր,  
Քո թագուհին բացւել է...

Աշըները գեռ երկար կըշարունակէին Արեգին զո-  
վասանել, եթէ Սրեդը՝ համեստութիւնից ստիպւած՝ շընդ-  
հատէր նրանց իր հետևեալ պատասխանող ճառով.

— Ես մի թոյլ էակ, չնչին արարած,  
Զդիահմ արդեօք ի՞նչ ունիմ արած,

Որ ինձ տալիս էք այսքան փառք, պատիւ,  
Սյոբան գովասանք, մաղթանք անհաշիւ.  
Ե՞նչ գտաւ արդեօք Երկինքն ինձանում,  
Ես այդ շգիտեմ և չեմ իմանում,  
Որ ցոյց է տալիս այսչափ սէք և գութ,  
Հարթում է առջևս ամեն խոչ ու խուժ.—  
Սոխիծն իմ առջև ըծնում է շան պէս,  
Վիշապը դառնում մի վախկոտ մողէս,  
Սղբիւր է բղիսում ապառաժ տեղում,  
Դարաւոր ճահիճն առաջիս ցամքում...  
Եթէ բոլորը, ինչ որ տիսել եմ,  
Այժմ մի առ մի ձեր առջև պատմեմ,  
Կրտեսնէք որ սա մի բախտ է միայն  
Եւ չնորհք Երկնքի միջամտութեան...  
Ուստի մենք Նըրան և միայն Նըրան  
Պիտի համարենք պաշտելու արժան,  
Նա վերացրեց չարի զօրութիւն,  
Նըրան պիտի տանք փառք և գոհութիւն...

Չընայած Արեգի համեստութեանը՝ քաղաքացիք  
Նրան զիւցազնց կարգը ձգեցին, որ երախտապարտ  
շըմնան Երկնքի առջև: Եւ ահա ինչպէս: Տեսան որ պա-  
ռատի սոսկալի արձանից վախենում են բոլոր երեխանե-  
րը և շատ մեծեր էլ, նրան տարան, ծովը նետեցին: Նա  
ընկաւ ուղղակի դժոխքի վրայ և իր ուժգին դարկովն  
ամբողջ դժոխքը իր միջի շար ոգիների անթիւ լեզէօննե-  
րովը մի հաղար մզոն էլ ցած զլորեց... Դրանից յետոյ  
հաւաքեցան քաղաքի բոլոր ճարտարապետներն ու նկա-  
րիչները, քաշեցին Արեգի պատկերը, Բաղիկի վրայ հե-

ծած: Նրա ձևով շինեցին մի ոսկեձոյլ արձան: Սյոդ ար-  
ձանը կանգնեցրին բաղաքի կենդրոնում եղած մեծ պար-  
տէզումը՝ որ զբօսավայր էք ամենի համար, մանաւանդ  
երեխայոց, որոնք այնուհետեւ միշտ նրա շորա կողմումն  
էին խաղում և վրան նայելով, զմայլում: Արեգը չըտե-  
սաւ իր արձանը, նա այդ ժամանակ արդէն գնացած էր:  
Նա երազումը տեսաւ, որ նունուֆարը վերջին չնշումն  
է, շտապեց վերադառնալ, որ գուցէ կարտդանայ օգնու-  
թիւն հասցնել:

5.

**Ն**ունուֆարը վերջին չնշումն է: Առաջ առ  
էլ ոչ ծաղրածուի կատակները, ոչ վեզիրի կիոջ  
հոգատարութիւնը, ոչ հօր աղաչանքն ու հառաչանքը չեն  
ազդում նրա վրայ:

Լեզու չունի, որ խօսի, ուժ չունի, որ ձեռքը շարժէ:

Ակնապիշ նայում է գէպի վեր, կարծես Երկնքիդը  
լինի սպասում իր փրկութիւնը, կամ ուզում լինի չուտով  
թոշիլ գէպի Երկինը:

Թագաւորը և բոլոր պալատականները՝ ձեռները խաչ  
արած, վիզները ծռած՝ նայում էին նունուֆարի երե-  
սին, և ախ ու ոհ բաշելով՝ խստովանում իրանց անզո-  
րութիւնը Սմենակարողի. կամքի առջև:

Այս աղեկտուր բոպէին մէկ էլ լսեց, որ Արեգը կէտ  
կել է:

Նունուֆարի աղախինն ամենից շնոր վազեց Արեգի  
մօտ և շտապեցրեց նրան, ասելով:

— ԵՇԱՄ արա, «ԵԼ տԵՄ», վԵՐԳԻՆ չՆՉՈՒՄՆ է, աՀՐԸ  
ՔԵԼ է մՆՈՒՄ...

— ԱՆԱ դալիս եմ, պատասխանեց ԱՐԵԳԸ. հԻմա  
«ԿՐՊԱՄ և կրտեսնեմ» քո ՆՈՒՆՈՒՓԱՐԻՆ...

ԼՈՒՌ հանգիսականների միջով լուս ու մունջ անցաւ  
ԱՐԵԳԸ, մօտեցաւ ՆՈՒՆՈՒՓԱՐԻ մահին, հանեց ՍԱՆՄԱ-  
ՆԱԿԱՆ զրի շիշը մի կաթիլ կաթեցրեց բամբակի վրա և  
քսեց ՆՈՒՆՈՒՓԱՐԻ մեռելատիպ շրթումներին:

ՆՈՒՆՈՒՓԱՐԻ աշքերը պարզեցան:

ՍՐԵԳԻՆ այդ նկատեց և մի քանի կաթիլ կաթեցրեց  
ուղղակի բերանի մէջ:

ՆՈՒՆՈՒՓԱՐԸ երկու ձեռքով ծածկեց երեսը...

Նա տեսաւ ԱՐԵԳԻՆ ե... ճանաչեց...

Նա մի նոր կեանը զգաց. կեանը աշխուժով լի, ե-  
րեակայութեամբ ճոխացած...

ԶԵՇԱՄ ծածկեց երեսը, որ երեակայութիւնն ամ-  
փոփէ. Ամփոփէ երեակայութիւնը, որ այդ բովէի երկ-  
նային զլարնութիւնն ու զմայլունքը լի-ու-լի վայելէ:

«ԱՐԵԳԸ եկել է», ասում է նա ինքն իրան, երեսը  
ծածկած երկու ձեռքով, իրեն երկու վահանով, որ ուրիշ  
տալաւրութիւնների տեղի շրտան: «ԱՐԵԳԸ եկել է»,  
կրկնում է ՆՈՒՆՈՒՓԱՐԸ, և ես առողջ եմ, բոլորովին ա-  
ռողջ, շատ առողջ: Ես զգում եմ, զգում եմ, որ շատ ա-  
ռողջ եմ, և... ԱՐԵԳԸ ել եկել է... Ես զգում եմ նրա  
ներկայութեան անմահական հոտը, Անմահական էր նրա  
տըւած դեղը: Հէնց ինքն էլ մի անմահ նոդի է: Ե՞նչպէս  
մեծացել է, ինչպէս առոյզացել, ի՞նչ նորածիլ բելսեր  
ունի, ի՞նչ գանգուր մօրուր... Բանամ երեսս, մէկ էլ

ՆՈՒՆՈՒՓԱՐԸ բաց արաւ երեսը և նայեց ԱՐԵԳԻ ե-  
րեսին այնպիսի հայեացըով, որ միայն մօր հայեացըն է  
լինում իր երեսին «հագա» կամ «ճիտա» ասելիս... և  
կրկին փակեց երեսը:

Այդ հայեացը, որի մէջ ամփոփւած էր կենդանու-  
թեան հրափայլ ոգին, ամենքը տեսան, և ամենքն էլ,  
կարծես, խօսք-մէկ արած, միաձայն քրքիջ բարձրացրին՝  
փառ-փառ ծիծաղելով: Այդ ծիծաղից անմասն շըմնաց և  
ինքը ՆՈՒՆՈՒՓԱՐԸ: Նա էլ ծիծաղեց, կարծես ուրիշների  
տեղիք տալուն էր սպասում, որ մի կուշտ ծիծաղի:

Եյս էլ որ տեսան մի վայրկեան առաջ սգաւոր հան-  
գիսականները, րուրովին միամտեցան, էլ ուշադրութիւն  
ըգարձրին ՆՈՒՆՈՒՓԱՐԻ վրայ, և սկսեցին փոխ առ փոխ  
զգւել ու համբուրել ԱՐԵԳԻՆ: Թագաւորն իր գիրին առաւ  
կանում երկու որդի էր գտել՝ մինը կորած տեղից, միւսը  
մեռած տեղից: Ամենիք աշքերից ուրախութեան և զմայլ-  
մունքի արտասուք հոսեց.

Հանգիսականների այս տեսակ իրարանցումից օգուտ  
քաղելով՝ ՆՈՒՆՈՒՓԱՐԸ ծտի պէս վեր թռաւ տեղիցը,  
փախաւ մտաւ մի այլ սենեակ, այնտեղ շուտով հագնեց,  
գուրեց թագուհու վայել զարդարանքներով և գուրս ե-  
կաւ հանգիսականների մէջ այնպէս ուրախ ու զըւարժ  
կաւ հանգիսականների մէջ այնպէս ուրախ ամենքը, բայց մանա-  
և այնպէս առողջ, որ հիացան ամենքը, բայց մանա-  
և այնպէս առողջ, որի համար մի բոլորովին նոր արև ծա-  
գեցաւ:

Եթէ ԱՐԵԳԸ մի վայրկենում վերակենդանացրեց ՆՈՒ-  
ՆՈՒՓԱՐԻՆ, հիմա էլ ՆՈՒՆՈՒՓԱՐԸ իր գեղեցկութեան աղ-

դեցութեամբ Արեգի այնպիսի երակները շարժեց, որոնց  
միջով կարծես մինչև նոյն բռպէն զեռ արիւն չէր խա-  
ղացած, Արեգը մի նոր կեանք զգաց իր մէջ, մի նոր  
զգացմունք անսահման հաճոյական, բայց ինքն իրան հա-  
շիւ տալ չըկարողանալով և միննոյն ժամանակ այդ իրան  
համար տարօրինակ զգացմունքը զսպել ուզենալով սկսեց  
խօսիլ խելքը թուցրածի պէս.

— Հիմա եմ զգում, որ եօ էլ ես չեմ... զգոյի  
Բայց թէ ես ով եմ, — այդ էլ չգիտեմ. զի՞մ  
Ինձ յափշտակեց աղջիկ Աղաւնին,  
Եւ տեղը զբաւ այժմեան Արեգին, մանաւուր  
Սնիրաւ աղջիկն իմ ուշը տարաւ, միջնարդ  
Արեգնազանիս լրճի մէջ առաւ,  
Իր քաղցր երգով ինձ քնացրեց  
Եւ իմ տեղը նա մի ուրիշ զրեց...

Հանգիսականները բերանաբաց նայում էին և ոչ  
մի բան չէին հասկանում Արեգի ասածներից.  
— Ափսոս տղայ, երիկ խելքը կորցրեց, ասում էին  
շատերը:

Գերջը նունուֆարը մօտեցաւ Արեգին և խզակի  
կերպով ասաց.

— Արեգ, իմ հոգեակ, ինչ է այդ, ինչ կայ,  
Գուցէ իմ տեսքով բեղ դիւր չի եւայ,  
Գու հանգիստ եղիր. ես կերթամ, կերթամ,  
Որ ինձ շտեսնես էլ ոչ մի անդամ...

Ես սիրում եմ քեզ, դիտէ Երկինքը,  
Բայց այդ չի ուզում գուցէ նա ինքը,  
Որ չի թոյլ տալիս քեզ ինձ ճանաչել,  
Եւ ինչպէս որ կամ, ինձ այսպէս տեսնել.  
Երթամ ուրիմն, իմ ոկ օրը լամ,  
Քանի որ էլ քեզ պիտի չերիամ...

— Ուր, ուր, սպասիր, ես քեզ չեմ թողնիլ,  
Սուանց քեզ մի օր՝ էլ ես չեմ ապրիլ.  
Թող երկինք զետինք իրար խառնըլին,  
Գու կըպատկանիս միայն Արեգին.  
Թող ամբողջ աշխարհ ապակն ու վրայ ըլի,  
Էլ քեզ ինձանից ոչ ոք չի խըլի:

Արարած աշխարհ ես պըտըտիցայ,  
Գեղեցիլ, սիրուն, շատերին տեսայ,  
Բայց քեզ պէս չքնաղ անհատ, աննման,  
Քեզ է ստեղծել Երկինքը միայն:

Գու իմն ես իմն ես, սիրուն նունուֆար,  
Իմ բոլոր կեանքս կըստամ քեզ համար,  
Ինչ սիրտը ուղի, ինչ որ կամենաս,  
Շարամայիր ինձ, իսկոյն կըստանաս:

Իմ ասածները գու չըհասկացար,  
Էնգուր ես կարծում, թէ ինձ դիւր չեկար.  
Ես այն չեմ, այն չեմ, ում որ տեսել ես,  
Նա գնաց, կորաւ երկութի պէս,

Ես էլ եմ Արեգ, բայց ոչ առաջին,  
Նրան զողացաւ աղջիկ աղաւնին ..

— Եթէ այդպէս է, ինձնից հեռացիր,  
Դու ինձ կեանք տրւիր, վարձըդ ստացիր:  
— Ես շեմ կեանք տրւել, ի՞նչ վարձ կամ ի՞նչ գին.  
Դու ինքդ ես իմ կեանքն, իմ սիրտն, իմ հոգին.  
— Ել ես կեանք չունիմ և պիտի մեռնիմ,  
Երբ չըկայ Արեղ, էլ ինչու ապրիմ...  
— Իզուր մի մեռնիլ, ես էլ եմ Արեղ...  
Միթէ ես չունիմ նըրա չափ արժէք...  
— Բայց դու ուրիշ ես, ինքրդ ես ասում...  
— Այդ ես ինքս էլ լաւ չեմ հասկանում...  
— Սպասեցէք, սպասեցէք, ես վերջ կըտամ ձեր վէ-  
ճին, ասաց թագաւորը: Արեղ, ասա ինձ, հոգիս դու հւմ  
որդին ես:

— Արման իշխանի որդին էի մի ժամանակ, բայց  
հիմա շըպիտեմ էլի նրա որդին եմ, թէ մի ուրիշի:  
— Քո այդ պատասխանն է ահա, որ մենք չենք հաս-  
կանում, բայց քեզ լաւ ենք ճանաչում, Դու մեր Արեղն  
ես, միենոյն զեղեցիկ Արեղը, միայն մօրուրդ է աւելա-  
ցել ու բեխերը...  
— Սպասիր, սպասիր, ինամի թագաւոր, մէջ ընկաւ

ծաղրածուն, Արեղ լիս, փեսադ եկել է, բայց ուրախու-  
թիւնից լիքն իրան կորցրել է, հիմա ման է գալիս՝ չի  
դժնում: Արեղ եղբայր, ել՝ ես ու դու մի պայման ա-  
նենք. ես դառնամ՝ «դու», իսկ դու դառ «ես», այնու-  
հետև նունուֆարը կըդառնայ «իմ», իսկ յիմարը՝ «քեզ».  
համաձայն ես, ասաց ծաղրածուն և սկսեց երգել.

Ա՛յս, ես յիմար եմ անշափ, բայց ոչ այս տղայի չափ.  
Ես սըրա տեղ որ վինիմ, ել չեմ տալի—«ես՝ ես չեմ»...  
Եարալլալի, շարալլալի,  
Հայդէ յիմար, պար արի...  
Մինչդեռ ծաղրածուն երգով ու պարով զըւարձաց-  
նում էր հանդիսականներին, ներս մտաւ Արմանը:  
Արեղն, իր հօրը տեսնելուն պէս, վազեց, գիրկին  
ընկաւ և մի քանի ուրախութեան բացականչութիւնից  
յիտոյ՝ փսփաց ականջումը.  
— Գիտես, հայրիկ, ես հիմա տղայ եմ, տղայ, իսկ  
և իսկ տղայ, ճշմարիտ տղայ, կարող ես երեակայել...  
— Ի հարկէ, տղայ ես, հոգիս, հապա ի՞նչ պէտք է  
լինէիր...  
— Բայց չէ որ, հայրիկ, բայց չէ որ... ախըլ...  
— Դու առաջ էլ տղայ էիր, հնգիս, բայց այդ չը-  
գիտէիր դու, նոր ես սկսել ճանաչել քեզ, առաջ անմեղ  
էիր ինչպէս հրեղէն, հիմա մարդ ես դառել հոգեգէն,  
բայց այդ վիսա չունի, հոգիս...  
— Օ... եթէ այդպէս է, ուրեմն ես՝ ես եմ եղել,  
վազեմ, նունուֆարին ասեմ...  
Արմանը մօտեցաւ թագաւորին և սկսեց շնչալ նրա  
ականջին բանի էութիւնը, իսկ Արեղը վազեց նունու-  
ֆարի մօտ:  
Երբոր Արեղը նորից մօտեցաւ նունուֆարին աւելի  
ուրախ ու զըւարթ դէմքով, նունուֆարը բռնից Արեղի  
ձեռքից մի այնպիսի քնիրուշ ժպիտով, որ Արեղը քեզ  
մնաց նորից թոցնէր խելքը.

— Եռւ մեր Սրեգնես, այնպէս չէ, ասաց Նունու-  
ֆարը:

— Ի հարկէ, հոգիս, հապա ով պէտք էլ լինիմ, պա-  
տասխանեց Սրեգը:

— Ուրիմն մենք էլ շենք բաժանելի միմեանցից: Եթէ  
զիտենաս, ի՞նչքան մաշւել եմ քո կարօտով... հիմա ե-  
կել ես, և յանկարծ ապում ես՝ «ես» ես չեմ. հապա ով  
ես, որ գու չես:

— Ո՛չ, ո՛չ, հիմա ես՝ ես եմ. յիմարն ինձանից խե-  
լօք է... Սրի չոքենք թագաւորի առջի, և նա օրհնէ մեղ...  
Բայց, սպասիր, հայրիկիս շըհարցրի, թէ ուր ին իմ  
քոյրեղը:

— Նրանք այստեղ են: Քո վնալուց յետոյ ես ձե-  
րոնց բերել տըւի, որ քո կարօտը նրանցից առնեմ: Ես  
արդէն ուղարկեցի խմաց տալու, հիմա կրգան ուր որ  
է...  
— Ի՞նչքան բախտաւոր եմ ես ուրիմն, որ այդքան  
բարի ես եղել գու... Ուրիմն գեռ շըշտապենք. զնանք  
մեր հագուստը փոխենք. հիմա միտքս ընկաւ. Անդաս  
թագաւորից ես քեզ համար էլ, ինձ համար էլ հարսա-  
նեկան հագուստ եմ բերել: Նա ընծայեց այդ հագուստ-  
ները և խընդրեց, որ անպատճառ այդ ունենանք հազ-  
ներիս մեր հարսանիքին, արին, իրասելով, ինքը հոգւով  
ներկայ կըլինի: Ես չէի ընդունում, որովհետի այս րա-  
պէի քաղցրութիւնն այն ժամանակը երեակայել չէի կա-  
րող: Եատ բաներ եմ տիսել, յետոյ կրպատմեմ քեզ: Զեմ  
տիսել միայն քեզ պէս մի շընադ էակ... ի՞նչքան գնե-  
ցիկ ես դու, Նունիկ...  
Սյադէս խօսելով, ձեռք-ձեռքի տըւած, գուրս եկան

Սրեգն ու Նունուֆարը, բայց երկար սպասեցնել չըտւին:

Մի քանի բովէից յետոյ տեսարանը մի կախարդա-  
կան ասեմ թէ երկնային կերպարանը ստացաւ:

Պալատի ընդարձակ զահիճը լցւեցան թէ տղամար-  
դիկ և թէ կանայք, շրեղ հագուստներով զարդարւած:  
Այստեղ էին և Սրեգի քոյրեղը:

Երբոր Սրեգն ու Նունուֆարը ներս մտան Անդասի  
ընծայած հագուստովը զարդարւած, անթիւ անզին քա-  
րերի ճառագայթները, ծիրանի ծալից ծագող արեգակի  
պէս, գոյնզգոյն լուսաւորեցին ամբողջ զահիճը:  
Չոքեցին թագաւորի առջի, որ օրհնէ իրանց:

Թագաւորը մի քանի բովէ շըկարաց խօսիկ, հազիւ  
էր կարողանում բռնել ուրախութեան արտասուրը: Վեր-  
ջապէս սկսեց օրհնել մեր նարանշաններին, ասելով.

— Ո՛վ երկինք,

Ես մի հոգեգէն,

Մի թոյլ արարած,

Որ շարն ու բարին

Գեռ լաւ չգիտէ,

Իմ սրտին նայիր,

Եւ ո՛չ իմ լեզուին,

Եւ քո խոլ ձեռքով

Ինչ որ բարի է,

Գու այն տուր սրանց:

Ի՞նչ ոմիս բարի

Քո ծոցում պահած,

Որ մինչև այսօր  
 Ոչ մի հողեղին  
 Քեռ չի պտացած,  
 Դու այն տուր սրանց։ վասրան  
 Դու մինչ այսօր էլ  
 Եատ բան ես տըւել—  
 Երկ վառվուն,  
 Սատղեր շողշաղուն,  
 Սյեր քաղցրաշունչ,  
 Զեփիւռ անշըռունջ,  
 Անձրի յորդառատ,  
 Ցօղ մարդարտահատ,  
 Ազրիւրք զովարար.  
 Վտակներ վարար,  
 Գոյն գոյն ծաղիկներ,  
 Ծառեր մրգարեր,  
 Անտառներ մարմանդ,  
 Դաշտեր արգաւանդ,  
 Լեռներ հովտառուն,  
 Գետեր դալրուն,  
 Լճակներ լճիտ,  
 Սար, ձոր և հովիտ...  
 Այս ամեն բարիք,  
 Ավ պայծառ երկինք,  
 Թոյլ տուր վայելեն,  
 Քեզ վառաբանեն...

Թագաւորն իր օրհնութիւնն աւարտած շաւարտած,  
 մի նոր լուսսվ լուսաւորւեց գահլիճը. Մի ծիածան կապ-

ւեց, ծիածան անտես, աննման, հրաշալի այնքան, որ ամ-  
 պերում կապւող աղեղը նրա մօտ մի մուայլ ամպ կարելի  
 էր համարել... Ի՞նչ լեզու կարող է պատմել... Ի՞նչ գրիշ  
 կարող է գրել, կամ ի՞նչ վրձին կարող է նկարել...

Սմենքն էլ նրան էին նայում և տեսնում էին, թէ  
 ինչպէս էին կազմւում նրա գոյները հետզհետէ. կարծես  
 աներեսոյթ ոգիք՝ արագ-արագ վազելով՝ երկնային մատ-  
 ներով մի նոր ծիածան լինէին հինում, և երկնքումը լի-  
 նին կապելիս Որեզի ու նունուֆարի հարսանելան Կա-  
 նաշ-Կարմիրը: Յիրաւի, այդ Կանաշ-Կարմիրը թւում էր,  
 թէ դահլիճի առաստաղից շատ և շատ բարձր է և շատ  
 հեռու:

Եւ ահա, երբ ծիածանն ամբողջապէս պատրաստ էր,  
 նրա լիրայով, իբրև մի լուսեզէն սանդուխրով, ցած իջան  
 մի խումբ երկնային թագուհիք՝ աստղերի ճառագայթնե-  
 րից ու ձիւնափայլ ամպերից զործած հագուստով մի-մի  
 րեգակ... Բայց ի՞նչ արեգակ... Եթէ ցերեկ լինէր՝ և  
 արեգակը նրանց տեսնէր, ամպեղին մի քօղ կըրացէր ե-  
 րեսին, որ տեղի տար նրանց լոյսին...

Բոլոր երկնային օրիորդները, որոնք թըւով մինչև  
 ինը հոգի էին, երկ-երկու պսակաձև վնշեր ունէին ձեռ-  
 ներին, որը ցողից քաղած, որը ծաղիկների գոյնից ու  
 հօտից վնշած, որը վճիտ արգիւրների բիւրեղացած ճո-  
 հարներից հաւաքած, որը քաղցրաշունչ զեփիւռից ու զո-  
 վարար հովերից հիւսած, որն արեի շամանդաղի մէջ ե-  
 ղած գոյնզգոյն հիւլիներից կազմած... մի խօսքով լուսե-  
 զէն մատներով բնութեան բոլոր դարդերի բուն ոգին էին  
 քաղել ու վնշել. Այդ վնշերից անմահական բուրմունքով  
 լցւեց բոլոր դահլիճը:

Ամենից առաջ մօտեցան Աղբիւրը, Յօղիկը և Ծաղկիկը և իրանց պատկները տալով Արեգին ու Նունուֆարին՝ ասացին.

Ա Զ Բ Ի Ի Ռ Ի Կ

Ես կարկաջունն եմ Աղբիւրիկ,  
Եկել եմ ձեզ աչքալուսիկ,  
Բերել եմ ձեզ բիւրեղահիւս  
Ականակիտ, վճիտ վնջիկ:

Ց Օ Ղ Ի Կ

Ես գոհարիկն եմ բայսերի,  
Ես մարդրիտն եմ հովիտների,  
Ահա իմ փունջ ցօղից քաղած  
Հաղարաւոր կանաչների:

Ժ Ա Զ Կ Ի Ի Կ

Ես ծաղկիկն եմ մշտադալլար,  
Ես անթառամն եմ բեղմարար,  
Բոլոր ծաղկանց զոյնն ու հոտը  
Ահա բերել եմ ձեզ համար.

Այսպէս մօտեցան և միւսները, և մի-միւրան ասելով՝ իրանց պատկները նըւիրեցին Արեգին ու Նունուֆարին...

Այս տեսարանը մի տիրութիւն և թմրութիւն բերաւ հանդիսականների վրայ: Եատերը բոլորովին վերացան ապշութիւնից: Ամենից շատ տիրեցան աղջիերը: Նրանց գեղեցկութիւնն ազօտացաւ, թխացաւ ու մգացաւ հրեղինների գեղեցկութեան մօտ: Երիտասարդները դարձան մի տեսակ ապուշ վայրենիք, նրանց վստահութիւնը բոլորովին անհետացաւ...

Միայն Արեգն էր ուրախ, միայն նա էր ազատ այդ ընդհանուր ապշութիւնից: Այս հոգեկան թմրութիւնից հանդիսականներին սթափելու համար՝ Երեզը դարձաւ լուսեղին հիւրերին և ասաց.

— Ու երկնային թագուհիր, դուք ձեր չնորհարեր այցելութիւնովն ինձ չափազանց ուրախացրիք: Բայց նայեցէք, այս ինչ ապշութիւն է, այս ինչ տիրութիւն, որի մէջ ընկլմել են ամենքը: Մի զարմանաք: Այսպէս ենք մենք տկար հողեղիններս ինչ որ չափազանց բարիէ, չափազանց գեղեցիկ, նոյնը վայելելու կարողութիւնը շունիք մենք մահկանացուներս: Ճշմարիտ բարւոյ և գեղեցկի ճաշակից դուրիկ արարածներ ենք մենք: Ներշնչեցէք մեր սրտերի մէջ վսեմ զզացմոնք և բարձրագոյն կարողութիւն, որ ձեր երկնային չնորհարերութիւնը լիապէս վայելել կարողանար: Խնդրում եմ ուրախանաք, խնդրաք և զըւարձանաք իմ հարսանեաց հանդիսին և ուրախացնեք ամենքին երկնային ուրախութեամբ.

Բանից երևաց, որ մեր լուսեղին օբիորդները, թէև մարմնացած՝ բայց չափազանց համեստ, չափազանց ամօթխած և երկիւղած են եղել. պէտք է եղել որ նրանց ստիգմէն: Արեգի խօսքերից խրախուտելով առաջ անցաւ ծաղկիկը և իրոն կարգադրիչ՝ մի պար սարքեց: Ծիա-

ծանի կամարը՝ իբրև մի երկնային բխրապի քնար, թռութուացրեց իր հաղարերանդ թելերը և այնպիսի եղանակներ հնչեց, որ թէ հովեգինների և թէ նոյն իսկ հրեղինների մէջ ձգեց հրաբորբոր մի աշխոյժ։ Ամեն ոք ոկտաւ թէ առնել թռչիլ շափազանց ուրախութիւնից։ Ծերերն անգամ թռչկոտում էին և զահինների դանդաղկոտութեան վրայ ծիծաղում։ Հետզհետէ այնքան տաքացան, որ էլ զբւարճութիւն շրմնաց, որ շանին։ Յօդիկն ու Աղբիւրիկն այնքան զըւաբճացրին, որ էլ ոչ ոքի մէջ ուժ շրմնաց շատ ծիծաղելուց։ Մերթ Արեգի մօրուքիցն էին բռնում, մերթ նունուֆարի թշերը կսմտում, և զանգան հաճոյական բաներ փափսում նրանց ականջին։

Արեգը Յօդիկի հետ պարելի՛ մի խոր հայեացը ձգեց նրա երեսին և փափսաց ականջին։

— Ով համեստափայլ օրիորդ, ես կարծես ճանաշում եմ քեզ... այն, ճանաշս ես գալիս, բայց չեմ վստահանում ասել, վախենում եմ, թէ մի գուցէ սխալած լինիմ։

Սխալած չես, Արեգ, պատասխանեց Յօդիկը, ես նա ինքն եմ։

— Աղաւնի աղջիկը։

— Այն։ Սրանք էլ բոլորն իմ քոյրերս են..

— Օ՛.. դու իմ Աստուածուհին ես.. դու ինձ նորից ստեղծեցիր..

— Ոչ, Արեգ։ Ես գիտէի միայն, որ դու ոչինչ չըգիտես քո մասին։ Այդ իմ մօրը՝ Բարենանի կամքովն էր եղած։ Նա ուրիշ հնար չունէր այն շար պառաւին վերացիել աշխարհից։ Պէտք էր քեզ պէս մի անմեղ և

արդար անձն, որ մինչև անգամ չիմանար իր ինչ լինելը և աւելի աղջիկ, բան տղայ համարէր։ Դու երբոր ինձ մօտ տեսար քո կերպարանքը, տեսար որ տղայ ես, այսուամենայնիւ դա քեզ համար մի խաղ էր որ ես խտղացի, ինչպէս որ դու իմ թեերս վերցնելով՝ ուզեցար մի խաղ խաղալ։ Միայն այս երեկոյեան զգացիր, որ տղամարդ ես։ Դու որ մեզադրում էիր ինձ, մենք թաքուն նայում էինք քեզ վրայ և ծիծաղում..

Յօդիկի այս ակնարկութիւնից ամօթի զգացմունքը առաջին անգամ զգաց Արեգը, բայց այնքան սաստիկ էր, որ նա կարմրեց վարդի պէս և ուզեց խօսակցութեան առարկան ուրիշ բանի վրայ դարձնել, յանկարծ միս կողմից մի այնպիսի ծիծաղ բարձրացաւ, որ ամենըն էլ այն կողմը դարձրին իրանց ուշագրութիւնը։

— Զանագանն ու Զարմանագանը պարում էին՝ մէկը վլոգիրի տղայի հետ, միւսը սպարապետի։ Ծաղկիկը լսել էր նրանց փափսոցը, նկատել էր, որ նրանք վաղուց աշբարել են միմեանց և այժմ էլ պսակւելու ցանկութիւն ունին, բայց ամաշում են ասելու։

— Նոր սէր, նոր ուրախութիւն, գոչեց Ծաղկիկը մի բարձրածայն ծիծաղով և նորահասներին քաշ տալով՝ տարաւ թաղաւորի մօտ և ասաց. «Մի պսակով ինչ պէտք է լինի, երեքը միասին կատարեցէք»։

Թագաւորն ու Արմանը նրանց էլ օրհնեցին և ոկրս. ևց պսակների հանդէսը։ Յօդիկը դարձաւ իբր պսակագիր նունուֆարի, Ծաղկիկը՝ Զանագանի, իսկ Աղբիւրիկը՝ Զարմանագանի։ Պսակի օրհնութիւնը կատարեց թագաւորը ծիածանի կամարի տակ, որ այդ փառաւոր հանդիսին աւելի ևս շրեղութիւն էր տալիս։ Թագաւորն էլ

իր թագը պիտու Արեգի զլսին, որով պատկեցան լրան և  
թագաւոր միահպամայն:

Գրտնից յետոյ հրեղէն օրիորդները շնորհաւորեցին  
նորապակներին և պատրաստեցին երթալու: Հաղաք  
տեսակ քաղցրեղէններ և մեղքաջրեր մօտ բերին, բայց  
հրեղէնը նրանց համբ չառան: Նրանք ուրիշ խմելիքներ  
տնելին իրանց հետ բերած, նրանից խմեցին և խմեցրին  
նաև նորապակներին, որոնք ակամայ խմեցին, առանց  
նրա համն զգալու, բացի Արեգից, որին միայն էք տած  
նրա երկնային ճաշակն առնելու չնորհը: Այրջը մի շըր-  
ջան կազմեցին երկնայինը և, մինչդեռ հրեղէնք վերանում  
էին ծիածանի սանդուխորով ասելով՝ «Ինացէք բարեմւ,  
բարեմւ...» Տողեղէնքն էլ նրանց բարի ճանապարհ էին  
մաղթում երգելով:

Գնացէք բարեաւ, սիրուն աղջիկներ,  
Դուք մեր գաշտերի անմահ Ողիներ...  
Այս ի՞նչ չնորհը էք, ինչքան մեծ բարիք,  
Որ դուք մարմնացած մեղ երեցիք...  
Այս, երանի թէ միշտ մեղ մօտ մնար,  
Որ ձեր տեսութեան կարօտը չըզգանք,  
Գնացէք բարեաւ, բարեաւ, բարեաւ...

Հրեղէն աղջիկը վերացան թէ չէ, մշտեղ եկաւ  
ծագրածուն և սկսեց մի նոր զըւարձութիւն:  
— Խնամի թագաւոր, չէն կենայ բո հօր օջապը,  
կերանք խմեցինք, լիացանք, ասաց ծագրածուն և սկսեց  
երգել:

Աշխ թագաւոր, թագաւոր, նորից պատկան ունի  
Ինչնի ասեմ չնորհաւոր, նորից պատկան ունի պատկան  
Ոչ հաց ունիս, ոչ գինի,  
Էսպէս հարսնիք կըլինի...  
Եարալլալի, շարալլալի,  
Էսպէս հարսնիք կըլինի...»

— Երաւ, միթէ հաց չըպիտի ուտենք, ասաց թա-  
գաւորը: Մենք ամենքս էլ ամեն բան մոռացել ենք, ո-  
րովհետև խելքներս կորցրել ենք, բացի յիմարից, որ  
խելք չի ունեցել կորցնելու:

— Դու սխալւում ես, թագաւոր, պատասխանեց յի-  
մարը, — ես տեսնելով որ գաւք իմ հացը կտրել էք, գնացի  
մի ճոխ սեղան պատրաստել տփ, որ քաղցած չըմնամ:  
Սյո տսելով ծաղրածուն վաղեց, բաց արաւ սեղանատան  
դոները, ուր, յիբարի, ճոխ ընթրիք կար պատրաստած:  
Հիւրերն սկսեցին թագաւորի ետենց ջուխտ մտնել  
սեղանատուն: Ծաղրածուն տեսնելով, որ ինքը մենակ  
պիտի մնայ, վաղեց մեղ ծանօթ վեղիրի կնոջ մօտ և  
զլուխ վէք բերելով երգեց:

Ով խելք ունի, սէր չունի,  
Ով սէր ունի, տէր չունի,  
Խեղճն ամենից յիմարն է,  
Որ ոչ մի ընկեր չունի:  
Արի, տիկին, ես ու դու  
Շիտակ խօսք տանք մէկ մէկս,  
Թէ «դու իմն ես, ես՝ ըոնը»  
Համաձայն նս, ձեռքըդ տնր..,

Սասց ծաղրածուն և տիկնոջ ձեռքից բանելով միւսոների հետ մտաւ սեղանապուն...

Միւս առաւօտուն սկսւեց հարսանիքի տօնախմբութիւնը քաղաքացոց ու գիւղացոց համար և տեսց մինչհքառասուն օր և քառասուն գիշեր։ Ամեն մէկ օրը մի բոպէի պէս էր անցնում, այսքան զրւարձալի էին, ինչ խաղեր, ինչ ծաղրածութիւններ, մրցութիւններ և հազար ու մի տեսակ օյխններ...

Կերուխումին ընաւ հաշիւ շըկար։ Տասը հազար միայն եզ ու կով մորթեցին, քսան հազար ոչխար, թողվայրի կենդանիները—եղջերունները, եղինիները, վարազները, թող և թռչունները թէ տանու և թէ վայրենի։ Քառասուն հազար սոմար միայն բրինձ գնաց փլաւի համար, ինչքան եղ կերթար նրան, ինչքան շամիչ... յիսուն հազար կարս միայն գինի խմելց, շըհաշւած միւս քաղցրահամ և դառնահիմ խմիչքները...

Քառասուն օրից յետոյ Սրեգը մի թեթև ճանապարհորդութիւն արաւ Նունուֆարի հետ Վանայ ծովի վրայ։ Երբոր ծովի ամենախոր տեղն էին հասել, Սրեգը հանեց չար սլառաւի կախարդական դաւազանները, որոնք անյայտ մետաղից էին, դժոխքի կրակով միւտած, և ասաց

Ո՞վ գաւազաններ, գնացէք անդաւնդ,  
Որ էլ չերեաք աշխարհիս վրայ,  
Իշխանութիւնը չար սգինների  
Թողէք մեղանից խապառ վերանայ։  
Ո՞վ գաւազաններ, գնացէք անդաւնդ,  
Որ ոչ մի մարդու էլ չիշացնէք։

Կորէք յաւիտեան որէլ ոչ ոքի  
Սգռաւ չըինէք կտմ քարացընէք։  
Թող թագաւորէ բնութեան կարդը,  
Էլ այսուհետե նա չխնդաբրի։

Թող միայն Երկինքն իշխէ ամեն տեղ,  
Սմին արարած նըրան խոնարհի։

Այս ասելուց յետոյ գաւազանները նետեց ծովի խորքը և չար սգինների ու նրանց արբանեակների իշխանութիւնն ու գորութիւնը վերացրեց աշխարհից։  
Ահա այս ժամանակն էր, որ երկնքից իշաւ

Ե Ր Ե Ք Դ Խ Ն Զ Ո Շ

Սրեգի ձայնը Երկինքը լսեց  
Եւ խկոյն Երեր խնձոր վայր գցեց  
Մէկը կանաչ էր այդ խնձորներից,  
Կարծես նոր քաղած գարնան ոստերից,  
Երկրորդը կարմիր՝ վարդի հանգունակ,  
Երրորդն սպիտակ՝ ձիւնի նմանակ։  
Նունուֆարն ասաց. Արեգ ինչ կասես,  
Այս խնձորները ինչու են պէսպէս։  
—Ես էլ չըգիտեմ, ճշմարիտն ասած,

Գուցէ մեր կեանքն է ճիշտ օրինակւած.  
Տես, սա կանաչ է, իբր խակ, մանուկ,  
Խոկ այս՝ սպիտակ, ինչպէս մի ծերուկ.  
Ամենից սիրուն կարմիրն է միայն,  
Դա է նշանը մեր հասունութեան։  
—Եեր այդ կարմիրը հենց հիմա կտրենք,  
Եւ այստեղ հեթ միասին ուտենք..

Նունու Փարին ուղեց,  
Արեգն էլ կտրեց,  
Կարմիր խնձորը միասին կերպն,  
Եւ իբանց սրտի փափազին հասան.

Զեզ էլ կըցանկամ, սիրուն պատանիք,  
Որ մուրազներիդ նրանց պէս հասնիք.  
Կրիննդրեմ միայն որ ինձ էլ ներէք,  
Եթէ պատմածս ձանձրալի գտնէք.  
Զեր սիրոյ համար ես աշխատեցի,  
Պատմեցի այնքան, ինչքան կարացի.  
Կարծելով՝ որ գուք սիրով կըկարդաք,  
Եւ խեղճ շայիրիս ողորմի կըտաք...

Յ Ա Ն Կ		
1.	Ժիծոնակ.	Ղ. Ա.
2.	Մաղթանք մանկական.	Ղ. Ա.
3.	Գիշնազ տատի թռոները.	Ղ. Ա.
4.	Մանկական խաղ.	Մ. Մամիկոնեան.
5.	Վիճակի երգեր. (ժողովրդական)	Ա. Աղասյան
6.	Տաւարածի Շաշը.	Ղ. Ա.
7.	Հովհաննելինը.	Ղ. Ա.
8.	Զբաղացպանի ննջարանը.	Ղ. Ա.
9.	Պարզամիտ հովիր.	Ղ. Ա.
10.	Չորս եղանակ.	Մ. Մամիկոնեան.
11.	Երկրագործ. Կ.	Մելիք-Շահնազարեան
12.	Հատիկ.	Ծ. Յովհաննիսեան.
13.	Ամպեր.	Կ. Մ. Ծ.
14.	Եղիսյի հանաքը.	Ղ. Ա.
15.	Հնձուղներ.	Ղ. Ա.
16.	Ոսկի ձկնիկ.	Ղ. Ա. (Պուշկինից փոխադրած)
17.	Սոխակներ.	Ղ. Ա.
18.	Թռչուն. Բարկաս («Աղբիրից»)	
19.	Դժար ընտրութիւն.	Կ. Մ. Ծ.
20.	Երկու քոյր. Գամատ—Քաթիպա	



- |     |  |   |   |    |
|-----|--|---|---|----|
| 21. | Հնարագէտ ջուլհակը. Դ. Ա.               | . | . | 39 |
| 22. | Քեօրողլին ջրաղացպան. Դ. Ա.             | : | . | 46 |
| 23. | Հաւունի թուրք. Գ. Աստուածատրեանց       | . | . | 51 |
| 24. | Սարդն ու շերամը. Դ. Ա. (փոխադրութիւն)  | . | . | 59 |
| 25. | Արջը եւ Մեղուն Կ. Մ. Շ.                | . | . | 60 |
| 26. | Աղէս եւ Աղաւնի. Դ. Ա. (փոխադրութիւն)   | . | . | —  |
| 27. | Գայլերի ծագումը Ա. Մենրաբեան (փոփոխած) | . | . | 62 |
| 28. | Լուսնահաշ. Դ. Ա.                       | . | . | 63 |
| 29. | Գայլ եւ Սկիո. Դ. Ա. (փոխադրութիւն).    | . | . | —  |
| 30. | Գառն ու զայլը. Դ. Ա. (փոխադրութիւն).   | . | . | 64 |
| 31. | Բազէն եւ Աղաւնին. Նժղեն (Փուկովսկոց)   | . | . | 66 |
| 32. | Անմիտ եզներ. Քամալեան Ա. (փոփոխած)     | . | . | 67 |
| 33. | Երկու ընկեր. Խ. Աքովեան.               | . | . | 71 |
| 34. | ծարերն ու կացինը. Խ. Արովեան.          | . | . | —  |
| 35. | Ցախաւել. Դ. Ա.                         | . | . | 72 |

*S u b l i n g.*

Արեգնազան կամ Կախարդական Աշխարհ. Դ. Ա. 79



С 300

Աւտոմատ Մալբենի Լեզուի, տ. տարի 25 կ.

» » թ. տարի 30 կ.

» » գ. տարի 55 կ.



Ա. Տ.

ՏՎԿ 10

Գիրիկ' Վ. Կենտրալ գրահանձնական առևտություն,  
Վ. Թիֆլիս.



7741